Grant Thornton

# Համախմբված ֆինանսական հաշվետվություններ և անկախ աուդիտորի եզրակացություն

## «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերություն

31 դեկտեմբերի 2014թ.

# Բովանդակություն

| | Էջ |
|---|---|
| Անկախ աուդիտորի եզրակացություն | 1 |
| Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն | 3 |
| Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն | 4 |
| Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն | 5 |
| Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն | 6 |
| Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ | 8 |

# Անկախ աուդիտորի եզրակացություն

**Գրանթ Թորնթոն ՓԲԸ**
ՀՀ, ք. Երեւան 0012
Վաղարշյան 8/1

Հ. + 374 10 260 964
Ֆ.+ 374 10 260 961

**Grant Thornton CJSC**
8/1 Vagharshyan Str.
0012 Yerevan, Armenia

T + 374 10 260 964
F + 374 10 260 961

www.granttornton.am

«ԱԿԲԱ- ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերին և խորհրդին.

Մեր կողմից իրականացվել է «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության և իր դուստր ընկերությունների (այսուհետև միասին՝ «Խումբ») կից ներկայացված համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիրը և այլ ծանոթագրություններ:

*Ղեկավարության պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար*

Խմբի ղեկավարությունը պատասխանատու է Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան համախմբված ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել համախմբված ֆինանսական հաշվետվություններ, որոնք ազատ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

*Աուդիտորի պատասխանատվությունը*

Մենք պատասխանատու ենք աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան մեր կողմից իրականացված աուդիտի հիման վրա նշված համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր արտահայտած կարծիքի համար: Այդ ստանդարտներով պահանջվում է աուդիտը պլանավորել և անցկացնել՝ համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ ողջամիտ երաշխիքներ ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են համախմբված ֆինանսական հաշվետվություններում ու համապատասխան ծանոթագրություններում արտացոլված տվյալները հիմնավորող փաստերի ձեռքբերման նպատակով մշակված ընթացակարգեր, որոնց ընտրությունը կախված է խարդախությունների և սխալների հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվություններում էական խեղաթյուրումների ռիսկերի առկայության վերաբերյալ աուդիտորական գնահատումներից: Ռիսկերի գնահատումները կատարելիս՝ աուդիտորը մշակում է համապատասխան ընթացակարգեր համախմբված ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության գնահատման, այլ ոչ թե ընկերության ողջ ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք կազմելու համար: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների և ղեկավարության կողմից կատարված գնահատումների, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ համապատասխան աուդիտորական ապացույցներ մեր կարծիքն արտահայտելու համար:

*Կարծիք*

Մեր կարծիքով համախմբված ֆինանսական հաշվետվությունները տալիս են «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության և դուստր ընկերությունների՝ 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների և դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների:

Գագիկ Գյուլբուդաղյան

Տնօրեն/բաժնետեր

Վահագն Փայան

Աուդիտոր

Գրանթ Թորնթոն ՓԲԸ

25 մարտ 2015թ.

ք. Երևան

# Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն

| Հազար ՀՀ դրամ | Ծանոթ. | 2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար | 2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար |
|---|---|---|---|
| Տոկոսային և նմանատիպ եկամուտներ | 6 | **30,869,142** | 28,775,273 |
| Տոկոսային և նմանատիպ ծախսեր | 6 | **(13,719,166)** | (13,204,575) |
| **Զուտ տոկոսային եկամուտներ** | | **17,149,976** | 15,570,698 |
| Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ | 7 | **2,903,945** | 2,714,085 |
| Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր | 7 | **(1,092,127)** | (1,044,974) |
| **Զուտ կոմիսիոն և այլ եկամուտներ** | | **1,811,818** | 1,669,111 |
| Զուտ առևտրային եկամուտ | 8 | **710,616** | 1,249,150 |
| Վաճառքի համար մատչելի ներդրումներից զուտ վնաս | | **(1,186)** | - |
| Այլ եկամուտներ | 9 | **2,999,376** | 1,165,844 |
| Ակտիվների հնարավոր կորուստների արժեզրկման ծախս | 10 | **(10,803,385)** | (1,471,828) |
| Անձնակազմի գծով ծախսեր | 11 | **(5,905,326)** | (6,536,189) |
| Հիմնական միջոցների մաշվածություն | 20 | **(1,455,220)** | (1,321,684) |
| Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա | 21 | **(228,139)** | (224,604) |
| Այլ ծախսեր | 12 | **(3,823,404)** | (3,510,146) |
| **Գործառնական շահույթ** | | **455,126** | 6,590,352 |
| Ասոցիացված ընկերությունների գործունեությունից վնաս | 19 | **(108,457)** | (7,515) |
| **Շահույթ մինչև հարկում** | | **346,669** | 6,582,837 |
| Շահութահարկի գծով ծախս | 13 | **(40,845)** | (1,583,751) |
| **Տարվա շահույթ** | | **305,824** | 4,999,086 |
| **Այլ համապարփակ ֆինանսական արդյունք** | | | |
| ***Հոդվածներ, որոնք հետագայում վերադասակարգվելու են շահույթում կամ վնասում*** | | | |
| Ասոցիացված ընկերությունների գործունեությունից չվաստակված զուտ օգուտ | | **927** | - |
| Վաճառքի համար մատչելի ներդրումների իրական արժեքի փոփոխությունից չվաստակված զուտ օգուտ/(վնաս) | | **(205,276)** | 361,212 |
| Վաճառքի համար մատչելի ներդրումների իրացումից շահույթին կամ վնասին փոխանցված զուտ վնաս | | **1,143** | - |
| Վերադասակարգվող հոդվածներին վերաբերող շահութահարկ | | **40,642** | (72,242) |
| **Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկումից հետո** | | **(162,564)** | 288,970 |
| **Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք** | | **143,260** | 5,288,056 |

**Տարվա շահույթ**

| | | |
|---|---|---|
| Մայր կազմակերպության բաժնեմաս | **248,391** | 4,849,661 |
| Չվերահսկվող բաժնեմաս | **57,433** | 149,425 |

**Տարվա համապարփակ ֆինանսական արդյունք**

| | | |
|---|---|---|
| Մայր կազմակերպության բաժնեմաս | **85,827** | 5,138,631 |
| Չվերահսկվող բաժնեմաս | **57,433** | 149,425 |

8-ից 70 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

# Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն

| Հազար ՀՀ դրամ | Ծանոթ. | 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|---|
| ԱԿՏԻՎՆԵՐ | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 14 | **64,569,052** | 62,787,882 |
| Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ | 15 | **12,984,066** | 9,670,431 |
| Ածանցյալ ֆինանսական ակտիվներ | 16 | **149,303** | - |
| Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ | 17 | **184,346,991** | 169,282,479 |
| Վաճառքի համար մատչելի ներդրումներ | 18 | **1,954,062** | 7,239,048 |
| Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր | 27 | **7,253,389** | - |
| Ներդրում ասոցիացված ընկերությունում | 19 | **276,955** | 384,485 |
| Հիմնական միջոցներ | 20 | **15,162,675** | 15,393,220 |
| Գուդվիլ և ոչ նյութական ակտիվներ | 21 | **568,098** | 672,725 |
| Կանխավճարներ շահութահարկի գծով | | **1,179,339** | - |
| Այլ ակտիվներ | 22 | **2,655,292** | 2,252,751 |
| Ընդամենը՝ ակտիվներ | | **291,099,222** | 267,683,021 |
| ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ | | | |
| Պարտավորություններ | | | |
| Պարտավորություններ ՀՀ ԿԲ նկատմամբ | 23 | **10,283,119** | 10,017,296 |
| Պարտավորություններ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ | 24 | **102,522,534** | 92,909,803 |
| Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ | 25 | **121,950,944** | 107,880,384 |
| Ածանցյալ ֆինանսական պարտավորություն | 16 | - | 22,231 |
| Ընթացիկ հարկի գծով պարտավորություն | | - | 540,276 |
| Հետաձգված հարկային պարտավորություն | 13 | **680,098** | 749,968 |
| Այլ պարտավորություններ | 26 | **1,369,656** | 1,413,452 |
| Ընդամենը՝ պարտավորություններ | | **236,806,351** | 213,533,410 |
| Սեփական կապիտալ | | | |
| Բաժնետիրական կապիտալ | 28 | **30,000,000** | 30,000,000 |
| Այլ պահուստներ | | **4,465,500** | 4,666,807 |
| Կուտակված շահույթ | | **18,279,067** | 17,991,933 |
| Մայր կազմակերպությանը պատկանող կապիտալ | | **52,744,567** | 52,658,740 |
| Չվերահսկվող բաժնեմաս | | **1,548,304** | 1,490,871 |
| Ընդամենը՝ սեփական կապիտալ | | **54,292,871** | 54,149,611 |
| Ընդամենը՝ պարտավորություններ և սեփական կապիտալ | | **291,099,222** | 267,683,021 |

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները՝ ներկայացված 3-ից 70 էջերում, ստորագրվել են 2015թ. մարտի 25-ին Բանկի գլխավոր գործադիր տնօրենի և գլխավոր հաշվապահի կողմից:

8-ից 70 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Հակոբ Անդրեասյան
Գլխավոր գործադիր տնօրեն

Սերժիկ Զավալյան
Գլխավոր հաշվապահ

# Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն

| Հազար ՀՀ դրամ | Բաժնետիրական կապիտալ | Վաճառքի համար մատչելի ներդրումների գծով վերագնահատման պահուստ | Հիմնական միջոցների գծով վերագնահատման պահուստներ | Կուտակված շահույթ | Ընդամենը մինչև չվերահսկվող մասնակցություն | Չվերահսկվող բաժնեմաս | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|
| **Հաշվեկշիռը 2013թ. հունվարի 1-ի դրությամբ** | 30,000,000 | 450,411 | 3,941,157 | 13,128,541 | 47,520,109 | 1,341,446 | 48,861,555 |
| Տարվա շահույթ | - | - | - | 4,849,661 | 4,849,661 | 149,425 | 4,999,086 |
| **Այլ համապարփակ ֆինանսական արդյունք** | | | | | | | |
| Հիմնական միջոցների իրացումից պահուստի ճշգրտում | - | - | (13,731) | 13,731 | - | - | - |
| Իրական արժեքի փոփոխությունից չվաստակված զուտ օգուտ | - | 361,212 | - | - | 361,212 | - | 361,212 |
| Այլ համապարփակ ֆինանսական արդյունքին վերաբերող բաղկացուցիչ մասի շահութահարկ | - | (72,242) | - | - | (72,242) | - | (72,242) |
| **Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք** | - | 288,970 | (13,731) | 4,863,392 | 5,138,631 | 149,425 | 5,288,056 |
| **Հաշվեկշիռը 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | 30,000,000 | 739,381 | 3,927,426 | 17,991,933 | 52,658,740 | 1,490,871 | 54,149,611 |
| Տարվա շահույթ | **-** | **-** | **-** | **248,391** | **248,391** | **57,433** | **305,824** |
| **Այլ համապարփակ ֆինանսական արդյունք** | | | | | | | |
| Հիմնական միջոցների իրացումից պահուստի ճշգրտում | **-** | **-** | **(38,743)** | **38,743** | **-** | **-** | **-** |
| Ասոցիացված ընկերությունների գործունեությունից չվաստակված զուտ օգուտ | **-** | **927** | **-** | **-** | **927** | **-** | **927** |
| Իրական արժեքի փոփոխությունից չվաստակված զուտ վնաս | **-** | **(205,276)** | **-** | **-** | **(205,276)** | **-** | **(205,276)** |
| Վաճառքի համար մատչելի ներդրումների իրացումից շահույթին կամ վնասին փոխանցված զուտ վնաս | **-** | **1,143** | **-** | **-** | **1,143** | **-** | **1,143** |
| Այլ համապարփակ ֆինանսական արդյունքին վերաբերող բաղկացուցիչ մասի շահութահարկ | **-** | **40,642** | **-** | **-** | **40,642** | **-** | **40,642** |
| **Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք** | **-** | **(162,564)** | **(38,743)** | **287,134** | **85,827** | **57,433** | **143,260** |
| **Հաշվեկշիռը 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **30,000,000** | **576,817** | **3,888,683** | **18,279,067** | **52,744,567** | **1,548,304** | **54,292,871** |

# Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն

| Հազար ՀՀ դրամ | 2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար | 2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար |
|---|---|---|
| **Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր** | | |
| Շահույթ մինչև հարկումը | **346,669** | 6,582,837 |
| *Ճշգրտումներ* | | |
| Ակտիվների հնարավոր կորուստների արժեզրկման ծախս | **10,803,385** | 1,471,828 |
| Մաշվածության և ամորտիզացիոն մասհանումներ | **1,683,359** | 1,546,288 |
| Հիմնական միջոցների օտարումից վնաս | **15,535** | 2,912 |
| Ոչ նյութական ակտիվների արժեզրկումից վնաս | **244** | 1,240 |
| Այլ ակտիվների արժեզրկում | **68,658** | 43,360 |
| Ստացվելիք տոկոսներ | **(1,146,764)** | (568,462) |
| Վճարվելիք տոկոսներ | **-** | 483,712 |
| Ամորտիզացված արժեքով հաշվառվող ակտիվների սկզբնական ճանաչումից վնաս | **80,359** | 135,699 |
| Ասոցիացված ընկերությունների գործունեությունից վնաս | **108,457** | 7,515 |
| Ածանցյալ գործիքների իրական արժեքի փոփոխության (դրական)/բացասական արդյունք | **538,719** | (238,424) |
| Ոչ առևտրային ակտիվների և պարտավորությունների արտարժութային փոխարկումներից զուտ (օգուտ)/վնաս | **(1,346,638)** | 321,203 |
| **Դրամական հոսքեր նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները** | **11,151,983** | 9,789,708 |
| *(Ավելացում)/նվազում գործառնական ակտիվներում* | | |
| Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ | **(732,120)** | 3,016,148 |
| Ածանցյալ ֆինանսական ակտիվներ | **(687,379)** | 798,759 |
| Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ | **(12,454,388)** | (10,588,726) |
| Այլ ակտիվներ | **(181,628)** | 793,296 |
| *Ավելացում/(նվազում) գործառնական պարտավորություններում* | | |
| Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ | **9,006,610** | (191,493) |
| Ածանցյալ ֆինանսական պարտավորություն | **(24,778)** | (2,212) |
| Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ | **4,216,196** | 12,701,117 |
| Այլ պարտավորություններ | **(17,348)** | (221,155) |
| **Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից մինչև շահութահարկը** | **10,277,148** | 16,095,442 |
| Վճարված շահութահարկ | **(1,789,689)** | (1,288,363) |
| **Գործառնական գործունեությունից զուտ դրամական հոսքեր** | **8,487,459** | 14,807,079 |
| **Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր** | | |
| Ներդրումային արժեթղթերի (առք)/վաճառք | **(1,900,884)** | 2,030,293 |
| Ներդրումներ ասոցիացված ընկերություններում | **-** | (392,000) |
| Հիմնական միջոցների առք | **(1,278,150)** | (1,517,075) |
| Հիմնական միջոցների վաճառք | **37,940** | 2,787 |
| Ոչ նյութական ակտիվների առք | **(123,756)** | (43,402) |
| **Ներդրումային գործունեությունից զուտ դրամական հոսքեր** | **(3,264,850)** | 80,603 |
| **Ֆինանսական գործունեությունից դրամական հոսքեր** | | |
| ՀՀ ԿԲ-ից վարկերի ներգրավում/(մարում) | **265,823** | (504,170) |
| Ֆինանս. կազմակերպ. վարկերի մարում | **(10,722,749)** | (1,383,816) |
| Այլ երկարաժամկետ վարկերի ներգրավում | **660,728** | 2,570,814 |
| **Ֆինանսական գործունեությունից զուտ դրամական հոսքեր** | **(9,796,198)** | 682,828 |

| Հազար ՀՀ դրամ | **2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար** | 2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար |
|---|---|---|
| **Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)** | **(4,573,589)** | 15,570,510 |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբի դրությամբ | **62,787,882** | 46,995,061 |
| Արտարժույթի փոխարկման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա | **6,354,759** | 222,311 |
| **Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջի դրությամբ (ծանոթ.14)** | **64,569,052** | 62,787,882 |

## Լրացուցիչ տեղեկատվություն

| | | |
|---|---|---|
| Ստացված տոկոսներ | **29,722,378** | 28,206,811 |
| Վճարված տոկոսներ | **(13,719,166)** | (12,720,863) |

# Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

## 1 Գործունեության բնույթը և ընդհանուր տեղեկություններ

«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերությունը («Բանկը») Խմբի Մայր կազմակերպությունն է: Խումբը բաղկացած է Բանկից և դրա դուստր կազմակեպություններից («Խումբ»):

«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ն հիմնվել է 1995թ. ՀՀ-ում, որպես կոոպերատիվ բանկ կոլեկտիվ սեփականության հիմունքներով և հանդիսանում է փակ բաժնետիրական ընկերություն սկսած 2006թ. սեպտեմբերից: Բանկը գործում է Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենսդրության համաձայն: Բանկը գրանցվել է 1998թ. փետրվարի 17-ին ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ ՀՀ ԿԲ) կողմից N70 արտոնագրային համարով:

Բանկի հիմնական գործունեությունը վարկավորումը և ավանդների ընդունումն է, ՀՀ-ում և արտերկրներ փոխանցումների և փոխարկման գործարքների իրականացումը, ինչպես նաև իրավաբանական և ֆիզիկական անձանց արտարժութային և այլ բանկային ծառայությունների մատուցումը:

Բանկի գլխավոր գրասենյակը գտնվում է Երևանում, իսկ թվով 52 մասնաճյուղեր գտնվում են Երևանում և տարբեր շրջաններում: Բանկի իրավաբանական հասցեն է՝ Բայրոնի 1 փող., Երևան, Հայաստանի Հանրապետություն:

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներառում են հետևյալ դուստր և ասոցիացված ընկերությունները.

| Դուստր ընկերություն | Սեփականություն (%) 2014 | 2013 | Երկիր | Ոլորտը | Ձեռք բերման ամսաթիվը |
|---|---|---|---|---|---|
| «ԱԳԲԱ ԼԻԶԻՆԳ» ՓԲԸ | 54% | 54% | Հայաստան | վարկային կազմակերպություն | 2003թ. ապրիլի 23 |
| «ԱԿԲԱ ԲՐՈԿ» ՍՊԸ | 40% | 40% | Հայաստան | ապահովագրական գծով միջնորդական գործունեություն | 2004թ. հուլիսի 29 |
| «ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ | 49% | 49% | Հայաստան | ներդրումային ֆոնդի կառավարման գործունեություն | 2013թ. նոյեմբերի 19 |

### *Բանկի դուստր ընկերություններ*

«ԱԳԲԱ ԼԻԶԻՆԳ» Վարկային կազմակերպությունը հանդիսանում է փակ բաժնետիրական ընկերություն և հիմնվել է 2003թ. ՀՀ-ում: Կազմակերպությունը իրականացնում է ֆինանսական լիզինգի գծով գործառնություններ, ինչպես նաև մատուցում է ֆինանսական խորհրդատվություն և այլ ֆինանսական ծառայություններ: Կազմակերպությունը գործում է Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենսդրության համաձայն և գրանցվել է

2003թ. ապրիլի 23-ին ՀՀ կենտրոնական բանկի կողմից N4 արտոնագրային համարով: Բանկի ներդրումը «ԱԳԲԱ ԼԻԶԻՆԳ» վարկային կազմակերպություն ՓԲԸ-ում կազմում է 54%:

«ԱԿԲԱ ԲՐՈԿ» ՍՊԸ-ն հիմնվել է 2004թ. ՀՀ-ում: Կազմակերպությունը ծավալում է ապահովագրական գծով միջնորդական գործունեություն: Կազմակերպությունը գործում է Հայաստանի Հանրապետության (այսուհետ` ՀՀ) օրենսդրության համաձայն և գրանցվել է 2004թ. հուլիսի 29-ին ՀՀ կենտրոնական բանկի կողմից N 0004 արտոնագրային համարով:

Չնայած այն հանգամանքին, որ Բանկի ներդրումը «ԱԿԲԱ ԲՐՈԿ» ՍՊԸ-ում կազմում է 40%, համաձայն ՖՀՄՍ 10-ի այն համարվել է դուստր կազմակերպություն և համախմբվել այս ֆինանսական հաշվետվություններում:

***Բանկի ասոցիացված ընկերություններ***

Բանկը` ֆրանսիական «ԱՄՈՒՆԴԻ» ԲԸ-ն հետ համատեղ 2013թ.-ին հիմադրել է «ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ, որը գործում է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից տրամադրած թիվ 0002 լիցենզիայի հիման վրա և իրականացնում է պարտադիր կուտակային կենսաթոշակային ֆոնդերի կառավարման գործունեություն: «ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ-ի հիմնադիրները հանդես են գալիս համապատասխանաբար` «ԱԿԲԱ ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ը `49% և ֆրանսիական «ԱՄՈՒՆԴԻ» ԲԸ-ը` 51% մասնակցությամբ: Համաձայն ՀՀՄՍ 28-ի Բանկի կատարած ներդրումը համարվել է ներդրում ասոցիացված կազմակերպությունում և ֆինանսական հաշվետվություններում ներկայացվել է առանձին տողով:

## 2 Գործարար միջավայր

Հայաստանում շարունակական բնույթ են կրում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները: Որպես զարգացող շուկա, Հայաստանում բացակայում են կատարյալ գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում: Բացի դրանից, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել գործառնությունների ծավալները ֆինանսական շուկաներում, և ֆինանսական գործիքների իրական արժեքները կարող են չհամապատասխանել իրականացրած գործարքներին: Հետագա տնտեսական զարգացման հիմնական խոչընդոտը տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման ցածր մակարդակն է` զուգակցված տարածաշրջանային անկայունությամբ, կենտրոնացված տնտեսական հենքով:

ՀՀ հետ համագործակցող երկրների տնտեսությունների վիճակի վատթարացումը հանգեցրել է արտերկրից ոչ առևտրային դրամային փոխանցումների կրճատմանը, ինչից Հայաստանի տնտեսությունը գտնվում է մեծ կախման մեջ: Հանքահումքային ապրանքների միջազգային գների հետագա անկումը, անորոշությունները` պայմանավորված ուղղակի կապիտալ ներդրումների ներգրավման հնարավորություններով, գնաճը, կարող են հանգեցնել Հայաստանի տնտեսության, ինչպես նաև Խմբի վիճակի վատթարացման: Այնուամենայնիվ, քանի դեռ այս անորոշություններում առկա դատողություններն ու ենթադրությունները շատ են, ղեկավարությունը չի կարող վստահաբար հաշվարկել, թե ինչ չափով դրանք կարող են ազդեցություն ունենալ Խմբի ակտիվների և պարտավորությունների մնացորդային արժեքի վրա:

Խմբի ղեկավարությունը գտնում է, որ ընթացիկ պայմաններում իրականացվում են համապատասխան միջոցառումներ Խմբի տնտեսական կայունությունն ապահովելու նպատակով:

## 3 Հաշվետվությունների պատրաստման հիմքերը

### 3.1 Համապատասխանությունը

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ), որոնք հաստատվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից և Մեկնաբանությունների` հաստատված Ֆինանսական Հաշվետվությունների Մեկնաբանությունների Միջազգային Կոմիտեի կողմից (ՖՀՄՄԿ):

### 3.2 Չափման հիմքերը

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են իրական արժեքի սկզբունքի հիման վրա ֆինանսական արդյունքներով ճշգրտվող` իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների, ինչպես նաև վաճառքի համար մատչելի ակտիվների համար, բացառությամբ այն ակտիվների, որոնց իրական արժեքը հնարավոր չէ որոշել: Այլ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, ինչպես նաև ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները հաշվառվում են ամորտիզացված կամ պատմական արժեքով, բացառությամբ հիմնական միջոցների, որոնք ներկայացվել են վերագնահատված գումարով:

### 3.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Խմբի գործառնական արժույթը դա այն հիմնական տնտեսական միջավայրի արժույթն է, որտեղ գործում է Խումբը: Խմբի գործառնական և ներկայացման արժույթ է հանդիսանում Հայաստանի Հանրապետության դրամը (այսուհետ` ՀՀ դրամ), քանի որ այս արժույթն է լավագույն կերպով արտացոլում ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Խմբի գործարքների տնտեսական բովանդակությունը: Խումբը պատրաստում է իր հաշվետվությունները ՀՀ գործող օրենսդրության և հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների պահանջներին համապատասխան: Սույն ֆինանսական հաշվետվությունները հիմնված են Խմբի հաշվառման գրանցումների վրա, որոնք ճշգրտվել և վերադասակարգվել են ՖՀՄՍ-ին համապատասխանեցնելու նպատակով: Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով` հազարների ճշտությամբ: ՀՀ սահմաններից դուրս դրամը ազատ փոխարկելի չէ:

### 3.4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ

Ընթացիկ տարում Խումբն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2014թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) և ՀՀՄՍԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

***ՀՀՄՍ 32 (Փոփոխություն), Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում***

ՀՀՄՍ 32-ի փոփոխությունները ներառում են կիրառման ուղեցույց ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցման համար ՀՀՄՍ 32-ի չափանիշների կիրառման ընթացքում անհամապատասխանությունների վերաբերյալ հետևյալ երկու բնագավառներում.

- «Տվյալ պահին ունի հաշվանցման իրավաբանորեն ամրագրված իրավունք» դրույթի իմաստը`. փոփոխությունները պարզաբանում են, որ հաշվանցման իրավունքը պետք է իրավաբանորեն ամրագրված լինի կազմակերպության բնականոն գործունեության ընթացքում, կազմակերպության և բոլոր մնացած կողմերի անվճարունակության և սնանկացման դեպքում, և այդ իրավունքը պետք է առկա լինի բոլոր կողմերի համար:

- Քանի որ գործնականում ՀՀՄՍ 32-ում առկա «միաժամանակյա մարման» մեկնաբանության գործնական կիրառման մեջ առկա էր բազմազանություն, ուստի ՀՀՄՍԽ-ն պարզաբանեց զուտ մարման սկզբունքը և ներառեց համախառն մարման համակարգի օրինակ՝ ՀՀՄՍ 32-ի զուտ մարման չափանիշին բավարարող բնութագրիչներով:

Փոփոխությունները կիրառվում են հետընթաց՝ համաձայն իրենց անցումային դրույթների: Քանի որ Խումբը ներկայումս իր ֆինանսական ակտիվներից և ֆինանսական պարտավորություններից որևէ մեկը չի ներկայացրել զուտ հիմունքով կիրառելով ՀՀՄՍ 32-ի դրույթները, այս փոփոխությունները էական ազդեցություն չեն ունեցել ներկայացված բոլոր ժամանակների համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

*ՀՀՄՍ 39 (Փոփոխություն), Ածանցյալների փոխարինումը և հեջավորման հաշվապահական հաշվառման շարունակությունը*

ՀՀՄՍ 39-ի փոփոխությունները թույլ կտան շարունակել հեջավորման հաշվապահական հաշվառումը այնպիսի իրավիճակում, որտեղ ածանցյալը, որը նախատեսված էր որպես հեջավորման գործիք, ըստ օրենքի կամ կանոնակարգի փոխարինվել էր, որպեսզի իրականացներ քլիրինգ կենտրոնական գործընկերոջ հետ, եթե նման պայմաններ լինեին:

*ՀՀՄՍ 36 (Փոփոխություն), Ոչ ֆինանսական ակտիվների գծով փոխհատուցվող գումարների բացահայտումներ*

Այս փոփոխությունները պարզաբանում են, որ Խումբը պետք է բացահայտի ակտիվի փոխհատուցվող գումարը (կամ՝ դրամական միջոցների գեներացման ակտիվի կամ ակտիվների խմբի) ամեն անգամ, երբ արժեզրկման ծախսը ճանաչվում է կամ հակադարձվում ժամանակահատվածի ընթացքում: Բացի այդ, նրանք ներկայացնում են որոշ նոր բացահայտումներ, որոնք պետք է կատարվեն, երբ արժեզրկված ակտիվի փոխհատուցվող գումարը հիմնված է իրական արժեքի վրա՝ հանած օտարման ծախսերը, այդ թվում՝

- իրական արժեքի չափման վերաբերյալ լրացուցիչ տեղեկություն, ներառյալ իրական արժեքի հիերարխիայի կիրառելի մակարդակը, և յուրաքանչյուր գնահատման մեթոդների նկարագրությունը և կատարված հիմնական ենթադրությունները,

- կիրառված զեղչման դրույքները, երբ օտարման ծախսերը հանած իրական արժեքը չափվում է կիրառելով ներկա արժեքի մեթոդը:

Փոփոխությունները կիրառվում են հետընթաց՝ համաձայն իրենց անցումային դրույթների:

*ՖՀՄՍ 10, 12 և ՀՀՄՍ 27, Ներդրումային ընկերություններ*

Փոփոխությունները տալիս են ներդրումային ընկերության սահմանումը և տրամադրում են այդ սահմանման մանրամասն կիրառման ուղեցույցը: Այն ընկերությունները, որոնք համապատասխանում են սահմանմանը պետք է չափեն ներդրումները, որոնք հանդիսանում են ուրիշ ընկերությանը վերահսկող բաժնեմաս (այլ կերպ ասած, դուստրերը), իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով, դրանց համախմբման փոխարեն: Բարեփոխումները նաև ներկայացնում են ներդրումային ընկերությունների համար նոր բացահայտումների պահանջներ:
Փոփոխությունները կիրառվում են հետընթաց՝ համաձայն իրենց անցումային դրույթների:

## 3.5 Խմբի կողմից դեռևս չկիրառվող ստանդարտներ և մեկնաբանություններ

Սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման օրվա դրությամբ լույս են տեսել մի շարք նոր ստանդարտներ, գործող ստանդարտների վերաբերյալ փոփոխություններ և մեկնաբանություններ, որոնք դեռևս ուժի մեջ չեն մտել: Խումբը վաղաժամկետ չի ընդունել այդ ստանդարտներից և մեկնաբանություններից որևէ մեկը:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ կիրառելի նոր ստանդարտներն ու մեկնաբանությունները կընդունվեն Խմբի կողմից՝ դրանց ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող առաջիկա ժամանակաշրջանում:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Խմբի ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև:

***ՖՀՄՍ 9, Ֆինանսական գործիքներ (2014)***

ՀՀՄՍԽ-ն վերջերս թողարկել է *ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ»* (2014), ներկայացնելով իր նախագծի ավարտը՝ փոխարինելու *ՀՀՄՍ 39 «Ֆինանսական գործիքներ՝ ճանաչումը և չափումը»*: Նոր ստանդարտը ներկայացնում է ՀՀՄՍ 39-ի ֆինանսական ակտիվների դասակարգման և չափման ուղեցույցի մեծ փոփոխություններ, և ներկայացնում է ֆինանսական ակտիվների արժեզրկման նոր «սպասվող վարկային կորուստ» մոդելը: ՖՀՄՍ 9-ը տրամադրում է նաև հեջի հաշվառման կիրառման նոր ուղեցույց:
Խմբի ղեկավարությունը դեռ պետք է գնահատի ՖՀՄՍ 9-ի ազդեցությունը այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա: Նոր ստանդարտը պետք է կիրառվի 2018թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար:

Հետևյալ նոր և փոփոխված ստանդարտները, բարեփոխումները հավանաբար նշանակալի ազդեցություն չեն ունենա Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

- *ՖՀՄՍ 14 Հետաձգված վճարումներ կարգավորվող սակագներով իրականացվող գործունեության գծով*
- *ՖՀՄՍ 11 (փոփոխություն) Համատեղ գործողություններում շահերի ձեռքբերման հաշվառում*
- *(ՀՀՄՍ 16 և ՀՀՄՍ 38 փոփոխություն) Ամորտիզացիայի և մաշվածության ընդունելի մեթոդների պարզաբանում*
- *(ՀՀՄՍ 19 փոփոխություն) Հատուցումների սահմանված նախագիծ. Աշխատակիցների վճարներ*
- *ՖՀՄՍ-ների տարեկան բարեփոխումներ 2010-2012թթ.*
- *ՖՀՄՍ-ների տարեկան բարեփոխումներ 2011-2013թթ.*

# 4 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ներկայացվող հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ընթացքում: Հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

## 4.1 Ֆինասական հաշվետվությունների համախմբում

Դուստր կազմակերպությունները, որոնց նկատմամբ Խումբը կարող է տնօրինել ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի կեսից ավելին կամ այլ կերպ վերահսկում է այդ ընկերության գործունեությունը, համախմբվում են: Դուստր կազմակերպությունների հաշվետվությունները

համախմբվում են, երբ վերահսկումը փոխանցվում է Խմբին և բացառվում են համախմբումից, երբ դադարում է վերահսկելու հնարավորությունը:

Բոլոր ներխմբային գործառնությունները, հաշվարկների մնացորդները կամ չիրացված հասույթը բացառվում են: Բացառվում է նաև չիրացված վնասը, մինչև ձեռք չի բերվում համոզվածություն փոխանցված ակտիվի արժեզրկման վերաբերյալ: Անհրաժեշտության դեպքում, դուստր կազմակերպությունների հաշվապահական հաշվառման քաղաքականությունը փոփոխվել է Խմբի կողմից ընդունված քաղաքականությանը համապատասխանեցնելու նպատակով: Բոլոր դուստր կազմակերպությունների հաշվետու ամսաթիվը դեկտեմբերի 31-ն է:

Ձեռք բերման ժամանակ, Դուստր կազմակերպության ակտիվները, պարտավորություններն ու պայմանական պարտավորությունները չափվում են ձեռք բերման օրվա դրությամբ իրական արժեքով: Ձեռք բերման արժեքի և ձեռք բերված զուտ ակտիվների դրական տարբերությունը հաշվառվում է որպես գուդվիլ: Եթե ձեռք բերման արժեքը փոքր է ձեռք բերված դուստր կազմակերպության զուտ ակտիվների իրական արժեքից, ապա տարբերությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքների վերաբերյալ հաշվետվությունում ձեռք բերման ժամանակաշրջանում: Չվերահսկվող մասնակցությունը հաշվառվում է ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի համապատասխան չափով: Հետագայում, չվերահսկվող մասնակցությանը գերազանցող ցանկացած վնաս վերագրվում է Մայր Կազմակերպության բաժնեմասին: Մայր Ընկերության բաժնետերերին հասանելիք բաժնետիրական կապիտալը և չվերահսկվող մասնակցության հասանելիք զուտ եկամուտը արտացոլվում են առանձին տողերով հաշվեկշռում և ֆինանսական արդյունքների վերաբերյալ հաշվետվությունում:

## 4.2 Ներդրումներ ասոցիացված ընկերություններում

Ասոցիացված ընկերություն դա կազմակերպություն է, որտեղ Խումբը ունի նշանակալի ազդեցություն, բայց չի վերահսկում նրան առանձին կամ համատեղ՝ ներդրման օբյեկտի ֆինանսական և գործառնական քաղաքականության գծով որոշումներ ընդունելու միջոցով:

Ներդրման օբյետի ակտիվներն ու պարտավորությունները, ինչպես նաև գործունեության արդյունքներում ներդրողի բաժնեմասը ֆինանսական հաշվետվություններում արտացոլվում են բաժնեմասնակցության մեթոդով:

Ներդրումները ճշգրտվում են ասոցիացված ընկերության զուտ ակտիվներում Խմբի մասնակցության փոփոխությանը համապատասխան, հաշվի առնելով արժեզրկումից կորուստները: Խմբի բաժնեմասը գերազանցող՝ ասոցիացված ընկերության վնասները չեն ճանաչվում:

Վնասներն ու օգուտները Խմբի և ասոցիացված ընկերության միջև գործառնություններից բացառվում են Խմբի բաժնեմասնակցությանը համապատասխան: Եթե վնասներն առաջանում են փոխանցած ակտիվի արժեզրկման արդյունքում, ստեղծվում է համապատասխան արժեզրկման պահուստ:

## 4.3 Եկամուտների և ծախսերի ճանաչում

Եկամուտը ճանաչվում է այն դեպքում, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կհոսեն Խումբ և ստացված եկամուտը կարելի է արժանահավատորեն չափել: Ծախսը ճանաչվում է այն ժամանակ, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կարտահոսեն Խմբից և ծախսը կարելի է արժանահավատորեն չափել: Ստորև ներկայացվող չափանիշները նույնպես պետք է հաշվի առնվեն մինչև եկամուտի ճանաչումը:

*Տոկոսային եկամուտներ և ծախսեր*
Տոկոսային եկամուտներն ու ծախսերը բոլոր տոկոսաբեր ֆինանսական գործիքների համար, բացառությամբ առևտրային նպատակներով պահվող կամ ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող գործիքների, ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում ճանաչվում են որպես «տոկոսային եկամուտ» և «տոկոսային ծախս»՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Եթե ֆինանսական ակտիվի կամ նմանատիպ ֆինանսական ակտիվների խմբի հաշվեկշռային արժեքը նվազում է արժեզրկումից կորուստների պատճառով, տոկոսային եկամուտը շարունակում է ճանաչվել կիրառելով սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը՝ նոր հաշվեկշռային արժեքի նկատմամբ:

*Կոմիսիոն և այլ եկամուտներ և ծախսեր*
Վարկերի տրամադրման համար գանձվող վճարները (համապատասխան ծախսերի հետ միասին) հետաձգվում են՝ ճշգրտելով տվյալ վարկի արդյունավետ տոկոսադրույքը: Վարձավճարները, այլ եկամուտները և ծախսերը հիմնականում ճանաչվում են հաշվեգրման սկզբունքով ծառայությունների մատուցման ընթացքում: Ներդրումային պորտֆելի, այլ կառավարական և խորհրդատվական ծառայությունների գծով վճարները ճանաչվում են պայմանագրային պայմաններին համապատասխան:

*Շահաբաժիններից եկամուտ*
Եկամուտը ճանաչվում է, երբ Խմբի՝ վճարը ստանալու իրավունքը հաստատված է:

*Զուտ առևտրային եկամուտ*
Զուտ առևտրային եկամուտը ներառում է առևտրային նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի փոփոխությունից իրացված և չիրացված եկամուտը և ծախսը, տոկոսներից, շահաբաժիններից և արտարժութային տարբերություններից գոյացող բոլոր եկամուտները և ծախսերը: Զուտ առևտրային եկամուտը ներառում է նաև արտարժույթի առք ու վաճառքից զուտ եկամուտը կամ ծախսը:

## 4.4 Արտարժույթի փոխարկում

Արտարժույթով կատարված գործարքները վերահաշվարկվում են գործառնական արժույթով՝ գործարքի օրվա փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված առևտրային նպատակներով պահվող ակտիվների և պարտավորությունների փոխարկումից առաջացած օգուտը և վնասը ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության զուտ առևտրային եկամուտ հոդվածում, մինչդեռ ոչ առևտրային ակտիվների փոխարկումից գոյացող օգուտը ճանաչվում է ն շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության այլ եկամուտ կամ այլ ծախս հոդվածում: Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են գործառնական արժույթով կիրառելով հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքը:

Արտարժույթով արտահայտված վաճառքի համար մատչելի դրամային արժեթղթերի իրական արժեքում փոփոխությունները վերլուծվում են փոխարժեքային տարբերությունների միջև, որոնք առաջանում են արժեթղթերի ամորտիզացված գումարների փոփոխության և արժեթղթերի հաշվեկշռային արժեքի այլ փոփոխությունների արդյունքում: Ամորտիզացված գումարում փոփոխությունների հետ կապված փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում, իսկ հաշվեկշռային արժեքում այլ փոփոխությունները ճանաչվում են կապիտալում:

Պատմական արժեքով հաշվառվող ոչ դրամային արտարժութային հոդվածները վերահաշվարկվում են գործարքի օրվա փոխարժեքով: Իրական արժեքով հաշվառվող ոչ

դրամային արտարժութային հոդվածները վերահաշվարկվում են իրական արժեքի որոշման օրվա փոխարժեքով: Ոչ դրամային հոդվածների, ինչպիսին են ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով պահվող բաժնետոմսերը, փոխարժեքային տարբերությունները, ներկայացվում են որպես իրական արժեքի փոփոխությունից շահույթի կամ վնասի մաս: Ոչ դրամային հոդվածների փոխարժեքային տարբերությունները, ինչպես օրինակ՝ վաճառքի համար մատչելի դասակարգված բաժնետոմսերը, ընդգրկվում են կապիտալի վաճառքի համար մատչելի ներդրումների գծով վերագնահատման պահուստում:

Յուրաքանչյուր գործառնության պայմանագրով նախատեսված փոխարժեքի և տվյալ գործառնության օրվա գործող փոխարժեքի տարբերությունից առաջացող օգուտը կամ վնասը հաշվառվում է ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվության զուտ առևտրային եկամուտ հոդվածի արտարժույթի առք ու վաճառքից զուտ եկամուտ տողում:

Խմբի կողմից համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով օգտագործվել են հետևյալ փոխարժեքները.

| | **2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| ՀՀ դրամ/1 ԱՄՆ դոլար | **474.97** | 405.64 |
| ՀՀ դրամ/1 եվրո | **577.47** | 559.54 |

## 4.5 Հարկում

Շահույթի գծով հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն հարկերի, որոնց գծով գործառնությունների արդյունքները ճանաչվել են սեփական կապիտալում, ինչի դեպքում հարկերը նույնպես ճանաչվում են սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկը տարվա համար հարկվող եկամուտից վճարվելիք հարկն է՝ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվին գործող հարկային դրույքներով, ինչպես նաև նախորդ տարիների համար վճարված հարկերի ճշգրտումները: Այն դեպքում, երբ ֆինանսական հաշվետվություններն արտոնված են ներկայացման համար մինչ համապատասխան հարկային հաշվետվությունների ներկայացնելը, ապա հարկվող շահույթը կամ վնասը հիմնված է մոտավոր թվերի վրա: Հարկային մարմինները կարող են ունենալ ավելի խիստ մոտեցում հարկային օրենսդրությունը մեկնաբանելիս և հարկային հաշվարկները ստուգելիս: Որպես արդյունք, հարկային մարմինները կարող են պահանջել լրացուցիչ հարկերի մուծում այն գործարքների գծով, որոնց համար նախկինում պահանջ չի ներկայացվել: Հետևաբար, կարող են առաջանալ նշանակալի լրացուցիչ հարկեր, տույժեր և տուգանքներ: Հարկային ստուգումը կարող է ներառել ստուգման տարվան անմիջապես նախորդող 3 օրացուցային տարիներ: Որոշ հանգամանքներում հարկային ստուգումը կարող է ներառել ավելի երկար ժամանակաշրջաններ:

Հետաձգված հարկերը հաշվարկվում են հաշվապահական հաշվեկշռի պարտավորությունների մեթոդի համաձայն, որը հաշվի է առնում բոլոր ժամանակային տարբերությունները, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և հարկային նպատակներով հաշվարկվող գումարների միջև, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ տարբերություններն առաջացել են գուդվիլի նախնական ճանաչման ժամանակ կամ կազմակերպությունների միավորում չհանդիսացող գործառնություններից առաջացող ակտիվների կամ պարտավորությունների

դեպքում և ինչը առաջացման պահին չի ազդում ոչ հաշվապահական, և ոչ էլ հարկման նպատակով հաշվարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի հաշվին կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվարկվում են այն հարկային դրույքով, որը ենթադրվում է, որ կգործի ակտիվների իրացման և պարտավորությունների մարման ժամանակ՝ հիմնվելով տվյալ ժամանակաշրջանի կամ հաշվետու ժամանակաշրջանի փաստացի գործող դրույքների վրա:

Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ առաջանում են նաև այն ժամանակավոր տարբերությունների գծով, որոնք առաջանում են դուստր, ասոցիացված կամ համատեղ կազմակերպություններում ներդրումներից, բացի այն դեպքերից, երբ ժամանակավոր տարբերությունների իրացման ժամկետները կառավարվում են մայր կազմակերպության կողմից, և հավանական է, որ դրանք մոտ ապագայում չեն իրացվի:

ՀՀ-ում բանկերն իրենց գործունեության ընթացքում վճարում են նաև այլ հարկեր: Այդ հարկերը ներառված են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության այլ ծախսերում:

## 4.6 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները բաղկացած են կանխիկ դրամից, ՀՀ ԿԲ-ում պահվող միջոցներից (բացառությամբ ԱրՔա վճարային համակարգով իրականացվող փոխհաշվարկների համար դեպոնացված գումարների) և այլ բանկերում հաշիվներից, որոնք կարող են փոխարկվել կանխիկի կարճ ժամանակամիջոցում, այդ թվում, բարձր իրացվելի ներդրումները, որոնց մարման ժամկետը ձեռք բերման օրից 90 օր է, որոնք հեշտությամբ փոխարկելի են հայտնի կանխիկ գումարների, և չեն ենթարկվում արժեքի փոփոխման զգալի ռիսկի:

Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով:

## 4.7 Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Իր բնականոն գործունեության ընթացքում Խումբն օգտագործում է այլ բանկերում բացված ավանդային հաշիվներ և փոխատվություններ: Բանկերին տրամադրված ֆիքսված ժամկետով վարկերն ու կանխավճարները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ոչ ֆիքսված ժամկետներով միջոցներն ամորտիզացվում են Խմբի ղեկավարության կողմից գնահատված ժամկետներում: Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գումարները նվազեցվում են արժեզրկումից պահուստների գումարներով:

## 4.8 Մուրհակներ

Ձեռք բերված մուրհակները դասակարգվում են որպես վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ և հաշվառվում են համապատասխան ակտիվի հաշվառման քաղաքականության համաձայն:

## 4.9 Ֆինանսական գործիքներ

Խումբը ֆինանսական ակտիվները և պարտավորություններն իր հաշվեկշռում ճանաչում է այն և միայն այն դեպքում, երբ նա դառնում է գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների սովորական բնույթ կրող առք ու վաճառքների դեպքում դրանք ձևակերպվում են գործարքի օրվա ամսաթվով: Սովորական բնույթ կրող ձեռք բերումների դեպքում, երբ ֆինանսական գործիքը հետագայում պետք է չափվի իրական

արժեքով, պայմանագրի օրվա և գործարքի օրվա միջև ընկած ժամանակամիջոցում այն հաշվառվում է նույն սկզբունքով, ինչ որ ձեռք բերված գործիքների դեպքում:

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները սկզբնական ճանաչման ժամանակ չափվում են սկզբնական արժեքով, գումարած գործարքի հետ կապված ցանկացած ծախսումները, բացի ֆինանսական արդյունքներով ճշգրտվող` իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքների:

Սկզբնական ճանաչումից հետո բոլոր ֆինանսական պարտավորությունները, բացի ֆինանսական արդյունքներով ճշգրտվող` իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքների (ներառված նաև առևտրային նպատակներով պահվող գործիքները), հաշվառվում են ամորտիզացված արժեքով` օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Սկզբնական ճանաչումից հետո ֆինանսական արդյունքներով ճշգրտվող` իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքները հաշվառվում են իրական արժեքով:

Խմբի կողմից ֆինանսական ակտիվները դասակարգվում են հետևյալ կատեգորիաների. ֆինանսական արդյունքներով ճշգրտվող` իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ, մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ, վարկեր և դեբիտորական պարտքեր, վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ: Ներդրումների նման դասակարգումը կատարվում է դրանց ձեռքբերման պահին` Խմբի ղեկավարության կողմից սահմանված գնահատումների հիման վրա հաշվի առնելով ձեռքբերման նպատակները: Ակտիվների հետագա վերադասակարգումը կատարվում է անհրաժեշտության և հնարավորության դեպքում` յուրաքանչյուր ֆինանսական տարվա ավարտից հետո:

*Ֆինանսական արդյունքներով ճշգրտվող` իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ*

Այս կատեգորիայում հաշվառվում են առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվները և ֆինանսական արդյունքներով ճշգրտվող` իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները: Ֆինանսական ակտիվը հաշվառվում է այս կատեգորիայում, եթե այն ձեռք է բերվում կարճ ժամկետում վաճառքի նպատակով կամ եթե այդպես է որոշվում ղեկավարության կողմից նշված ակտիվի ձեռք բերման պահին:

Իր բնականոն գործունեության ընթացքում, արտարժույթի և կապիտալի շուկաներում, Խումբը հանդես է գալիս որպես ածանցյալ գործիքներով պայմանագրերի կողմ, որոնք ներառում են ֆյուչերսներ, ֆորվարդներ, սվոպեր և օպցիոններ: Բոլոր ածանցյալ գործիքները դասակարգվում են որպես առևտրական նպատակներով պահվող և դրանց հաշվառումը իրականացվում է ֆինանսական գործիքների նախնական ճանաչման քաղաքականությունների համաձայն, այնուհետև դրանք վերաչափվում են իրական արժեքով: Իրական արժեքը որոշվում է շուկաներում գնանշումներով կամ այնպիսի մոդելների կիրառմամբ, որոնց հիմքում ընկած են շուկաների ընթացիկ վիճակների գնահատումները և բազային գործիքների պայմանագրային գները և այլ գործոններ: Դրական իրական արժեք ունեցող ածանցյալ գործիքները հաշվառվում են որպես ակտիվ, իսկ բացասական իրական արժեքով ածանցյալ գործիքները` որպես պարտավորություն: Նշված գործառնություններից արդյունքները հաշվառվում են որպես առևտրային նպատակներով պահվող ակտիվներից կամ արտարժութային գործառնություններից շահույթ կամ վնաս, կախված ածանցյալ գործիքների բնույթից:

Այլ ֆինանսական գործիքների բաղադրիչ հանդիսացող ածանցյալ գործիքները հաշվառվում են որպես առանձին ածանցյալ գործիքներ, եթե դրանց գծով ռիսկերը և առանձնահատկությունները խիստ կապված չեն հիմնական պայմանագրի ռիսկերից և առանձնահատկություններից, և հիմնական պայմանագիրը չի հաշվառվում իրական արժեքով`

ճշգրտվող ֆինանսական արդյունքներով: Ներառված ածանցյալ գործիքը հանդիսանում է բարդ ֆինանսական գործիքի բաղադրիչ, որը ներառում է ինչպես հիմնական բաղադրիչը, այնպես էլ ածանցյալ բաղադրիչը, ինչի արդյունքում որոշ դրամական հոսքեր հիմնական գործիքի և ինքնուրույն ածանցյալ գործիքի փոփոխվում են նույն ձևով:

Ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները դասակարգվում են որպես ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող, երբ.

- Այդպես վարվելը զգալիորեն կնվազեցնի չափման անհամապատասխանությունները, որոնք կառաջանային, եթե կապված ածանցյալ գործիքները համարվեին առևտրական նպատակներով պահվող, իսկ հիմք հանդիսացող ֆինանսական գործիքները հաշվառվեին ամորտիզացված գումարով, ինչպես վարկերը կամ հաճախորդներին և բանկերին տրվող կանխավճարները, կամ պարտքային արժեթղթերի տեսքով թողարկված արժեթղթերը:
- Որոշ ներդրումներ, ինչպես օրինակ կապիտալի գործիքներում կատարված ներդրումները, որոնք փաստաթղթավորված ռիսկերի կառավարման կամ ներդրումային քաղաքականության համաձայն հաշվառվում են իրական արժեքով և կառավարչական անձնակազմին հաղորդվում են այդ արժեքով, համարվում են ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող, և
- Ֆինանսական գործիքները, ինչպես պարտքային արժեթղթերը, որոնք պարունակում են մեկ կամ ավելի բաղադրիչ ածանցյալ գործիքներ, որոնք էականորեն ազդում են դրամական հոսքերի վրա, համարվում են ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող:

Ածանցյալ գործիքները դասակարգվում են որպես առևտրային նպատակներով պահվող, բացի այն դեպքերից, երբ դրանք օգտագործվում են հեջավորման նպատակով: Առևտրային նպատակներով պահվող ակտիվներից շահույթը և վնասը արտացոլվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

*Մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթեր*

Ֆիքսված մարման ժամկետով արժեթղթերը դասակարգվում են որպես մինչև մարման ժամկետը պահվող, երբ Խումբը հաստատապես մտադրված է և հնարավորություն ունի պահել այդ ներդրումները մինչև դրանց մարման ժամկետի լրանալը: Եթե Խմբի կողմից իրականացվում է մարման ժամկետին ոչ մոտ ակտիվների էական գումարի վաճառք, ապա ամբողջ դասը վերադասակարգվում է որպես վաճառքի համար մատչելի: Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ հանած դրանց գծով արժեզրկումից պահուստները:

*Վարկեր և դեբիտորական պարտքեր*

Վարկերը և դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ֆինանսական ակտիվներն են, որոնք ստեղծվում են Խմբի կողմից ուղղակիորեն պարտապանին դրամ տրամադրելու միջոցով՝ առանց պարտքը վաճառելու մտադրության:

Ֆիքսված ժամկետներով տրամադրված վարկերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքից ծախսումները: Երբ տրամադրված գումարների իրական արժեքը տարբերվում է վարկի իրական արժեքից, օրինակ երբ վարկը տրամադրվում է շուկայականից ցածր տոկոսադրույքով, տրամադրված գումարի և վարկի իրական արժեքների տարբերությունը վարկի սկզբնական ճանաչման ժամանակ ձևակերպվում է որպես ծախս շուկայականից ցածր դրույքներով ակտիվների տեղաբաշխումից՝ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների հաշվետվությունում: Այնուհետև վարկերն ու փոխատվությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ

տոկոսադրույքի մեթոդը: Ֆիքսված մարման ժամկետ չունեցող վարկերն ու փոխատվությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով` ելնելով մարման ենթադրվող ժամկետներից: Հաճախորդներին տրված վարկերի ու փոխատվությունների գումարները նվազեցվում են դրանց գծով արժեզրկումից պահուստների գումարներով:

*Վաճառքի համար մատչելի ֆինանսական ներդրումներ*

Վաճառքի համար մատչելի ներդրումները պարտքային, ինչպես նաև կապիտալի գործիքներում կատարված այն ներդրումներն են, որոնք Խումբը մտադիր է պահել անորոշ ժամկետով, և որոնք կարող են վաճառվել իրացվելիության կարիքների բավարարման համար, ինչպես նաև տոկոսադրույքներում, փոխարժեքներում կամ բաժնետոմսերի գներում փոփոխությունների դեպքում: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները նախնական ճանաչումից հետո հաշվառվում են իրական արժեքով: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի փոփոխություններից առաջացած շահույթն ու վնասը վերագրվում է սեփական կապիտալին մինչև ֆինանսական ակտիվի օտարումը կամ արժեզրկումը, որի դեպքում կապիտալում ճանաչված շահույթը կամ վնասը վերաձևակերպվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների հաշվետվությունում: Ամեն դեպքում, տոկոսները հաշվարկվում են արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով` շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների հաշվետվությունում: Վաճառքի համար մատչելի կապիտալի գործիքների գծով շահաբաժինները ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում գրանցվում են այն ժամանակ, երբ Խումբը իրավունք է ձեռք բերում ստանալու այդ շահաբաժինները:

Ակտիվ ֆինանսական շուկաներում գործող Ֆինանսական ակտիվի իրական արժեքը հաշվետու ամսաթվին բորսային փակման պահին այդ ակտիվի գծով գնանշվող գինն է: Եթե գնանշված շուկայական գինը առկա չէ, ապա գործիքի իրական արժեքը որոշվում է գնային մոդելների կամ զեղչված դրամական հոսքերի տեխնիկայի միջոցով: Հակառակ դեպքում ներդրումները հաշվառվում են ինքնարժեքով` հանած արժեզրկումից պահուստների գումարները:

## 4.10 Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով Խումբն իրականացնում է արժեզրկման գնահատում ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական ակտիվների խմբի համար:

*Ամորտիզացված արժեքով հաշվառվող ակտիվներ*

Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական ակտիվների խումբը արժեզրկվում է և արժեզրկումից կորուստը ճանաչվում է միայն այն դեպքում, եթե կա օբյեկտիվ վկայություն արժեզրկման մասին` որպես ակտիվի նախնական ճանաչումից հետո կատարված մեկ կամ մի քանի իրադարձությունների («ծախսային իրադարձություն») արդյունք, և երբ այդ իրադարձությունը կամ իրադարձություններն ազդեցություն ունեն ֆինանսական ակտիվի կամ ակտիվների խմբի ակնկալվող ապագա դրամական հոսքերի վրա, որոնք կարելի է արժանահավատորեն չափել:

Արժեզրկումից կորուստի օբյեկտիվ վկայության գոյությունը որոշվում է որոշ չափանիշներով, որոնք վկայում են, որ վարկառուն կամ վարկառուների խումբն ունեն զգալի ֆինանսական դժվարություններ (օրինակ` կապիտալի նորմատիվ, զուտ եկամտի և վաճառքների հարաբերակցություն), առկա են տոկոսագումարների և մայր գումարների վճարման պարտավորությունների, վարկային համաձայնության կամ պայմանների խախտումներ, գրավի արժեքի նվազում, հավանականություն, որ կլինի սնանկացում կամ այլ ֆինանսական վերակազմակերպում և կա տեղեկատվություն ակնկալվող ապագա դրամական հոսքերի

չափելի նվազման վերաբերյալ՝ կապված տնտեսական պայմանների փոփոխություններով, որոնք ազդում են վարկառուի և չվճարումների վրա:

Խումբը սկզբից գնահատում է արժեզրկման օբյեկտիվ պայմանների գոյությունը անհատական գնահատման արդյունքում այն ակտիվների համար, որոնք անհատապես էական են և հետո անհատական կամ խմբային գնահատումների արդյունքում այն ֆինանսական ակտիվների համար, որոնք անհատապես էական չեն: Անհատական գնահատման արդյունքում արժեզրկման օբյեկտիվ գոյությունը հաստատելուց կամ ժխտելուց հետո ակտիվները դասակարգվում են վարկային ռիսկի նմանատիպ բնույթ ունեցող խմբերում՝ խմբային գնահատում իրականացնելու նպատակով: Այն ակտիվները, որոնց գծով անհատական գնահատման արդյունքում ձևավորվել են արժեզրկումից պահուստներ, չեն ներառվում վերոհիշյալ խմբերում:

Երբ առկա է վկայություն ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվի արժեզրկման վերաբերյալ, արժեզրկման պահուստի գումարը որոշվում է որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի և այդ ֆինանսական գործիքի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի (բացառությամբ վարկի հետ կապված ապագա ծախսերի) ներկա արժեքի միջև տարբերություն: Ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է արժեզրկման պահուստի միջոցով, արժեզրկումից ծախսը արտացոլվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Եթե վարկը կամ մինչև մարման ժամկետը պահվող ներդրումն ունի փոփոխական տոկոսադրույք, ցանկացած արժեզրկումից ծախս չափելու համար զեղչման դրույքը պայմանագրով որոշված ընթացիկ արդյունավետ տոկոսադրույքն է: Խումբը կարող է արժեզրկումը չափել գործիքի իրական արժեքի հիման վրա՝ օգտագործելով տեսանելի շուկայական գինը:

Ապահովված ֆինանսական ակտիվների դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքը ներառում է գրավների իրացումից փոխհատուցվող գումարները, հանած գրավի ձեռքբերման և իրացման ծախսերը, անկախ նրանից, թե գրավը կփոխանցվի Խմբին, թե ոչ:

Արժեզրկման խմբային գնահատման նպատակով, ֆինանսական ակտիվները խմբավորվում են Խմբի ներքին վարկային դասակարգման հիման վրա, որը հաշվի է առնում վարկային ռիսկի բնութագրիչները, ինչպես՝ ակտիվի տեսակը, արդյունաբերական ոլորտը, աշխարհագրական դիրքը, գրավի տեսակը, ժամկետանց կարգավիճակը և այլ կապակցված գործոններ:

Ֆինանսական ակտիվների ապագա դրամական հոսքերը, որոնց արժեզրկումը խմբային է գնահատված, որոշվում են խմբում գտնվող ակտիվների պայմանագրային դրամական հոսքերի և նմանատիպ ակտիվների պատմական ծախսերի պրակտիկայի հիման վրա: Վերջինս ճշգրտվում է ընթացիկ տեսանելի տեղեկատվությամբ, որպեսզի արտացոլվեն ներկա պայմանները, որոնք չեն ազդել այն ժամանակահատվածում, որի վրա հիմնված է պատմական ծախսերի պրակտիկան, և պատմական ժամանակաշրջանում ներկայում գոյություն չունեցող պայմանների հետևանքները չեզոքացնելու նպատակով:

Ակտիվների խմբերի ապագա դրամական հոսքերում փոփոխությունների գնահատականը պետք է արտացոլի և համապատասխան լինի դրանց հետ կապված տեսանելի տվյալների ժամանակաշրջանից ժամանակաշրջան փոփոխությունների հետ (օրինակ՝ փոփոխություններ գործազրկության դրույքներում, գույքի գնի, վճարումների կարգավիճակի կամ խմբում կորուստների հավանականությունը մատնանշող այլ գործոնների և կորուստների ծավալների մեջ): Ապագա դրամական հոսքերի գնահատման համար օգտագործվող մեթոդոլոգիան և վարկածները պարբերաբար վերանայվում են Խմբի կողմից՝ կորուստների իրական և գնահատված արժեքների միջև տարբերությունները նվազեցնելու համար:

Վարկերը համապատասխան պահուստների հետ միասին դուրս են գրվում, եթե ապագայում չկա վարկը հավաքագրելու իրատեսական հեռանկար, և երբ բոլոր գրավներն օգտագործվել են կամ փոխանցվել Խմբին: Եթե հաջորդող տարում, գնահատված արժեզրկման ծախսը ավելանում կամ նվազում է արժեզրկման ճանաչումից հետո կատարված իրադարձությունների պատճառով, նախկինում ճանաչված արժեզրկման ծախսը ավելացվում կամ նվազեցվում է պահուստի գումարը ճշտելով: Եթե ապագա դուրսգրումը հետագայում վերականգնվում է, ապա վերականգնված գումարը կրեդիտագրվում է պահուստի հաշվին:

*Վերանայված վարկեր*

Որտեղ հնարավոր է, Խումբը փորձում է վերանայել վարկերը, քան բռնագանձել գրավը: Սա կարող է հանգեցնել վճարումների երկարաձգումների և վարկի մարման նոր պայմանների մասին համաձայնության: Երբ վարկի պայմանները վերանայված են, վարկն այլևս չի համարվում ժամկետանց: Ղեկավարությունը շարունակաբար վերանայում է վերանայված պայմաններով վարկերը, համոզվելու համար, որ բոլոր համաձայնությունները պահպանված են և որ ապագա վճարումները կկատարվեն: Վարկերը շարունակում են մնալ արժեզրկման անհատական կամ խմբային գնահատման առարկա՝ օգտագործելով վարկի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը:

*Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ*

Երբ վաճառքի համար մատչելի ակտիվն արժեզրկվում է, ապա նրա արժեքի (նվազեցված մարումների և ամորտիզացիայի գումարներով) և ընթացիկ իրական արժեքի տարբերությունը, բացառությամբ նախկինում շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված արժեզրկումից գումարների, կապիտալից վերաձնակերպվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Վաճառքի համար մատչելի կապիտալի գործիք հանդիսացող ներդրումների գծով արժեզրկումից կորուստների հակադարձում ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում չի կատարվում: Վաճառքի համար մատչելի պարտքային գործիք հանդիսացող ներդրումների գծով արժեզրկումից կորուստների հակադարձումը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, եթե ակտիվի իրական արժեքի բարձրացումը օբյեկտիվորեն կարելի է համարել հետագա իրադարձությունների արդյունք, որոնք կատարվել են կորուստը ֆինանսական արդյունքներով ճանաչելուց հետո:

## 4.11 Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ապաճանաչում

*Ֆինանսական ակտիվներ*

Ֆինանսական ակտիվը (կամ ֆինանսական ակտիվի մի մասը, կամ ֆինանսական ակտիվների խմբի մի մասը) ապաճանաչվում է, երբ.

- վերանում է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը,
- Խումբը փոխանցում է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը, կամ պահպանում է այդ իրավունքը, բայց պարտավորվում է ստացված գումարներն ամողջությամբ և ժամանակին փոխանցել երրորդ կողմին՝ փոխանցման համաձայնագրի համաձայն,
- և Խումբը կամ (ա) փոխանցում է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, կամ (բ) չի փոխանցում, և չի պահպանում ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, այլ փոխանցում է ակտիվի նկատմամբ վերահսկողությունը:

Եթե Խումբը փոխանցում է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը և չի փոխանցում, և չի պահպանում ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, և չի փոխանցում է ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, ապա ակտիվը հաշվառվում Խմբի շարունակվող մասնակցության համապատասխան ֆինանսական ակտիվում: Երբ

շարունակվող մասնակցությունը ձեռք է բերում փոխանցվող ակտիվի երաշխիքային ապահովման ձև, ապա այդպիսի մասնակցության չափը համարվում է հետևյալ երկու մեծություններից նվազագույնը՝ ակտիվի հաշվեկշռային արժեք կամ Խմբի կողմից փոխհատուցվելիք առավելագույն գումար:

Երբ շարունակվող մասնակցությունը ձեռք է բերում փոխանցվող ակտիվի դուրս գրված վաճառքի և/կամ գնման օպցիոնի ձև (ներառյալ դրամային և նման պայմաններով օպցիոնները), մասնակցության չափը որոշվում է այն գումարի չափով, որով Խումբը կարող է հետ գնել փոխանցվող ակտիվը, բացառությամբ իրական արժեքով գնահատված դուրս գրված վաճառքի օպցիոնի (ներառյալ դրամային և նման պայմաններով օպցիոնները), երբ շարունակվող մասնակցության չափը համարվում է հետևյալ երկու մեծություններից նվազագույնը՝ փոխանցվող ակտիվի իրական արժեքը կամ օպցիոնի կատարման գինը:

*Ֆինանսական պարտավորություններ*
Ֆինանսական պարտավորությունն ապաճանաչվում է, երբ այն մարվում է, չեղյալ է համարվում կամ լրացել է դրա ուժի մեջ մնալու ժամկետը:

Փոխառուի փոխատուի միջև պարտքային գործիքների փոխանակումը, որոնց պայմաններն էականորեն տարբերվում են միմյանցից, կամ կատարվում է գործող պարտքային գործիքի պայմանների էական փոփոխություն, իրենից ներկայացնում է հին պարտքի մարում, որը պետք է հանգեցնի այդ պարքի ապաճանաչմանը և նոր պարտքային գործիքի ճանաչմանը, իսկ տարբերությունը համապատասխան հաշվեկշռային հաշվի հետ ձևակերպվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

## 4.12 Ռեպո և հակադարձ ռեպո համաձայնագրեր

Հետգնման պայմանով արժեթղթերի վաճառքի գործառնությունները («ռեպո») դիտարկվում են որպես ապահովված ֆինանսական գործարքներ: Հետգնման պայմանով վաճառված արժեթղթերը շարունակվում են հաշվառվել հաշվեկշռում, և այն դեպքում, երբ գնորդն ունի նշված արժեթղթերի վաճառքի կամ գրավադրման պայմանագրային իրավունք կամ համաձայնություն, դրանք վերադասակարգվում են որպես «Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր» և ներկայացվում են որպես առանձին հաշվեկշիռային հոդված: Համապատասխան պարտավորությունն արտացոլվում է ֆինանսական կազմակերպությունների կամ հաճախորդների նկատմամբ հաշիվներում:

Հետվաճառքի պայմանով գնված արժեթղթերը («հակադարձ ռեպո») չեն ճանաչվում հաշվապահական հաշվեկշռում, իսկ տրամադրված գումարները հաշվառվում են որպես պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ կամ հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ:

Արժեթղթերի գնման և վաճառքից առաջացած եկամուտը կամ ծախսը իրենից ներկայացնում է տոկոսային եկամուտ կամ ծախս, որոնք հաշվեգրվում են հետգնման պայմանագրերի գործողության ժամկետների ընթացքում՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

## 4.13 Որպես գրավ տրված և ստացված արժեթղթեր

Արժեթղթերով գործարքները հիմնականում ապահովվում են արժեթղթերով կամ կանխիկ դրամով: Արժեթղթերի փոխանցումը մյուս կողմին արտացոլվում է հաշվեկշռում, միայն եթե փոխանցվում են նաև ռիսկերը և օգուտները կապված սեփականության իրավունքի փոխանցման հետ: Վճարված կամ որպես գրավ ստացված կանխիկը գրանցվում է որպես ակտիվ կամ պարտավորություն:

Ձեռքբերված արժեթղթերը չեն ճանաչվում հաշվեկշռում մինչև դրանց օտարումը երրորդ կողմին, որի դեպքում նշված արժեթղթերի վերադարձման գծով պարտավորությունը ճանաչվում է իրական արժեքով որպես առևտրական նպատակներով պարտավորություն, իսկ գնման և վաճառքի տարբերությունը հաշվառվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության «Զուտ առևտրային եկամուտ» հոդվածում:

## 4.14 Վարձակալություն

*Ֆինանսական վարձակալություն – Խումբը որպես վարձատու*

Ֆինանսական վարձակալության սկզբում Խումբը ֆինանսական վարձակալությամբ տրամադրած ակտիվները հաշվառում է ներդրումների զուտ գումարով: Այս գործառնությունները ներկայացվում են որպես հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ: Ֆինանսական եկամուտը ճանաչվում է վարձակալության ընթացքում այնպես, որ ապահովի անփոփոխ պարբերական դրույք վարձակալության շրջանակներում չմարված զուտ ներդրումների նկատմամբ: Սկզբնական ուղղակի ծախսերը ներառվում են ստացվելիք գումարների սկզբնական ճանաչման ժամանակ:

*Գործառնական վարձակալություն – Խումբը որպես վարձակալ*

Ակտիվների վարձակալությունը, որի դեպքում ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու օգուտները պահպանվում են վարձատուի մոտ, դասակարգվում է որպես գործառնական վարձակալություն: Գործառնական վարձակալության շրջանակներում վարձավճարները ճանաչվում են որպես ծախս համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում գծային հիմունքով վարձակալության ժամկետի ընթացքում և ներառվում են գործառնական ծախսերում:

## 4.15 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները ներկայացված են իրական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ: Երբ ակտիվի հաշվեկշռային արժեքը ավելի մեծ է նրա գնահատված փոխհատուցվող գումարից ոչ ժամանակավոր հանգամանքների պատճառով, այն անմիջապես նվազեցվում է մինչև այդ փոխհատուցվող գումարը: Հողը հաշվառվում է իրական արժեքով և ունի անսահմանափակ օգտակար ծառայության ժամկետ և, հետևաբար, չի ամորտիզացվում:

Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում, կիրառելով հետևյալ տարեկան դրույքաչափերը՝

| | Օգտակար ծառայության ժամկետ (տարիներ) | Տոկոսադրույք (%) |
|---|---|---|
| Շենքեր, շինություններ | 20 | 5 |
| Տրանսպորտային միջոցներ | 5 | 20 |
| Հաշվողական և համակարգչային տեղնիկա | 3 | 33 |
| Տպիչներ, անխափան ստուգման սարքավորումներ | 5 | 20 |
| Կապի և հեռահաղորդակցման միջոցներ | 5 | 20 |
| Ավտոմատ գանձման մեքենաներ (ԱԳՄ) | 10 | 10 |
| Այլ հիմնական միջոցներ | 5 | 20 |

Վարձակալված հիմնական միջոցների վրա ուղղված կապիտալ բնույթի ծախսումները կապիտալացվում և ամորտիզացվում են գծային հիմունքով վարձակալման ժամկետի և հիմնական միջոցների և դրանց օգտակար ծառայության ժամկետներից նվազագույնով: Անավարտ շինարարությանը պատկանող ակտիվները հաշվառվում են փաստացի ծախսերի և արժեզրկումից կորուստների տարբերությամբ: Շինարարական աշխատանքների ավարտից հետո ակտիվները փոխանցվում են հիմնական միջոցներին և հաշվառվում են իրենց մնացորդային արժեքով: Անավարտ շինարարությանը պատկանող ակտիվները չեն ամորտիզացվում քանի դեռ պատրաստ չեն օգտագործման համար:

Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման հետ կապված ծախսումները շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ծախս՝ դրանց կատարման պահին: Կապիտալ բնույթի նորոգման ծախսումները ավելացվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, երբ այդ ծախսումները կատարվում են, և եթե բավարարում են ակտիվի ճանաչման չափանիշներին: Այս ծախսումների մաշվածությունը հաշվարկվում է համապատասխան ակտիվի օգտակար ծառայության մնացորդային ժամկետի ընթացքում:

Հիմնական միջոցի իրացումից առաջացած օգուտ կամ վնասը որոշվում է որպես ակտիվի իրացումից զուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և հաշվառվում է շահույթում կամ վնասում:

Վերագնահատման արդյունքում ակտիվի արժեքի աճը արտացոլվում է կապիտալում՝ հիմնական միջոցների վերագնահատման պահուստում, բացի այն դեպքերից, երբ այն փոխհատուցում է ֆինանսական արդյունքներում տվյալ ակտիվի գծով նախկինում ճանաչված վերագնահատումից վնասը. այս դեպքում վերագնահատումից աճը նույնպես ճանաչվում է ֆինանսական արդյունքներում: Վերագնահատման արդյունքում ակտիվի արժեքի նվազումը ճանաչվում է ֆինանսական արդյունքներում, բացի այն դեպքերից, երբ այն փոխհատուցում է նախկինում տվյալ ակտիվի գծով կապիտալում ճանաչված վերագնահատումից աճը:

Վերագնահատված գումարով հաշվառվող հիմնական միջոցների իրացման դեպքում, իրացված հիմնական միջոցների համապատասխան դասի վերագնահատման պահուստում վերագրված գումարը փոխանցվում է չբաշխված շահույթին:

## 4.16 Գուդվիլ և ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները բաղկացած են համակարգչային ծրագրերից, արտոնագրերից, գուդվիլից և այլն:

Ձեռք բերված որոշելի ակտիվների, պարտավորությունների և պայմանական պարտավորությունների զուտ իրական արժեքում Խմբի բաժնեմասը գերազանցող ձեռք բերման արժեքի մեծությունը ճանաչվում է որպես գուդվիլ: Եթե այն բացասական է (բացասական գուդվիլ), այն անմիջապես ճանաչվում է տարվա արդյունքներում:
Փոխանակման օրվա դրությամբ ձեռք բերված զուտ ակտիվներում բաժնեմասի մնացորդային արժեքի նկատմամբ հավելյալ ներդրման արժեքի մեծությունը ճանաչվում է որպես չվերահսկվող բաժնեմասի ձեռք բերումից առաջացած գուդվիլ:
Գուդվիլը չափվում է սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկումից կուտակված կորուստները:

Առանձին ձեռք բերված ոչ նյութական ակտիվները սկզբնապես ճանաչվում են ինքնարժեքով: Նախնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները հաշվառվում են ինքնարժեքով՝ նվազեցնելով կուտակված ամորտիզացիան կամ արժեզրկումից կորուստները: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայությունների ժամկետները կարող են լինել որոշակի կամ անորոշ: Որոշակի օգտակար ծառայությունների ժամկետներ ունեցող ոչ նյութական ակտիվները ամորտիզացվում են գծային հիմունքով օգտակար ծառայության ընթացքում՝ 1-ից 10 տարվա ընթացում և գնահատվում են արժեզրկման առումով, երբ առկա են արժեզրկման հատկանիշներ: Ամորտիզացիայի հաշվառման մեթոդները և ժամկետները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում:
Անորոշ օգտակար ծառայությունների ժամկետներ ունեցող ոչ նյութական ակտիվները չեն ամորտիզացվում, սակայն յուրաքանչյուր տարի գնահատվում են արժեզրկման առումով՝ անհատապես կամ առանձին դրամաստեղծ միավորի համար: Անորոշ օգտակար ծառայությունների ժամկետներ ունեցող ոչ նյութական ակտիվները յուրաքանչյուր տարի հսկվում են հիմնավորելու համար նրանց հաշվառման շարունակականությունը նշված դասում:

Համակարգչային ծրագրերի ընթացիկ սպասարկման ծախսերը հաշվառվում են որպես ծախս դրանց կատարման ժամանակ:

## 4.17 Բռնագանձված ակտիվներ

Որոշ դեպքերում, ակտիվները բռնագանձվում են վարկային պարտավորությունների չկատարման արդյունքում: Բռնագանձված ակտիվները չափվում են հաշվեկշռային արժեքից և իրական արժեքից ավելի ցածր արժեքով՝ հանած իրացման ծախսերը:

## 4.18 Ներգրավված միջոցներ

Ներգրավված միջոցները, որոնք ներառում են ՀՀ կառավարության և կենտրոնական բանկի, այլ ֆինանսական կազմակերպությունների և հաճախորդների հաշիվները, սկզբնապես ճանաչվում են ստացված միջոցների իրական արժեքով՝ հանած գործառնությունների գծով ուղղակի ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո ներգրավված միջոցները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Եկամուտները և ծախսերը գրանցվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների հաշվետվությունում, ինչպես պարտավորությունների ապաճանաչման ժամանակ, այնպես էլ ամորտիզացիայի ընթացքում:

## 4.19 Ֆինանսական երաշխիքներ

Ֆինանսական երաշխիքների պայմանագրերը այն պայմանագրերն են, որոնք պահանջում են, որ երաշխիքը տրամադրողը փոխհատուցի երաշխիքը ստացողին կոնկրետ պարտապանի կողմից պարտքային գործիքի ժամկետներին համաձայն վճարումները ժամանակին չկատարելու պատճառով վերջինիս կողմից կրած վնասների դիմաց: Նման ֆինանսական երաշխիքներ տրամադրվում են բանկերին, ֆինանսական և այլ կազմակերպություններին հաճախորդների վարկերը, օվերդրաֆտները և այլ բանկային գործիքները ապահովելու նպատակով:

Ֆինանսական երաշխիքները ֆինանսական հաշվետվություններում սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով «Այլ պարտավորություններ»-ում՝ որպես կոմիսիոն վճար: Սկզբնական ճանաչումից հետո Խումբը յուրաքանչյուր երաշխավորության տակ պարտավորությունը չափում է ամորտիզացված վճարից և երաշխավորության արդյունքում առաջացած ցանկացած ֆինանսական պարտավորություն լուծելու համար անհրաժեշտ ելքերի լավագույն գնահատումից առավելագույնով:

## 4.20 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Խումբն ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, և պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

## 4.21 Բաժնետիրական կապիտալ

*Բաժնետիրական կապիտալ*

Նոր բաժնետոմսերի թողարկմանը, բացի կազմակերպությունների միավորման դեպքում թողարկվող բաժնետոմսերի, վերաբերող ուղղակի ծախսերը նվազեցվում են կապիտալի աճից: Երբ թողարկման արդյունքում ստացված գումարների իրական արժեքը գերազանցում է բաժնետոմսերի անվանական արժեքը, տարբերությունը հաշվառվում է որպես հավելավճար:

*Շահաբաժիններ*

Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով շահաբաժինները դուրս են գրվում կապիտալից և ճանաչվում են որպես պարտավորություն, միայն երբ դրանք հաստատվում են հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով կամ մինչև այդ: Մինչև հաշվապահական հաշվեկշռի ամսաթիվը հայտարարված կամ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո, բայց մինչև ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ամսաթիվը հայտարարված կամ հաստատված շահաբաժինները բացահայտվում են:

## 4.22 Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները, եկամուտներն ու ծախսերը հաշվեկշռում ներկայացվում են հաշվանցված, եթե գոյություն ունի օրենսդրորեն հաստատված իրավունք իրականացնելու հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն իրականացնելու հաշվանցում կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը:

Եկամուտները և ծախսերը ներկայացվում են զուտ արժեքի հիման վրա, միայն երբ դա թույլատրվում է համաձայն ՖՀՄՍ, կամ մի խումբ համանման գործարքների օգուտի և վնասի համար, ինչպիսին հանդիսանում է Խմբի առևտրային գործունեությունը:

## 5 Կարևորագույն հաշվապահական գնահատումներ և դատողություններ

ՖՀՄՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Խմբի ղեկավարությունը կատարի կանորագյուն հաշվապահական գնահատումներ, դատողություններ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են թողնում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների ներկայացվող գումարների, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի եկամուտների և ծախսերի վրա: Գնահատումները և դրանց հետ կապված ենթադրությունները, հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, որոնք հիմնավորված են տվյալ պայմաններում, հիմք են հանդիսանում դատողություններ անելու այն ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ, որոնց արժեքը հնարավոր չէ որոշել այլ վստահելի աղբյուրներից: Ամեն դեպքում, չնայած գնահատումները հիմնվում են ղեկավարության կողմից ընթացիկ իրադարձությունների լավագույն պատկերացումների վրա, փաստացի արդյունքները վերջին հաշվով կարող են տարբերվել կատարված գնահատումներից:

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների առումով նշանակալից դատողությունները և գնահատումները ներկայացվում են ստորև:

*Իրական արժեքի չափումը*

Ֆինանսական գործիքների (երբ ակտիվ շուկայի գնանշումներ չկան) և ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքը սահմանելու համար ղեկավարությունն օգտագործում է գնահատման տեխնիկան: Սա ներառում է զարգացող գնահատումները և ենթադրությունները համապատասխան նրան, թե շուկայի մասնակիցները ինչպես կգնահատեն գործիքները: Ղեկավարությունն իր ենթադրություններում որքան հնարավոր է հիմնվում է դիտարկվող տվյալների վրա, սակայն դրանք միշտ չէ, որ հասանելի են: Այդ դեպքում, ղեկավարությունն օգտագործում է իր ունեցած ամենալավ տեղեկատվությունը: Գնահատված իրական արժեքը կարող է տարբերվել փաստացի արժեքից, որը հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ կարող է հասանելի լինել անհատական գործարքների դեպքում (տես՝ ծանոթագրություն 31):

*Ներդրումային արժեթղթերի դասակարգում*

Բանկի ներդրումային արժեթղթերը ներառում են ՀՀ պետական պարտատոմսերը, մուրհակներ և ոչ պետական բաժնետոմսերը: Սկզբնական ճանաչման ժամանակ Բանկը դասակարգում է արժեթղթերը որպես վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ, որոնց իրական արժեքի ճշգրտումն իրականացվում է կապիտալում:

*Կապակցված կողմերի հետ գործառնություններ*

Խումբն իր գործունեության ընթացքում իրականացնում է գործառնություններ կապակցված կողմերի հետ: Գործող շուկայի բացակայության դեպքում Խումբը կատարում է դատողություններ գործառնությունների շուկայական կամ ոչ շուկայական բնույթի վերաբերյալ: Դատողությունները հիմնվում են այլ հաճախորդների հետ նմանատիպ գործառնությունների, ինչպես նաև արդյունավետ դրույքների վերլուծությունների վրա:

*Վարկերի և այլ փոխատվությունների գծով արժեզրկումից պահուստներ*

Խումբը գնահատում է խնդրահարույց վարկերը և փոխատվությունները յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի համար՝ պարզելու համար, թե արդյոք անհրաժեշտ է արժեզրկման պահուստ ձևավորել ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Մասնավորապես, ղեկավարության դատողությունն անհրաժեշտ է ապագա դրամական հոսքերի գումարը և պարբերականությունը գնահատելու համար, երբ անհրաժեշտ է պահանջվող պահուստի չափը որոշել: Նման գնահատումները հիմնված են որոշ գործոնների շուրջ ենթադրությունների վրա և ներկա արդյունքները կարող են տարբեր լինել` հանգեցնելով պահուստում հետագա փոփոխությունների:

Նշանակալի վարկերի և փոխատվությունների համար անհատական ստեղծված հատուկ պահուստներից բացի, Խումբը նաև ստեղծում է արժեզրկման խմբային պահուստներ, այն ռիսկերի գծով, որոնք չնայած որ անհատապես չեն գնահատվել, սակայն պարունակում են չվճարման ավելի մեծ ռիսկ, քան սկզբնապես որոշվել էր: Սա հաշվի է առնում այնպիսի գործոնների ազդեցությունը, ինչպիսիք են վատթարացումը երկրի ռիսկում, արդյունաբերության մեջ և տեխնոլոգիական հնացումը, ինչպես նաև բացահայտված կառուցվածքային թուլությունները կամ դրամական հոսքերի նվազումները:

*Հարկային օրենսդրություն*

ՀՀ հարկային օրենսդրությունը ենթակա է տարակարծիք մեկնաբանությունների: Տես 29 ծանոթագրությունը:

*Կապիտալի գործիք հանդիսացող վաճառքի համար մատչելի ներդրումների արժեզրկում*

Խումբը համարում է կապիտալի գործիք հանդիսացող վաճառքի համար մատչելի ներդրումն արժեզրկված, երբ դրա իրական արժեքի նվազումը էական է կամ կրում է երկարատև բնույթ: Որոշելու համար էական է կամ երկարատև նվազումը` Խումբը կատարում է որոշակի դատողություններ: Այդ դատողությունները կատարելիս, այլ գործոնների հետ մեկտեղ, Խումբը հաշվի է առնում նաև բաժնետոմսերի գնի փոփոխականությունը: Բացի դրանից, արժեզրկումը հնարավոր է, երբ առկա են ապացույցներ, որ վատացել է ֆինանսական վիճակը տվյալ կազմակերպության, արդյունաբերության կամ ճյուղի, որտեղ կատարվել է ներդրումը, կատարվել են փոփոխություններ տեխնոլոգիաներում և գործառնական կամ ֆինանսական դրամական հոսքերում:

*Դուստր ընկերության համախմբում, որտեղ սեփականության իրավունքը կազմում է 50% կամ քիչ*

Խմբի ղեկավարությունը վերանայել է վերահսկողության գնահատումը ՖՀՄՍ 10-ի նախնական կիրառման ժամանակ, այսինքն 2013թ. հունվարի 1-ին, անկախ այն բանից Խումբն ունի վերահսկողություն թե ոչ համապատասխան վերահսկողության նոր սահմանման և ՖՀՄՍ 10-ում բերված կից ուղեցույցի և եզրահանգել է, որ չնայած այն հանգամանքին, որ Բանկի ներդրումը «ԱԿԲԱ ԲՐՈԿ» ՍՊԸ-ում կազմում է 40%, այն համարվել է դուստր կազմակերպություն և համախմբվել այս ֆինանսական հաշվետվություններում, քանի որ մայր կազմակերպությունն ունի քվեարկության իրավունքների կեսից ավելին և իրավազոր է իրացնել քվեարկության իրավունքների մեծամասնությունը տնօրենների խորհրդի նիստերին և կազմակերպության վերահսկողությունն իրականացվում է այդ խորհրդի միջոցով: Միևնույն ժամանակ Խմբի ղեկավարությունը գտնում է, որ վերոնշյալ ընկերության չվերահսկվող բաժնեմասը Խմբի ֆինանասական հաշվետվություններում ոչ էական է:

Ստորև ներկայացված է «ԱԿԲԱ ԲՐՈԿ» ՍՊԸ-ի հակիրճ ֆինանսական տեղեկատվությունը, մինչ ներխմբային տարանջատումը:

| Հազար ՀՀ դրամ | **2014** | 2013 |
|---|---|---|
| **Ընդամենը ակտիվներ** | **122,668** | 98,697 |
| **Ընդամեը պարտավորություններ** | **4,605** | 3,945 |
| **Մայր կազմակերպությանը վերագրվող սեփական կապիտալ** | **47,225** | 37,901 |
| **Չվերահսկվող բաժնեմասի հաշվեկշռային արժեքը** | **70,838** | 56,851 |

| Հազար ՀՀ դրամ | 2014 | 2013 |
|---|---|---|
| Ընդամենը եկամուտներ | **55,015** | 12,248 |
| Ընդամենը ծախսեր | **(31,704)** | (3,373) |
| Ընդամենը այլ համապարփակ ֆինանսական արդյունք | **-** | - |
| **Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք** | **23,311** | 8,875 |
| **Մայր կազմակերպությանը վերագրվող տարվա համապարփակ ֆինանսական արդյունք** | **9,324** | 3,550 |

2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ մայր կազմակերպությունը իր դուստր ընկերություններից շահաբաժիններ չի ստացել (2013 թվականին` նույնպես):

Սույն ֆինանսական հաշվետվություններում համախմբված դուստր ընկերությունների բաժնեմասերը գնանշված չեն, հետևաբար դրանց շուկայական գինը չի կարող բացահայտվել:

## 6 Տոկոսային և նմանատիպ եկամուտներ և ծախսեր

| Հազար ՀՀ դրամ | 2014 | 2013 |
|---|---|---|
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | **7,627** | 5,974 |
| Ֆինանսական կազմակերպությունների հաշիվներ | **411,595** | 1,046,471 |
| Վարկեր և փոխատվություններ հաճախորդներին | **27,930,515** | 26,059,447 |
| Վաճառքի համար մատչելի պարտքային արժեթղթեր | **699,325** | 822,448 |
| Հակադարձ ռեպո գործառնություններ | **49,918** | 97,874 |
| Անհատապես արժեզրկված ակտիվների գծով հաշվեգրված տոկոսներ | **1,730,924** | 682,808 |
| Այլ տոկոսային եկամուտներ | **39,238** | 60,251 |
| **Ընդամենը տոկոսային և նմանատիպ եկամուտներ** | **30,869,142** | 28,775,273 |
| | | |
| Հաճախորդների հաշիվներ | **6,307,992** | 5,871,230 |
| Ֆինանսական կազմակերպությունների հաշիվներ | **7,186,795** | 7,206,527 |
| Ռեպո գործառնություններ | **81,392** | - |
| Այլ տոկոսային ծախսեր | **142,987** | 126,818 |
| **Ընդամենը տոկոսային և նմանատիպ ծախսեր** | **13,719,166** | 13,204,575 |

## 7 Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ և ծախսեր

| Հազար ՀՀ դրամ | 2014 | 2013 |
|---|---|---|
| Դրամարկղային գործառնություններ | **141,538** | 129,115 |
| Հաշվարկային գործառնություններ/փոխանցումներ | **590,855** | 571,800 |
| Բանկային հաշիվների սպասարկման վճարներ | **463,652** | 429,615 |
| Վճարային քարտերով գործառնություններ | **1,573,982** | 1,534,714 |
| Ֆինանսական լիզինգի գծով վճարներ | **71,159** | 18,179 |
| Այլ վճարներ և կոմիսիոն եկամուտներ | **62,759** | 30,662 |
| **Ընդամենը կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ** | **2,903,945** | 2,714,085 |
| | | |
| Հաշվարկային գործառնություններ/փոխանցումներ | **123,785** | 100,275 |
| Դրամարկղային գործառնություններ | **35,727** | 29,122 |
| Վճարային քարտերով գործառնություններ | **904,272** | 895,421 |
| Բանկային հաշիվների սպասարկում | **26,223** | 17,393 |
| Այլ ծախսեր | **2,120** | 2,763 |
| **Ընդամենը կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր** | **1,092,127** | 1,044,974 |

## 8 Զուտ առևտրային եկամուտ

| Հազար ՀՀ դրամ | 2014 | 2013 |
|---|---|---|
| Արտարժույթի առք ու վաճառքից զուտ եկամուտ | **1,335,598** | 1,158,096 |
| Ածանցյալ գործիքներից զուտ վնաս | **(86,263)** | (147,370) |
| Ածանցյալ գործիքների իրական արժեքի փոփոխությունից եկամուտ/(վնաս) | **(538,719)** | 238,424 |
| **Ընդամենը զուտ առևտրային եկամուտ** | **710,616** | 1,249,150 |

## 9 Այլ եկամուտներ

| Հազար ՀՀ դրամ | 2014 | 2013 |
|---|---|---|
| Ստացված տույժեր և տուգանքներ | **1,445,648** | 914,602 |
| Ոչ առևտրային ակտիվների և պարտավորությունների արտարժութային փոխարկումներից զուտ օգուտ | **1,346,638** | - |
| Երաշխիքներից և ակրեդիտիվներից | **66,031** | 72,281 |
| Շահաբաժիններից եկամուտ | **3,321** | 2,627 |
| Ֆինանսական վարձակալության առարկայի իրացումից եկամուտ | **11,353** | 16,366 |
| Այլ ակտիվների օտարումից եկամուտներ | **2,529** | 7,603 |
| Այլ եկամուտ | **123,856** | 152,365 |
| **Ընդամենը այլ եկամուտներ** | **2,999,376** | 1,165,844 |

## 10 Ակտիվների հնարավոր կորուստների արժեզրկման ծախս

| Հազար ՀՀ դրամ | 2014 | 2013 |
|---|---|---|
| Վարկեր և փոխատվություններ հաճախորդներին (ծանոթագրություն 17) | **10,755,238** | 1,328,669 |
| Այլ ակտիվներ (ծանոթագրություն 22) | **48,147** | 17,159 |
| Տրամադրված երաշխավորություններ (ծանոթագրություն 29) | **-** | 126,000 |
| **Ընդամենը վարկային կորուստների արժեզրկման ծախս** | **10,803,385** | 1,471,828 |

## 11 Անձնակազմի գծով ծախսեր

| Հազար ՀՀ դրամ | 2014 | 2013 |
|---|---|---|
| Աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարներ | **5,751,216** | **6,377,332** |
| Այլ ծախսեր | **154,110** | **158,857** |
| **Ընդամենը անձնակազմի գծով ծախսեր** | **5,905,326** | **6,536,189** |

## 12 Այլ ծախսեր

| Հազար ՀՀ դրամ | 2014 | 2013 |
|---|---|---|
| Ոչ առևտրային ակտիվների և պարտավորությունների արտարժութային փոխարկումներից զուտ վնաս | **-** | 321,203 |
| Ամորտիզացված արժեքով հաշվառվող ակտիվների սկզբնական ճանաչումից վնաս | **80,359** | 135,699 |
| Նյութական ակտիվների վերանորոգման և սպասարկման ծախսեր | **520,246** | 398,284 |
| Գովազդի և ներկայացուցչական ծախսեր | **809,180** | 563,815 |
| Գործուղման ծախսեր | **149,386** | 171,568 |
| Կապի և հաղորդակցման միջոցների գծով ծախսեր | **271,613** | 270,447 |
| Վարձակալության գծով ծախսեր | **338,206** | 129,474 |
| Հարկեր, (բացառությամբ շահութահարկի) և տուրքեր | **561,892** | 597,812 |
| Խորհրդատվական և այլ ծառայությունների գծով ծախսեր | **47,194** | 33,731 |
| Անվտանգության գծով ծախսեր | **282,623** | 246,852 |

| Հազար ՀՀ դրամ | 2014 | 2013 |
|---|---|---|
| Հիմնական միջոցների օտարումից կորուստներ | **15,535** | 2,912 |
| Ոչ նյութական ակտիվների արժեզրկումից վնասներ | **244** | 1,240 |
| Գրասենյակային ծախսեր | **181,801** | 209,740 |
| Վճարված տուգանքներ | **2,395** | 9,877 |
| Ինկասացիայի գծով ծախսեր | **123,221** | 117,944 |
| Ապահովագրության գծով ծախսեր | **118,994** | 97,626 |
| Ֆինանսական հաշտարարին վճարներ | **35,084** | 31,855 |
| Քարտերի սպասարկման գծով | **28,808** | 21,079 |
| Ակտիվների արժեզրկում | **68,658** | 43,360 |
| Այլ ծախսեր | **187,965** | 105,628 |
| **Ընդամենը այլ ծախսեր** | **3,823,404** | 3,510,146 |

## 13 Շահութահարկի գծով ծախս

| Հազար ՀՀ դրամ | 2014 | 2013 |
|---|---|---|
| Ընթացիկ հարկ | **70,074** | 1,644,863 |
| Նախորդ տարիների շահութահարկի ճշգրտում | | 4,509 |
| Հետաձգված հարկ | **(29,229)** | (65,621) |
| **Ընդամենը շահութահարկի գծով ծախս** | **40,845** | 1,583,751 |

Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի դրույքաչափը կազմում է 20% (2013թ.՝ 20%)։ ՀՀ հարկային օրենսդրության և ՖՀՄՍ-ի միջև եղած տարբերությունը մի շարք ակտիվների և պարտավորությունների գծով առաջացնում է ժամանակավոր տարբերություններ ֆինանսական հաշվետվությունների կազման նպատակներով դրանց հաշվեկշռային արժեքների և հարկման բազայի միջև: Հետաձգված շահութահարկի գումարը հաշվարկվում է 20% հիմնական դրույքաչափը կիրառելով:

Ստորև ներկայացվում է շահութահարկի գծով ծախսի և հաշվապահական շահույթի միջև փոխկապակցվածությունը.

| Հազար ՀՀ դրամ | 2014 | Արդյունավետ դրույքաչափ (%) | 2013 | Արդյունավետ դրույքաչափ (%) |
|---|---|---|---|---|
| **Շահույթ մինչև հարկումը** | **346,669** | | 6,582,837 | |
| Շահութահարկ՝ 20% դրույքաչափով | **69,334** | **20** | 1,316,567 | 20 |
| Ածանցյալ գործիքների իրական արժեքի փոփոխությունից (դրական)/բացասական արդյունք | **107,744** | **31** | (47,685) | (1) |
| Չնվազեցվող ծախսեր | **133,095** | **38** | 246,120 | 4 |
| Բացասական/(դրական) փոխարժեքային տարբերություն | **(269,328)** | **(77)** | 64,240 | 1 |
| Նախորդ տարիների շահութահարկի ճշգրտում | **-** | **-** | 4,509 | - |
| **Ընդամենը շահութահարկի գծով ծախս** | **40,845** | **12** | 1,583,751 | 24 |

*Ժամանակավոր տարբերությունների գծով հետաձգված հարկի հաշվարկ.*

| Հազար ՀՀ դրամ | 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | Շահույթում կամ վնասում ճանաչված | Այլ համապարփակ արդյունքում ճանաչված | 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|---|---|
| Կուտակված ծախսեր և այլ պարտավորություններ | **84,239** | **(20,906)** | **-** | **63,333** |
| Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ | **90,751** | **(67,291)** | **-** | **23,460** |
| Ներդրում ասոցիացված ընկերությունում | **-** | **23,194** | **(185)** | **23,009** |
| Հարկային վնաս | **-** | **705,063** | **-** | **705,063** |
| Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների և հաճախորդների նկատմամբ | **55,732** | **(55,732)** | **-** | **-** |
| **Ընդամենը հետաձգված հարկային ակտիվ** | **230,722** | **584,328** | **(185)** | **814,865** |
| Պայմանական պարտավորություններ | **(33,935)** | **(8,225)** | **-** | **(42,160)** |
| Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ և այլ ակտիվներ | **(64,385)** | **303** | **-** | **(64,082)** |
| Վաճառքի համար մատչելի ներդրումներ | **(183,572)** | **-** | **40,826** | **(142,746)** |
| Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ | **-** | **(598,566)** | **-** | **(598,566)** |
| Հիմնական միջոցներ | **(698,798)** | **52,525** | **-** | **(646,273)** |
| Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների և հաճախորդների նկատմամբ | **-** | **(1,136)** | **-** | **(1,136)** |
| **Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություն** | **(980,690)** | **(555,099)** | **40,826** | **(1,494,963)** |
| **Զուտ հետաձգված հարկային պարտավորություն** | **(749,968)** | **29,229** | **40,641** | **(680,098)** |

| Հազար ՀՀ դրամ | 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | Շահույթում կամ վնասում ճանաչված | Այլ համապարփակ արդյունքում ճանաչված | 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|---|---|
| Կուտակված ծախսեր և այլ պարտավորություններ | 80,211 | 4,028 | - | 84,239 |
| Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ | 164,406 | (73,655) | - | 90,751 |
| Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների և հաճախորդների նկատմամբ | - | 55,732 | - | 55,732 |
| **Ընդամենը հետաձգված հարկային ակտիվ** | 244,617 | (13,895) | - | 230,722 |
| Պայմանական պարտավորություններ | (30,929) | (3,006) | - | (33,935) |
| Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ և այլ ակտիվներ | (69,631) | 5,246 | - | (64,385) |
| Վաճառքի համար մատչելի ներդրումներ | (111,330) | - | (72,242) | (183,572) |
| Հիմնական միջոցներ | (743,452) | 44,654 | - | (698,798) |
| Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների և հաճախորդների նկատմամբ | (32,622) | 32,622 | - | - |
| **Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություն** | (987,964) | 79,516 | (72,242) | (980,690) |
| **Զուտ հետաձգված հարկային պարտավորություն** | (743,347) | 65,621 | (72,242) | (749,968) |

## 14 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

| Հազար ՀՀ դրամ | 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| Կանխիկ դրամական միջոցներ | **9,645,111** | 9,854,536 |
| Թղթակցային հաշիվներ ՀՀ ԿԲ-ում | **42,970,695** | 35,734,043 |
| Թղթակցային հաշիվներ այլ բանկերում | **9,103,002** | 17,199,303 |
| Մինչև 90 օր տևողությամբ ավանդային հաշիվներ բանկերում | **2,850,244** | - |
| **Ներառվում է դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում** | **64,569,052** | 62,787,882 |

Թղթակցային հաշիվները ՀՀ ԿԲ-ում ներառում են նաև ՀՀ բանկային օրենսդրության համաձայն ՀՀ ԿԲ-ում տեղաբաշխված պարտադիր պահուստները, որոնք 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվարկվել են Բանկի կողմից ներգրաված դրամային որոշ միջոցների 2%-ի (2013թ.՝ 4%) և արտարժույթով որոշ միջոցների 20%-ի չափով ամբողջությամբ ՀՀ դրամով: Այդ միջոցները 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում են 27,674,033 հազար դրամ (2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 16,792,446 հազար դրամ): Այդ միջոցների ելքագրումն արգելված չէ, սակայն պահուստավորման նվազագույն չափը չպահպանելը հանգեցնում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից տույժերի կիրառման: Պարտադիր պահուստավորման միջոցների դիմաց Խումբը տոկոսներ չի ստանում:

2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 7,628,383 հազար դրամ գումարով (83%) թղթակցային հաշիվները կենտրոնացված են 4 բանկերում (2013թ.՝ 15,960,568 հազար դրամ (93%) 5 բանկերում):

2014թ. ընթացքում իրականացվել է անկանխիկ եղանակով վարկային պարտավորությունների մարում հիմնական միջոցների տրամադրման միջոցով 197,577 հազար դրամ գումարով (2013թ.՝ 250,086 հազար դրամ) :

## 15 Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

| Հազար ՀՀ դրամ | 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| Դեպոնացված միջոցներ ՀՀ ԿԲ-ում | **510,000** | 510,000 |
| Ֆինանսական կազմակերպություններին տրամադրված վարկեր | **12,246,917** | 8,584,395 |
| Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ | **-** | 467,345 |
| Այլ պահանջներ | **227,149** | 108,691 |
| **Ընդամենը պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ** | **12,984,066** | 9,670,431 |

Դեպոնացված գումարը ՀՀ ԿԲ-ում իրենից ներկայացնում է ԱրՔա վճարային համակարգով իրականացվող փոխհաշվարկների երաշխիքային ավանդ:

2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական կազմակերպություններին տրամադրված վարկեր տողում ներառված են Բանկի կողմից տրամադրված երաշխիքային գումարները 167,240 հազար դրամ գումարով VISA վճարահաշվարկային համակարգով և 113,921 հազար դրամ MasterCard վճարահաշվարկային համակարգով գործառնություններ իրականացնելու նպատակով (2013թ. 142,828 հազար դրամ գումարով VISA վճարահաշվարկային համակարգով և և 97,293 հազար դրամ MasterCard վճարահաշվարկային համակարգով):

2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հակադարձ ռեպո համաձայնագրերով գնված արժեթղթերի իրական արժեքը և տրամադրված վարկերի հաշվեկշռային արժեքը ներկայացվում է ստորև.

| Հազար ՀՀ դրամ | 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | | 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | |
|---|---|---|---|---|
| | Գրավի իրական արժեքը | Վարկի գումարը | Գրավի իրական արժեքը | Վարկի գումարը |
| ՀՀ պետական պարտատոմսեր | - | - | 473,138 | 467,345 |

## 16 Ածանցյալ ֆինանսական գործիքներ

| Հազար ՀՀ դրամ | 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | | | 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Պայմանա-կան գումար | Ակտիվների իրական արժեք | Պարտավ. իրական արժեք | Պայմանա-կան գումար | Ակտիվների իրական արժեք | Պարտավ. իրական արժեք |
| **Առևտրային նպատակներով պահվող ածանցյալ գործիքներ** | | | | | | |
| Սվոփեր-արժութային | **1,187,425** | **149,303** | **-** | - | - | - |
| Սվոփեր-տոկոսադրույքի | **3,562,275** | **-** | **-** | 9,126,900 | - | 22,231 |
| **Ընդամենը ածանցյալ ֆինանսական գործիքներ** | **4,749,700** | **149,303** | **-** | 9,126,900 | - | 22,231 |

2011թ-ին Բանկը IFC-ի հետ կնքել է տոկոսադրույքի սվոփի պայմանագիր, որի մնացորդը 2014թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում է 7,500,000 ԱՄՆ դոլար (2013թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում էր է 22,500,000 ԱՄՆ դոլար)՝ վճարելով ֆիքսված տոկոսադրույք, ստանալով լողացող տոկոսադրույք:

## 17 Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ

| Հազար ՀՀ դրամ | 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| Վարկեր | **178,122,671** | 160,491,059 |
| Ֆինանսական վարձակալություն | **8,885,896** | 7,774,381 |
| Ֆակտորինգ | **7,591,142** | 4,311,253 |
| | **194,599,709** | 172,576,693 |
| Արժեզրկումից պահուստներ վարկերի և փոխատվությունների գծով | **(10,252,718)** | (3,294,214) |
| **Ընդամենը հաճախորդներին տրված  վարկեր և փոխատվություններ** | **184,346,991** | 169,282,479 |

2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդներին տրված վարկերում և փոխատվություններում ներառված հաշվեգրված տոկոսները կազմում են 4,271,105 հազար դրամ (2013թ.՝ 3,042,726 հազար դրամ):

2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքները կազմում են ՀՀ դրամով վարկերի համար 17.70% (2013թ.՝  18.14%) և ԱՄՆ դոլարով, Եվրոյով և այլ ազատ փոխարկելի արտարժույթով վարկերի համար  13.82% (2013թ.՝ 13.01%):

2014թ. և 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբը չունի վարկային պորտֆելի էական կենտրոնացում՝ ըստ վարկառուների թվաքանակի:

Տրամադրված վարկերի և փոխատվությունների վերլուծությունն ըստ տնտեսության ճյուղերի ունի հետևյալ տեսքը.

| Հազար ՀՀ դրամ | **2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| Արդյունաբերություն | **30,402,109** | 31,432,262 |
| Գյուղատնտեսություն | **69,584,649** | 52,346,877 |
| Շինարարություն | **4,073,027** | 6,330,711 |
| Առևտուր | **22,328,670** | 20,800,907 |
| Տրանսպորտ | **3,830,956** | 4,635,742 |
| Ծառայություններ | **6,886,299** | 5,602,147 |
| Հիփոթեքային | **6,086,068** | 4,945,116 |
| Սպառողական | **50,881,950** | 46,314,087 |
| Այլ | **525,981** | 168,844 |
| | **194,599,709** | 172,576,693 |
| Արժեզրկումից պահուստներ վարկերի և փոխատվությունների գծով | **(10,252,718)** | (3,294,214) |
| **Ընդամենը վարկեր և փոխատվություններ** | **184,346,991** | 169,282,479 |

Վարկերի և փոխատվությունների գծով արժեզրկման պահուստի շարժն ըստ դասերի հետևյալն է.

| Հազար ՀՀ դրամ | Արդյունաբերություն | Գյուղատնտեսություն | Շինարարություն | Առևտուր | Տրանսպորտ | Ծառայություններ | Հիփոթեքային | Սպառողական | Այլ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | **2014** |
| 2014թ. հունվարի 1 դրությամբ | **1,588,242** | **516,542** | **76,486** | **407,068** | **85,737** | **66,191** | **55,133** | **486,918** | **11,897** | **3,294,214** |
| Տարվա ծախս/(հակադարձում) | **5,482,649** | **538,044** | **(15,287)** | **859,552** | **247,321** | **488,918** | **238,812** | **2,913,645** | **1,584** | **10,755,238** |
| Զուտ դուրսգրում | **(305,830)** | **(237,444)** | **(2,799)** | **(401,113)** | **(205,084)** | **(227,556)** | **(204,931)** | **(2,203,755)** | **(8,222)** | **(3,796,734)** |
| 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | **6,765,061** | **817,142** | **58,400** | **865,507** | **127,974** | **327,553** | **89,014** | **1,196,808** | **5,259** | **10,252,718** |
| Անհատական արժեզրկում | **6,620,638** | **130,794** | **21,574** | **656,134** | **14,298** | **267,199** | **-** | **393,346** | **-** | **8,103,983** |
| Խմբային արժեզրկում | **144,423** | **686,348** | **36,826** | **209,373** | **113,676** | **60,354** | **89,014** | **803,462** | **5,259** | **2,148,735** |
| | **6,765,061** | **817,142** | **58,400** | **865,507** | **127,974** | **327,553** | **89,014** | **1,196,808** | **5,259** | **10,252,718** |
| Անհատապես արժեզրկված վարկերի համախառն գումար (մինչև անհատապես գնահատված արժեզրկման պահուստներով զտելը) | **15,959,735** | **949,914** | **390,402** | **1,391,378** | **66,403** | **1,757,133** | **-** | **778,104** | **-** | **21,293,069** |

2013

| Հազար ՀՀ դրամ | Արդյունա-բերություն | Գյուղատնտե-սություն | Շինարա-րություն | Առևտուր | Տրանսպորտ | Ծառայու-թյուններ | Հիփոթե-քային | Սպառո-ղական | Այլ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2013թ. Հունվարի 1 դրությամբ | 356,271 | 518,943 | 252,248 | 868,851 | 97,204 | 64,264 | 81,490 | 398,920 | 3,629 | 2,641,820 |
| Տարվա ծախս/(հակադարձում) | 1,146,678 | 214,200 | (113,324) | (298,895) | 31,242 | (34,204) | (42,551) | 419,003 | 6,520 | 1,328,669 |
| Դուրսգրում | (156,426) | (553,540) | (62,438) | (447,700) | (214,713) | (5,294) | (147,521) | (452,242) | - | (2,039,874) |
| Վերադարձ | 241,719 | 336,939 | - | 284,812 | 172,004 | 41,425 | 163,715 | 121,237 | 1,748 | 1,363,599 |
| 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 1,588,242 | 516,542 | 76,486 | 407,068 | 85,737 | 66,191 | 55,133 | 486,918 | 11,897 | 3,294,214 |
| Անհատական արժեզրկում | 1,358,000 | - | - | 211,474 | 25,740 | 3,488 | 1,292 | 24,017 | - | 1,624,011 |
| Խմբային արժեզրկում | 230,242 | 516,542 | 76,486 | 195,594 | 59,997 | 62,703 | 53,841 | 462,901 | 11,897 | 1,670,203 |
| | 1,588,242 | 516,542 | 76,486 | 407,068 | 85,737 | 66,191 | 55,133 | 486,918 | 11,897 | 3,294,214 |
| Անհատապես արժեզրկված վարկերի համախառն գումար (մինչև անհատապես գնահատված արժեզրկման պահուստներով զտելը) | 7,145,144 | - | - | 451,094 | 214,320 | 39,405 | 50,414 | 24,017 | - | 7,924,394 |

Տրամադրված վարկերի և փոխատվությունների վերլուծությունն ըստ հաճախորդների ունի հետևյալ տեսքը.

| Հազար ՀՀ դրամ | **2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| Պետության մասնակցությամբ | **17,057** | 22,057 |
| Մասնավոր ձեռնարկություններ | **64,406,761** | 60,449,746 |
| Ֆիզիկական անձիք | **118,518,715** | 101,760,114 |
| Անհատ ձեռնարկատերեր | **11,485,559** | 10,189,998 |
| Ոչ առևտրային կազմակերպություններ | **171,617** | 154,778 |
| | **194,599,709** | 172,576,693 |
| Արժեզրկումից պահուստներ վարկերի և փոխատվությունների գծով | **(10,252,718)** | (3,294,214) |
| **Ընդամենը վարկեր և փոխատվություններ** | **184,346,991** | 169,282,479 |

Ֆիզիկական անձանց տրամադրված վարկերը ներկայացվում են ստորև.

| Հազար ՀՀ դրամ | **2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| Գյուղատնտեսական | **62,725,520** | 52,004,677 |
| Հիփոթեքային | **6,077,543** | 5,625,047 |
| Սպառողական | **49,527,875** | 44,090,841 |
| Այլ | **187,777** | 39,549 |
| Ընդամենը ֆիզիկական անձանց տրամադրված վարկեր | **118,518,715** | 101,760,114 |

Ֆինանսական վարձակալության գծով տեղեկատվությունը ներկայացվում է ստորև.

| Հազար ՀՀ դրամ | **2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| **Ֆինանսական վարձակալության գծով համախառն ներդրումներ** | | |
| Մինչև 1 տարի | **3,343,987** | 3,325,428 |
| 1-5 տարի | **7,271,803** | 6,053,066 |
| 5 տարուց ավել | **75,881** | 232,666 |
| | **10,691,671** | 9,611,160 |
| Ֆինանսական վարձակալության գծով չվաստակած ապագա ֆինանսական եկամուտ | **(1,805,775)** | (1,836,779) |
| Ֆինանսական վարձակալության գծով զուտ ներդրումներ | **8,885,896** | 7,774,381 |
| Արժեզրկումից պահուստներ ֆինանսական վարձակալության գծով | **(170,573)** | (127,501) |
| **Ֆինանսական վարձակալության գծով զուտ ներդրումներ** | **8,715,323** | 7,646,880 |

Ֆինանսական վարձակալության գծով արժեզրկումից պահուստները ներառված են վարկերի և փոխատվությունների գծով արժեզրկումից պահուստում:

Ֆինանսական վարձակալության գծով ենթադրվող տոկոսադրույքը կազմում է 11.6% (2013թ.՝ 12.5%):

Տրամադրված վարկերի և փոխատվությունների ժամկետային վերլուծությունը տես ծանոթագրություն 33-ում:

Ինչպես նշված է 31 ծանոթագրությունում, 2014թ. և 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վարկերի և փոխատվությունների գնահատված իրական արժեքը մոտ է դրանց հաշվեկշռային արժեքին:

Վարկային պորտֆելին ներհատուկ վարկային, արժութային և տոկոսային ռիսկը բացահայտված է 34 ծանոթագրությունում: Տեղեկատվությունը կապակցված անձանց վերաբերյալ բացահայտված է 30 ծանոթագրությունում:

## 18 Վաճառքի համար մատչելի ներդրումներ

| Հազար ՀՀ դրամ | **2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| **Չգնանշվող ներդրումներ** | | |
| ՀՀ կազմակերպությունների բաժնետոմսեր | **63,818** | 63,818 |
| ՀՀ պետական պարտատոմսեր | **-** | 6,175,748 |
| ՀՀ ֆինանսների նախարարության կողմից թողարկված մուրհակներ | **-** | 3,918 |
| **Գնանշվող ներդրումներ** | | |
| ՀՀ պետական արտարժույթային պարտատոմսեր | **1,070,416** | - |
| Այլ երկրների կազմակերպությունների պարտատոմսեր | **-** | 400,935 |
| Այլ երկրների կազմակերպությունների բաժնետոմսեր | **819,828** | 594,629 |
| **Ընդամենը ներդրումներ** | **1,954,062** | 7,239,048 |

Բոլոր պարտքային արժեթղթերն ունեն հաստատուն տոկոսներ:

Չգնանշվող վաճառքի համար մատչելի պարտքային արժեթղթերը չափվում են իրական արժեքով, օգտագործելով գնահատման տեխնիկա՝ հիմնված տվյալ պահին գործող շուկայական տոկոսադրույքների վրա, որպես տվյալ ֆինանսական գործիքի ապագա դրամական հոսքերի զեղչատոկոս:

Բոլոր չգնանշված վաճառքի համար մատչելի ՀՀ կազմակերպությունների բաժնեմասային արժեթղթերը գրանցված են ինքնարժեքով, հանած արժեզրկումից կորուստները, քանի որ իրական արժեքը չի կարող արժանահավատորեն գնահատվել: Այս ներդրումների համար չկա գնանշվող շուկա և Խումբը նախատեսում է դրանք պահել երկար ժամկետով:

Վաճառքի համար մատչելի պարտքային արժեթղթերն ըստ արդյունավետ տոկոսադրույքների և ժամկետների ներառում են.

| Հազար ՀՀ դրամ | **2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | | 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | |
|---|---|---|---|---|
| | **%** | **Ժամկետ** | % | Ժամկետ |
| ՀՀ պետական պարտատոմսեր | **-** | **-** | 7.82-10.10% | 2014-2018 |
| ՀՀ պետական արտարժույթային պարտատոմսեր | **6.36%** | **2020** | - | - |
| ՀՀ ֆինանսների նախարարության կողմից թողարկված մուրհակներ | **-** | **-** | 8.0% | 2014 |

Վաճառքի համար մատչելի պարտքային արժեթղթերը 7,253,389 հազար դրամով իրական արժեքով (2013թ.՝ ոչինչ) վաճառվել են երրորդ անձանց ռեպո համաձայնագրերով՝ 6 ամիսը չգերազանցող ժամանակահատվածներով: Դրանք վերադասակարգվել են որպես ռեպո համաձայնագրերով գրավադրված արժեթղթեր հաշվապահական հաշվեկշռում՝ առանձին տողում (Ծանոթ. 27):

## 19 Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում

| Անվանումը | Հիմնական գործունեությունը | **31 դեկտեմբերի 2014թ.** | | |
|---|---|---|---|---|
| | | **Գրանցման երկիրը** | **Ներդրումը (հազ.դրամ)** | **Բաժնեմասը (%)** |
| **«ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ** | **Ներդրումային ֆոնդերի կառավարիչ** | **ՀՀ** | **276,955** | **49%** |

| Անվանումը | Հիմնական գործունեությունը | 31 դեկտեմբերի 2013թ. | | |
|---|---|---|---|---|
| | | Գրանցման երկիրը | Ներդրումը (հազ.դրամ) | Բաժնեմասը (%) |
| «ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ | Ներդրումային ֆոնդերի կառավարիչ | ՀՀ | 384,485 | 49% |

Ֆինանսական հաշվետվություններում բաժնեմասնակցության մեթոդով հաշվառված ներդրումների շարժը ներկայացվում է ստորև.

| Հազար ՀՀ դրամ | **2014** | 2013 |
|---|---|---|
| **01 հունվարի դրությամբ** | **384,485** | - |
| Ձեռքբերման գինը | **-** | 392,000 |
| Ասոցիացված կազմակերպությունների գործունեությունից վնաս | **(108,457)** | (7,515) |
| Ասոցիացված կազմակերպությունների գործունեությունից օգուտ այլ համապարփակ արդյունքներում | **927** | - |
| **31 դեկտեմբերի դրությամբ** | **276,955** | 384,485 |

Ստորև ներկայացվում է ասոցիացված ընկերությունների վերաբերյալ ֆինանսական տեղեկատվությունը.

| Հազար ՀՀ դրամ | 2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար | 2013թ. նոյեմբերի 19-ից 2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտված ժամանակաշրջանի համար |
|---|---|---|
| Զուտ տոկոսային եկամուտներ | **38,411** | 3,790 |
| Զուտ կոմիսիոն և այլ եկամուտներ /( ծախսեր) | **15,895** | (101) |
| Անձնակազմի գծով ծախսեր | **(169,192)** | - |
| Այլ ծախսեր | **(90,571)** | (15,337) |
| **Վնաս մինչև հարկում** | **(205,457)** | (11,648) |
| Շահութահարկի գծով ծախս | **-** | - |
| **Տարվա վնաս** | **(205,457)** | (11,648) |
| **Այլ համապարփակ ֆինանսական արդյունք** | | |
| *Հոդվածներ, որոնք հետագայում վերադասակարգվելու են շահույթում կամ վնասում* | | |
| Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի փոփոխությունից չվաստակված զուտ օգուտ | **1,891** | - |
| **Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկումից հետո** | **1,891** | **-** |
| **Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք** | **(203,566)** | (11,648) |

| Հազար ՀՀ դրամ | 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| **ԱԿՏԻՎՆԵՐ** | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | **102,907** | 788,720 |
| Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ | **204,338** | - |
| Վաճառքի համար մատչելի ներդրումներ | **221,891** | - |
| Հիմնական միջոցներ | **54,834** | - |
| Այլ ակտիվներ | **19,679** | - |
| **Ընդամենը՝ ակտիվներ** | **603,649** | 788,720 |
| **ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ** | | |
| **Պարտավորություններ** | | |
| Այլ պարտավորություններ | **18,863** | 368 |
| **Ընդամենը՝ պարտավորություններ** | **18,863** | **368** |
| **Սեփական կապիտալ** | | |
| Կանոնադրական կապիտալ | **800,000** | 800,000 |
| Այլ պահուստներ | **1,891** | - |
| Չբաշխված շահույթ | **(217,105)** | **(11,648)** |
| **Ընդամենը՝ սեփական կապիտալ** | **584,786** | **788,352** |
| **Ընդամենը՝ պարտավորություններ և սեփական կապիտալ** | **603,649** | 788,720 |

## 20 Հիմնական միջոցներ

| | Հող և շենքեր | Սարքա-վորումներ | Փոխադրա-միջոցներ | Կապիտալ ներդրումներ վարձակալված հիմնական միջոցների վրա | Այլ հիմնական միջոցներ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|
| ՍԿԶԲՆԱԿԱՆ/ՎԵՐԱԳՆԱՀԱՏՎԱԾ ԱՐԺԵՔ | | | | | | |
| 2013թ. հունվարի 1-ի դրությամբ | 13,186,889 | 3,351,786 | 358,934 | 3,392 | 1,519,941 | 18,420,942 |
| Ավելացում | 528,065 | 734,151 | 28,658 | 36,638 | 189,563 | 1,517,075 |
| Օտարում | - | (1,294) | (6,301) | - | (11,197) | (18,792) |
| **2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **13,714,954** | **4,084,643** | **381,291** | **40,030** | **1,698,307** | **19,919,225** |
| Ավելացում | **74,770** | **553,661** | **40,208** | **206,509** | **403,002** | **1,278,150** |
| Օտարում | **(45,085)** | **(68,231)** | **(8,000)** | **-** | **(10,003)** | **(131,319)** |
| **2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **13,744,639** | **4,570,073** | **413,499** | **246,539** | **2,091,306** | **21,066,056** |
| ԿՈՒՏԱԿՎԱԾ ՄԱՇՎԱԾՈՒԹՅՈՒՆ | | | | | | |
| 2013թ. հունվարի 1-ի դրությամբ | 1,329,238 | 1,155,024 | 198,705 | 414 | 534,033 | 3,217,414 |
| Հատկացումներ | 549,486 | 421,076 | 71,730 | 400 | 278,992 | 1,321,684 |
| Օտարում | - | (888) | (4,581) | - | (7,624) | (13,093) |
| **2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **1,878,724** | **1,575,212** | **265,854** | **814** | **805,401** | **4,526,005** |
| Հատկացումներ | **571,699** | **494,746** | **72,231** | **5,813** | **310,731** | **1,455,220** |
| Օտարում | **(3,589)** | **(57,241)** | **(7,788)** | **-** | **(9,226)** | **(77,844)** |
| **2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **2,446,834** | **2,012,717** | **330,297** | **6,627** | **1,106,906** | **5,903,381** |
| ՄՆԱՑՈՐԴԱՅԻՆ ԱՐԺԵՔ | | | | | | |
| **2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **11,297,805** | **2,557,356** | **83,202** | **239,912** | **984,400** | **15,162,675** |
| 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 11,836,230 | 2,509,431 | 115,437 | 39,216 | 892,906 | 15,393,220 |
| 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 11,857,651 | 2,196,762 | 160,229 | 2,978 | 985,908 | 15,203,528 |

*Ակտիվների վերագնահատում*

Հիմնական միջոցների վերագնահատումը կատարվել է 2009թ. հունիսի 18-ին «Արթին Էնթրփրայս» ՍՊԸ անկախ գնահատողների կողմից՝ կիրառելով համեմատական, ծախսային և եկամտային մեթոդները, որի արդյունքում առաջացել է վերագնահատում 4,163,764 հազար դրամ գումարով: Իրական արժեքով հիմնական միջոցների գնահատման համար Ղեկավարությունը հիմք է ընդունում անկախ գնահատողների կողմից ներկայացված արդյունքները:

Հիմնական միջոցների իրական արժեքի հիերարխիայի համար տես ծանոթագրություն 31-ը:

Եթե հիմնական միջոցները ներկայացվեին սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ, հաշվեկշռային արժեքը 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կկազմեր 11,920,000 հազար դրամ (2013թ.՝ 11,642,021 հազար դրամ):

*Անավարտ շինարարություն*

2006թ-ից 2012թ-ի ընթացքում Բանկը ձեռք է բերել հող 1,074,241 հազար դրամ գումարով Բանկի գլխամասի և մասնաճյուղերի համար նոր շենքերի կառուցման նպատակով:

2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներդրման փուլում գտնվող ակտիվներում ներառված են 1,888,141 հազար դրամի (2013թ.՝ 2,526,938 հազար դրամ) հիմնական միջոցները, որոնք դասակարգված են ըստ դասերի:

*Ամբողջությամբ մաշված ակտիվներ*

2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների ցանկում առկա են 961,948 հազար դրամ արժեքով ամբողջությամբ մաշված ակտիվներ (2013թ.՝ 374,065 հազար դրամ):

*Հիմնական միջոցների սահմանափակումներ*

2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբը չի տիրապետել պարտավորությունների դիմաց գրավադրված կամ որևէ այլ սահմանափակման ենթակա հիմնական միջոցների (31 դեկտեմբեր 2013թ. դրությամբ՝ ոչինչ):

*Պայմանագրային պարտավորություններ*

2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն ունի պայմանագրային պարտավորություններ 10,725 հազար դրամի շինարարության գծով (31 դեկտեմբեր 2013թ. դրությամբ՝ 1,469 հազար դրամ գումարի չափով):

## 21 Գուդվիլ և ոչ նյութական ակտիվներ

| Հազար ՀՀ դրամ | Համակարգչային ծրագրեր | Արտոնագրեր | Գուդվիլ | Այլ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| ՍԿԶԲՆԱԿԱՆ ԱՐԺԵՔ | | | | | |
| 2013թ. հունվարի 1-ի դրությամբ | 385,023 | 926,563 | 18,132 | 54,237 | 1,383,955 |
| Ավելացում | 14,210 | 27,019 | - | 2,173 | 43,402 |
| Ճշգրտումներ | (13,317) | - | - | - | (13,317) |
| **2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **385,916** | **953,582** | **18,132** | **56,410** | **1,414,040** |
| Ավելացում | **32,270** | **91,486** | **-** | **-** | **123,756** |
| Դուրսգրում | **-** | **(15,530)** | **-** | **(3,662)** | **(19,192)** |
| **2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **418,186** | **1,029,538** | **18,132** | **52,748** | **1,518,604** |
| ԱՄՈՐՏԻԶԱՑԻԱ | | | | | |
| 2013թ. հունվարի 1-ի դրությամբ | 90,107 | 400,463 | - | 38,216 | 528,786 |
| Մասհանումներ | 37,940 | 179,263 | - | 7,401 | 224,604 |
| Ճշգրտումներ | (12,075) | - | - | - | (12,075) |
| **2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **115,972** | **579,726** | **-** | **45,617** | **741,315** |
| Մասհանումներ | **37,948** | **183,738** | **-** | **6,453** | **228,139** |
| Դուրսգրում | **-** | **(15,286)** | **-** | **(3,662)** | **(18,948)** |
| **2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **153,920** | **748,178** | **-** | **48,408** | **950,506** |
| ՄՆԱՑՈՐԴԱՅԻՆ ԱՐԺԵՔ | | | | | |
| **2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **264,266** | **281,360** | **18,132** | **4,340** | **568,098** |
| 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 269,944 | 373,856 | 18,132 | 10,793 | 672,725 |
| 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 294,916 | 526,100 | 18,132 | 16,021 | 855,169 |

2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արտոնագրերում ներկայացված է AMEX վճարային քարտերի թողարկման և սպասարկման համար ձեռք բերված արտոնագիրը 151,491 հազար դրամ հաշվեկշռային արժեքով (2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 321,626 հազար դրամ):

*Պայմանագրային պարտավորություններ*

2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբը չունի պայմանագրային պարտավորություններ (2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՝ ոչինչ):

2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբը չի տիրապետել պարտավորությունների դիմաց գրավադրված կամ որևէ այլ սահմանափակման ենթակա ոչ նյութական ակտիվներ (31 դեկտեմբեր 2013թ. դրությամբ՝ ոչինչ):

## 22 Այլ ակտիվներ

| Հազար ՀՀ դրամ | 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| Կանխավճարներ ֆինանսական վարձակալության նպատակով ձեռք բերվելիք ակտիվների գծով | **412,241** | 132,878 |
| Վճարային քարտերով գործարքներից ստացվելիք գումարներ | **270,109** | 272,911 |
| Ստացվելիք այլ գումարներ | **123,157** | 64,051 |
| **Համախառն այլ ֆինանսական ակտիվներ** | **805,507** | 469,840 |
| Արժեզրկումից պահուստներ այլ ֆինանսական ակտիվների գծով | **(33,767)** | **-** |
| **Ընդամենը ֆինանսական ակտիվներ** | **771,740** | 469,840 |
| | | |
| Կանխավճարներ և այլ դեբիտորներ | **312,183** | 336,716 |
| Գալիք ժամանակաշրջանի ծախսեր | **31,449** | 29,650 |
| Չամորտիզացված ապահովագրավճարներ | **60,670** | 65,113 |
| Հաշվարկներ աշխատակիցների հետ | **3,495** | 245 |
| **Համախառն այլ ոչ ֆինանսական ակտիվներ** | **407,797** | 431,724 |
| Արժեզրկումից պահուստներ այլ ոչ ֆինանսական ակտիվների գծով | **(35,846)** | (34,451) |
| **Ընդամենը այլ ոչ ֆինանսական ակտիվներ** | **371,951** | 397,273 |
| | | |
| Գրավի տնօրինման արդյունքում սեփականացված ակտիվներ | **823,942** | 695,805 |
| Կանխավճարներ այլ հարկերի գծով | **26,818** | 20,888 |
| Նյութեր | **348,307** | 265,162 |
| Ակտիվներ ֆինանսական վարձակալության պայմանագրերի դադարեցումից | **304,534** | 388, 920 |
| Այլ ակտիվներ | **8,000** | 14,863 |
| **Ընդամենը այլ ակտիվներ** | **2,655,292** | 2,252,751 |

Այլ ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման կորուստների պահուստի շարժը հետևյալն է.

| Հազար ՀՀ դրամ | **Ընդամենը** |
|---|---|
| **2013թ. հունվարի 1-ի դրությամբ** | - |
| Տարվա ծախս | - |
| **2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **-** |
| Տարվա ծախս | **33,767** |
| **2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **33,767** |

Այլ ոչ ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման կորուստների պահուստի շարժը հետևյալն է.

| Հազար ՀՀ դրամ | **Ընդամենը** |
|---|---|
| **2013թ. հունվարի 1-ի դրությամբ** | 30,759 |
| Տարվա ծախս | 17,159 |
| Զուտ դուրս գրում | (13,467) |
| **2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **34,451** |
| Տարվա ծախս | **14,380** |
| Զուտ դուրս գրում | **(12,985)** |
| **2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **35,846** |

## 23 Պարտավորություններ ՀՀ ԿԲ-ի նկատմամբ

| Հազար ՀՀ դրամ | **2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| Վարկեր ՀՀ ԿԲ-ից | **10,281,678** | 10,012,891 |
| Այլ պարտավորություններ | **1,441** | 4,405 |
| **Ընդամենը պարտավորություններ ՀՀ ԿԲ-ի նկատմամբ** | **10,283,119** | 10,017,296 |

ՀՀ ԿԲ-ից ստացված վարկերը ներառում են Գերմանա-Հայկական հիմնադրամի կողմից «Փոքր և միջին բիզնեսի վարկային ծրագրի» շրջանակներում ստացված վարկեր, Համաշխարհային Բանկի «Փոքր և Միջին ձեռներեցության հասանելիության վարկային ծրագրի» շրջանակներում ստացված վարկեր:

Հաշվետու ժամականաշրջանում Խումբը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ (2013՝ ոչինչ):

2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ ԿԲ-ից ստացված վարկերի միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքը կազմում է 8.73% (2013թ.՝ 8.74%):

## 24 Պարտավորություններ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

| Հազար ՀՀ դրամ | **2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| Այլ բանկերի թղթակցային հաշիվներ | **8,353** | 3,409 |
| Այլ ֆինանսական կազմակերպությունների ընթացիկ հաշիվներ | **2,202,596** | 208,585 |
| Ռեպո համաձայնագրեր այլ ֆինանսական կազմակերպությունների հետ (ծանոթ. 27) | **7,007,655** | - |
| Վարկեր և ավանդներ միջազգային ֆինանսական կազմակերպություններից | **93,303,930** | 92,697,809 |
| **Ընդամենը պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ** | **102,522,534** | 92,909,803 |

Ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկերն ունեն փոփոխական և հաստատուն տոկոսադրույքներ:

2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ ՀՀ դրամով պարտավորությունների գծով միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքները կազմում են 12.73% (2013թ.՝ 13.45%), ԱՄՆ դոլարով, Եվրոյով և այլ ազատ փոխարկելի արտարժույթներով պարտավորությունների համար 5.11 % (2013թ.՝ 4.91 %):

Հաշվետու ժամականաշրջանում Խումբը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ (2013՝ ոչինչ):

## 25 Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ

| Հազար ՀՀ դրամ | **2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| **ՀՀ Կառավարություն** | | |
| Վարկեր | **25,484,619** | 24,820,947 |
| | **25,484,619** | 24,820,947 |
| **Իրավաբանական անձինք** | | |
| Ընթացիկ/հաշվարկային հաշիվներ | **12,065,796** | 8,021,592 |
| Ժամկետային ավանդներ | **9,084,163** | 7,979,510 |
| | **21,149,959** | 16,001,102 |
| **Ֆիզիկական անձինք** | | |
| Ընթացիկ/հաշվարկային հաշիվներ | **12,824,365** | 12,998,458 |
| Ժամկետային ավանդներ | **62,492,001** | 54,059,877 |
| | **75,316,366** | 67,058,335 |
| **Ընդամենը պարտավորություններ հաճախորդների նկատմամբ** | **121,950,944** | 107,880,384 |

Հաճախորդների բոլոր ավանդներն ունեն հաստատուն տոկոսադրույքներ:

2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդների նկատմամբ պարտավորություններում ներառված են ավանդներ և հաշիվներ, որոնք հանդիսանում են ապահովվածություն տրամադրված վարկերի, ակրեդիտիվների և երաշխիքների գծով՝ 2,577,254 հազար դրամ գումարով (2013թ. ՝ 2,761,712 հազար դրամ): Այդ գումարների իրական արժեքը մոտ է դրանց հաշվեկշռային արժեքին:

2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի ամենամեծ տաս հաճախորդների և նրանց հետ կապակցված անձանց հաշիվների և ավանդների ընդհանուր գումարը կազմում է 20,335,719 հազար դրամ (2013թ. ամենամեծ տաս հաճախորդների՝ 12,810,230 հազար դրամ) կամ հաճախորդների հաշիվների և ավանդների ընդհանուր գումարի 21% (2013թ.՝ 15%): Ընդ որում հաճախորդների հաշիվների և ավանդների ընդհանուր գումարը չի ներառում ՀՀ կառավարության նկատմամբ պարտավորությունները:

ՀՀ կառավարության նկատմամբ պարտավորությունները ներկայացնում են վարկեր ստացված «Գյուղատնտեսության ոլորտի աջակցման վարկավորում» և «Տնտեսության կայունացման վարկավորում», Գերմանահայկական հիմնադրամի «Մանր, փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման վարկավորում» և «Վերականգնվող էներգիայի աջակցության» , Համաշխարհային բանկի «ՀՀ փոքր և միջին ձեռներեցության ֆինանսական միջոցների հասանելիության վարկավորում» Գյուղատնտեսության Զարգացման Միջազգային Հիմնադրամի «Գյուղատնտեսության աջակցման» և Ասիական Զարգացման Բանկի Կանանց ձեռներեցության ոլորտի աջակցման և զարգացման վարկավորում» ծրագրերից:

2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդների նկատմամբ ՀՀ դրամով պարտավորությունների գծով միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքները կազմում են 10.94% (2013թ.՝ 10.14%), ԱՄՆ դոլարով, Եվրոյով և այլ ազատ փոխարկելի արտարժույթներով պարտավորությունների համար 5.58% (2013թ.՝ 6.89%):

## 26 Այլ պարտավորություններ

| Հազար ՀՀ դրամ | **2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| Վճարվելիք գումարներ | **592,058** | 410,771 |
| **Ընդամենը ֆինանսական պարտավորություններ** | **592,058** | 410,771 |
| Պարտավորություններ հարկերի գծով՝ բացառությամբ շահութահարկի | **345,384** | 482,962 |
| Ապագա ժամանակաշրջանի եկամուտներ | **1,795** | 1,342 |
| Պարտավորություն անձնակազմի նկատմամբ | **271,037** | 319,364 |
| Այլ կրեդիտորական պարտավորություններ | **159,382** | 199,013 |
| **Ընդամենը այլ պարտավորություններ** | **1,369,656** | 1,413,452 |

## 27 Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր

| Հազար ՀՀ դրամ | Ակտիվ | | Պարտավորություն | |
|---|---|---|---|---|
| | 2014 | 2013 | 2014 | 2013 |
| Վաճառքի համար մատչելի ներդրումներ (ծանոթ.18, 24) | **7,253,389** | - | **7,007,655** | - |
| | **7,253,389** | - | **7,007,655** | - |

Գրավադրված արժեթղթերը այն ֆինանսական ակտիվներն են, որոնք գրավադրված են հետգնման պայմանագրերով այլ բանկերում, գործընկերոջ կողմից վաճառելու և կրկին վերագրավադրելու իրավունքով:

## 28 Սեփական կապիտալ

2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի գրանցված և ամբողջությամբ վճարված բաժնետիրական կապիտալը կազմում էր 30,000,000 հազ. դրամ: Համաձայն Բանկի կանոնադրության, բաժնետիրական կապիտալը կազմված է թվով 2,500 սովորական բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 12,000 հազար դրամ անվանական արժեքով:

2014թ. և 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի բաժնետերերն են.

| Հազար ՀՀ դրամ | **2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | | 2013թ. դեկտեմբերի31-ի դրությամբ | |
|---|---|---|---|---|
| | **Վճարված բաժնետիրական կապիտալ** | **Բաժնեմասը վճարված կապիտալում %** | Վճարված բաժնետիրական կապիտալ | Բաժնեմասը վճարված կապիտալում % |
| Կրեդիտ Ագրիկոլ ԷՍ.ԷՅ. | **4,668,000** | **15.56** | 4,668,000 | 15.56 |
| Արմավիրի ԳՓՄՄ | **4,224,000** | **14.08** | 4,224,000 | 14.08 |
| Սակամ Ինտերնեյշնլ | **3,732,000** | **12.44** | 3,732,000 | 12.44 |
| Արարատի ԳՓՄՄ | **3,684,000** | **12.28** | 3,684,000 | 12.28 |
| Շիրակի ԳՓՄՄ | **1,980,000** | **6.60** | 1,980,000 | 6.60 |
| Արագածոտնի ԳՓՄՄ | **2,220,000** | **7.40** | 2,220,000 | 7.40 |
| Լոռու ԳՓՄՄ | **1,992,000** | **6.64** | 1,992,000 | 6.64 |
| Կոտայքի ԳՓՄՄ | **1,680,000** | **5.60** | 1,680,000 | 5.60 |
| Տավուշի ԳՓՄՄ | **1,440,000** | **4.80** | 1,440,000 | 4.80 |
| Սյունիքի ԳՓՄՄ | **1,284,000** | **4.28** | 1,284,000 | 4.28 |
| Գեղարքունիքի ԳՓՄՄ | **1,584,000** | **5.28** | 1,584,000 | 5.28 |

| Հազար ՀՀ դրամ | 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | | 2013թ. դեկտեմբերի31-ի դրությամբ | |
|---|---|---|---|---|
| | Վճարված բաժնետիրական կապիտալ | Բաժնեմասը վճարված կապիտալում % | Վճարված բաժնետիրական կապիտալ | Բաժնեմասը վճարված կապիտալում % |
| Վայոց ձորի ԳՓՄՄ | **1,212,000** | **4.04** | 1,212,000 | 4.04 |
| Սամսոն Գիշյան | **300,000** | **1.00** | - | - |
| Ստեփան Գիշյան | **-** | **-** | 300,000 | 1.00 |
| | **30,000,000** | **100** | 30,000,000 | 100 |

2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի կողմից հետ գնված բաժնետոմսեր չեն եղել:

Սովորական բաժնետոմսերի բաժնետերերը իրավունք ունեն ստանալու շահաբաժին և մեկ ձայնի իրավունք Բանկի տարեկան և ընդհանուր ժողովներում:

2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբը չունի հայտարարված շահաբաժիններ (2013թ. ՝ նույնպես):

Բաշխման ենթակա պահուստները սահմանափակվում են կուտակված շահույթով: Բաշխման ոչ ենթակա միջոցները ներկայացված են գլխավոր պահուստով, որը ստեղծված է համաձայն ՀՀ օրենսդրության պահանջների՝ ընդհանուր բանկային ռիսկերը, ներառյալ հնարավոր կորուստները և այլ չնախատեսված ռիկերը և ծախսերը փոխհատուցելու նպատակով: Պահուստը ստեղծվել է համաձայն Բանկի կանոնադրության, որը նախատեսում է պահուստի ստեղծում այդ նպատակների համար ոչ պակաս քան հաշվապահական հաշվառման հաշիվներում արտացոլված բաժնետիրական կապիտալի 15%-ի չափով:

## 29 Պայմանական պարտավորություններ

*Իրավական և հարկային պարտավորություններ*

Հայաստանում հարկային համակարգը համեմատաբար նոր է, և նրան բնորոշ է օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատարանի որոշումների հաճախակի փոփոխությունները, որոնք երբեմն անհասականալի են, հակասական և ենթակա տարբեր մեկնաբանությունների: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրման հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում, հարկային մարմինների կողմից չի կարող կիրառվել հավելյալ հարկերի պարտադրումներ, տույժեր և տուգանքներ, ավելի քան ստուգման նախորդող հաշվետու 3 տարիների համար:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել հարկային ռիսկեր, որոնք ավելի զգալի են քան այլ երկներում: Ղեկավարությունը համոզված է, որ պատշաճ կերպով կատարել է իր հարկային պարտավորությունները, հիմնվելով Հայաստանում կիրառվող հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատարանի որոշումների իր մեկնաբանությունների վրա: Այնուամենայնիվ, համապատասխան մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և եթե ղեկավար մարմիններին հաջողվի հարկադրել իրենց մեկնաբանությունները, ապա այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա ազդեցությունը կարող է էական լինել:

Ղեկավարությունը համոզված է, որ Խումբն իր գործունեությունը ծավալում է օրենսդրությամբ նախատեսված պահանջների շրջանակներում, և ամբողջությամբ կատարել է իր հարկային պարտավորությունները:

Խմբին ներկայացվող դատական հայցերի առումով Խմբի ղեկավարությունը համոզված է, որ դրանց հետևանքով առաջացող պարտավորությունները էական ազդեցություն չեն ունենա Խմբի ֆինանսական վիճակի կամ ապագա գործառնությունների արդյունքների վրա:

*Վարկային ռիսկ պարունակող պարտավորություններ, երաշխիքներ և այլ ֆինանսական պայմանագրեր*

Իր գործունեության ընթացքում Խումբը տրամադրում է իր հաճախորդներին հետհաշվեկշռային ռիսկ պարունակող ֆինանսական գործիքներ: Նշված ֆինանսական գործիքները, որոնք ունեն վարկային ռիսկի տարբեր մակարդակներ, չեն արտացոլվում հաշվեկշռում:

Դեկտեմբերի 31 դրությամբ անվանական կամ պայմանագրային գումարները հետևյալն են.

| Հազար ՀՀ դրամ | **2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| Չօգտագործված վարկային գծեր | **11,527,114** | 10,329,253 |
| Ակրեդիտիվներ | **858,551** | 749,738 |
| Տրամադրված երաշխիքներ | **2,798,290** | 3,228,807 |
| **Ընդամենը վարկային ռիսկ պարունակող պարտավորություններ** | **15,183,955** | 14,307,798 |

Խմբի կողմից տրամադրված երաշխիքների գծով արժեզրկման կորուստների պահուստի շարժը հետևյալն է.

| Հազար ՀՀ դրամ | **Ընդամենը** |
|---|---|
| **2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | - |
| Տարվա ծախս | 126,000 |
| Դուրսգրում | (126,000) |
| **2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **-** |
| Տարվա ծախս | - |
| **2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **-** |

*Պարտավորություններ գործառնական վարձակալության գծով – խումբը որպես վարձակալող*

Խումբն իր գործունեությունն ապահովելու նպատակով կնքում է առևտրային վարձակալության պայմանագրեր շենք և տարածքներ վարձակալելու նպատակով:

Գործառնական վարձակալության գծով վճարվելիք ապագա ընդհանուր նվազագույն վարձավճարների կառուցվածքը հետևյալն է.

| Հազար ՀՀ դրամ | **2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| Մինչև 1 տարի | **387,264** | 154,807 |
| 1-5 տարի | **1,533,403** | 774,035 |
| 5 տարուց ավելի | **1,391,572** | 619,204 |
| **Ընդամենը պարտավորություններ գործառնական վարձակալության գծով** | **3,312,239** | 1,548,046 |

*Կապիտալ բնույթի պարտավորություններ*

Կապիտալ բնույթի պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը բացահայտված է 20 և 21 ծանոթագրություններում:

*Ապահովագրություն*

Հայաստանում ապահովագրության ոլորտը գտնվում է զարգացման փուլում, և այլ երկրներին հատուկ բազմաթիվ ապահովագրության ձևաչափեր հիմնականում դեռևս կիրառելի չեն: Խումբը նախատեսում է իր գործունեության ղադարեցմանը, ինչպես նաև իր գույքի կամ գործունեության հետ կապված ապահովագրական դեպքերի ժամանակ առաջացող գույքի և շրջակա միջավայրի վնասի` երրորդ կողմի նկատմամբ պարտավորությանը վերաբերող մասնակի ապահովագրություն: Այնուամենայնիվ, 2013-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի սեփականության իրավունքով պատկանող շենքերը և այլ հիմնական միջոցները ապահովագրված են: Խումբը ունի ապահովագրություն նաև բանկային ընդհանուր պարտավորվածությունների, էլեկտրոնային և համակարգչային հանցագործությունների և մասնագիտական պատասխանատվության համար: Քանի դեռ Խումբը չի նախատեսել ամբողջական ապահովագրություն, առկա է ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է ունենալ բացասական ազդեցություն Խմբի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

Սկսած 2005թ. Բանկը հանդիսանում է ավանդների պարտադիր ապահովագրական համակարգի անդամ: Նշված համակարգը գործում է համաձայն ՀՀ օրենսդրության պահանջների և կանոնակարգվում է Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին օրենքով: Ապահովագրությունը մարում է Բանկի պարտավորությունները ֆիզիկական անձանց ավանդների գծով 4,000 հազար դրամ ընդհանուր գումարով (մինչև 2,000 հազար դրամ արտարժույթով ավանդների դեպքում) Բանկի սնանկացման և բանկային արտոնագրի հետ կանչման դեպքում:

## 30 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Համաձայն ՀՀՄՍ 24-ի` «Կապակցված կողմերի բացահայտումներ», կողմերը համարվում են կապակցված, եթե նրանցից մեկը կարող է վերահսկել մյուսին կամ նշանակալի ազդեցություն ունենալ մյուսի վրա` ֆինանսական և գործառնական որոշումներ կայացնելիս: Ներկայացվող հաշվետվությունների առումով Բանկի կապակցված կողմերն են` նրա բաժնետերերը, ղեկավար անձնակազմի անդամները, ինչպես նաև նրանց հետ կապակցված անձիք և նրանց կողմից վերահսկվող կազմակերպությունները:

Խումբը չունի վերջնական վերահսկող անձ կամ ընկերություն:

Խումբն իր գործունեության ընթացքում ներգրավված է լինում կապակցված կողմերի հետ մի շարք գործարքներում: Այդ գործարքները ներառում են վարկերը, ավանդները և այլն:

Գործարքների ծավալները, մնացորդները տարվա վերջի դրությամբ և տարվա եկամուտ և ծախսերը հետևյալն են.

| Հազար ՀՀ դրամ | 2014 | | | 2013 | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Բաժնետերեր և կապակցված կողմեր | Ասոցիացված կազմակերպությու-թյուններ և կապակցված կողմեր | Ղեկավար անձնակազմ և կապակցված կողմեր | Բաժնետերեր և կապակցված կողմեր | Ասոցիացված կազմակերպությու-թյուններ և կապակցված կողմեր | Ղեկավար անձնակազմ և կապակցված կողմեր |
| ***Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն*** | | | | | | |
| *Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ* | | | | | | |
| Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ | **6,158,357** | - | - | 5,035,091 | - | - |
| Տարվա ընթացքում տրամադրված | **194,727,089** | - | - | 128,863,803 | - | - |
| Տարվա ընթացքում մարված | **(195,651,809)** | - | - | (127,740,537) | - | - |
| **Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **5,233,637** | - | - | 6,158,357 | - | - |

| Հազար ՀՀ դրամ | | 2014 | | | 2013 | |
|---|---|---|---|---|---|---|
| | Բաժնետերեր և կապակցված կողմեր | Ասոցիացված կազմակերպու-թյուններ և կապակցված կողմեր | Ղեկավար անձնակազմ և կապակցված կողմեր | Բաժնետերեր և կապակցված կողմեր | Ասոցիացված կազմակերպու-թյուններ և կապակցված կողմեր | Ղեկավար անձնակազմ և կապակցված կողմեր |
| *Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ* | | | | | | |
| Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ | - | - | - | 80,688 | - | - |
| Տարվա ընթացքում տրամադրված | - | - | - | - | - | - |
| Տարվա ընթացքում մարված | - | - | - | (80,688) | - | - |
| **Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ** | - | - | - | - | - | - |
| *Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ* | | | | | | |
| Վարկի մնացորդը 1 հունվարի դրությամբ, համախառն | **50,370** | **-** | **801,110** | 38,442 | - | 785,003 |
| Տարվա ընթացքում տրամադրված վարկեր | **13,941** | **-** | **538,272** | 55,919 | - | 629,428 |
| Տարվա ընթացքում մարված վարկեր | **(55,053)** | **-** | **(966,761)** | (43,991) | - | (613,321) |
| Վարկի մնացորդը դեկտեմբերի 31 դրությամբ, համախառն | **9,258** | **-** | **372,621** | 50,370 | - | 801,110 |
| Արժեզրկումից պահուստ | **(139)** | **-** | **(5,589)** | (504) | - | (8,011) |
| **Մնացորդը դեկտեմբերի 31 դրությամբ** | **9,119** | **-** | **367,032** | 49,866 | - | 793,099 |
| *Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ* | | | | | | |
| Հունվարի 1-ի դրությամբ | **-** | **788,720** | **-** | 8,878,760 | - | - |
| Տարվա ընթացքում ստացված | **-** | **8,321,691** | **-** | 853,960 | 788,720 | - |
| Տարվա ընթացքում վճարված | **-** | **(8,803,166)** | **-** | (9,732,720) | - | - |
| **Դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **-** | **307,245** | **-** | - | 788,720 | - |
| *Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ* | | | | | | |
| Հունվարի 1-ի դրությամբ | **10,305** | **-** | **2,165,369** | 10,189 | - | 2,141,793 |
| Տարվա ընթացքում ստացված | **26,836** | **-** | **3,685,439** | 67,900 | - | 3,489,329 |
| Տարվա ընթացքում վճարված | **(30,876)** | **-** | **(3,937,847)** | (67,784) | - | (3,465,753) |
| **Դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **6,265** | **-** | **1,912,961** | 10,305 | - | 2,165,369 |
| Տրամադրված երաշխիքներ | **-** | **-** | **-** | 490,028 | **-** | **-** |
| ***Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն*** | | | | | | |
| Տոկոսային և նմանատիպ եկամուտներ | **8,862** | **-** | **22,100** | 6,479 | - | 20,906 |
| Տոկոսային և նմանատիպ ծախսեր | **307** | **38,411** | **122,384** | 481 | 3,790 | 167,937 |
| Ակտիվների հնարավոր կորուստների արժեզրկման ծախս/ (հակադարձում) | **(365)** | **-** | **(2,422)** | 113 | - | 138 |
| Այլ ծախսեր | **-** | **(2,892)** | **17,867** | 14,324 | - | 75,710 |

Ղեկավար անձնակազմի գծով կատարված փոխհատուցումները հետևյալն են.

| Հազար ՀՀ դրամ | 2014 | 2013 |
|---|---|---|
| Աշխատավարձ և այլ փոխհատուցումներ | **310,017** | 1,249,322 |
| **Ընդամենը ղեկավար անձնակազմի գծով կատարված փոխհատուցումներ** | **310,017** | 1,249,322 |

Խմբի հետ կապված անձանց տրամադրված վարկերը վճարման են ենթակա 2015թ-ից մինչև 2024թ. ընկած ժամանակահատվածում և դրանց միջին արդյունավետ տոկոսադրույքը կազմում է 5.45% (2013թ.՝ 6.95%): Վարկերը ապահովված են անշարժ, շարժական գույքով, դրամական հոսքերով, երաշխավորություններով: Այդ գրավների իրական արժեքը կազմում է 875,634 հազար դրամ (2013թ.՝ 816,346 հազար դրամ):

## 31 Իրական արժեքի չափումը

Խումբը սահմանում է ինչպես իրական արժեքի պարբերաբար չափման քաղաքականությունն ու ընթացակարգերը, ինչպես օրինակ չգնանշվող առևտրային և վաճառքի համար մատչելի արժեթղթերը, չգնանշվող ածանցյալ ֆինանսական գործիքները, այնպես էլ ոչ-պարբերաբար չափման քաղաքականությունն ու ընթացակարգերը:

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին վերլուծվում է ակտիվների և պարտավորությունների արժեքների փոփոխությունները, որոնք պետք է վերագնահատվեն համաձայն Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականության: Այս վերլուծությունների համար իրականացվում է հիմնական տվյալների ճշտում, որոնք կիրառվել են նախորդ գնահատման ժամանակ, համադրելով գնահատման հաշվարկի տեղեկատվությունը պայմանագրերի և այլ համապատասխան փաստաթղթերի հետ: Խումբը համեմատում է յուրաքանչյուր ակտիվի և պարտավորության իրական արժեքի յուրաքանչյուր փոփոխությունը համապատասխան արտաքին աղբյուրների հետ, որոշելու համար, թե հիմնավորված է արդյոք տվյալ փոփոխությունը:

Ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները ներկայացվում են համաձայն իրական արժեքի հիերարխիայի: Այս հիերարխիան բաժանում է ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները երեք մակարդակների՝ հիմք ընդունելով դրանց իրական արժեքի չափման ժամանակ օգտագործված գործիքների նշանակալիությունը: Իրական արժեքի հիերարխիան ունի հետևյալ երեք մակարդակները՝

Մակարդակ 1 - նույն ակտիվների և պարտավորությունների գծով ակտիվ շուկաներում գնանշվող գները (չճշգրտված).

Մակարդակ 2- Մակարդակ 1-ում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներ, որոնք ակտիվի և պարտավորության համար դիտարկելի են ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) և թե՛ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող):

Մակարդակ 3 - ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

### 31.1 Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը, որոնք ֆինանսական վիճակի մասին

հաշվետվությունում չեն չափվել իրենց իրական արժեքով և ըստ մակարդակի վերլուծում է դրանք իրական արժեքի հիերարխիայում, թե իրական արժեքի չափումը որ դասում է դասակարգված:

| Հազար ՀՀ դրամ | 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | | | | |
|---|---|---|---|---|---|
| | **Մակարդակ 1** | **Մակարդակ 2** | **Մակարդակ 3** | **Ընդամենը իրական արժեք** | **Ընդամենը հաշվեկշռային արժեք** |
| **ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ** | | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | **-** | **64,569,052** | **-** | **64,569,052** | **64,569,052** |
| Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ | **-** | **12,984,066** | **-** | **12,984,066** | **12,984,066** |
| Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ | **-** | **184,346,991** | **-** | **184,346,991** | **184,346,991** |
| Այլ ակտիվներ(ծանոթ. 22) | **-** | **771,740** | **-** | **771,740** | **771,740** |
| **ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | | | | |
| Պարտավորություններ ՀՀ ԿԲ նկատմամբ | **-** | **10,283,119** | **-** | **10,283,119** | **10,283,119** |
| Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ | **-** | **102,522,534** | **-** | **102,522,534** | **102,522,534** |
| Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ | **-** | **121,950,944** | **-** | **121,950,944** | **121,950,944** |
| Այլ պարտավորություններ (ծանոթ. 26) | **-** | **592,058** | **-** | **592,058** | **592,058** |

| Հազար ՀՀ դրամ | 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | | | | |
|---|---|---|---|---|---|
| | Մակարդակ 1 | Մակարդակ 2 | Մակարդակ 3 | Ընդամենը իրական արժեք | Ընդամենը հաշվեկշռային արժեք |
| ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ | | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | - | 62,787,882 | - | 62,787,882 | 62,787,882 |
| Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ | - | 9,670,431 | - | 9,670,431 | 9,670,431 |
| Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ | - | 169,282,479 | - | 169,282,479 | 169,282,479 |
| Այլ ակտիվներ(ծանոթ. 22) | - | 469,840 | - | 469,840 | 469,840 |
| ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | | | | |
| Պարտավորություններ ՀՀ ԿԲ նկատմամբ | - | 10,017,296 | - | 10,017,296 | 10,017,296 |
| Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ | - | 92,909,803 | - | 92,909,803 | 92,909,803 |
| Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ | - | 107,880,384 | - | 107,880,384 | 107,880,384 |
| Այլ պարտավորություններ (ծանոթ. 26) | - | 410,771 | - | 410,771 | 410,771 |

*Պահանջներ և պարտավորություններ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ*

Մեկ ամիս մարման ժամկետ ունեցող ակտիվների և պարտավորությունների համար, հաշվեկշռային արժեքը մոտավոր արտացոլում է իրական արժեքը, քանի որ այս ֆինանսական գործիքների մարման ժամկետները բավականին կարճ են: Մեկ ամսից ավելի մարման ժամկետ ունեցող ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը սահմանվում է ակնկալվող ապագա դրամական հոսքերի հաշվարկից ելնելով և զեղչվում է տարվա վերջի դրությամբ գործող համապատասխան տոկոսադրույքներով, որոնք հիմնականում համընկնում են գործող տոկոսադրույքներին:

*Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ*

Փոփոխվող դրույքաչափերով գործիքների իրական արժեքը հավասար է իրենց հաշվեկշռային արժեքին: Այն միջոցների գնահատված իրական արժեքները, որոնք ունեն ֆիքսված տոկոսադրույք, սահմանվում են ելնելով ակնկալվող ապագա դրամական հոսքերի հաշվարկից, որոնք զեղչվում են նման վարկային ռիսկ և մարման ժամկետ ունեցող գործիքների ընթացիկ տոկոսադրույքներով: Իրական արժեքը մոտ է հաշվեկշիռային արժեքին, քանի որ ընթացիկ տոկոսադրույքները նոր գործիքների համար արտահայտում են նախկինում տրամադրված գործիքների տոկոսադրույքները:

Արժեզրկված վարկերի իրական արժեքը հաշվարկվում է գրավի առարկայի վաճառքից ակնկալվող դրամական հոսքերի հիման վրա: Գրավի առարկայի արժեքը հիմնված է անկախ, մասնագիտական որակավորում ունեցող գույքի գնահատողի իրականացրած գնահատումների վրա:

*Այլ փոխառություններ*

Ֆիքսված տոկոսադրույքներով տոկոսաբեր ավանդների գնահատված իրական արժեքը սահմանվում է, ելնելով ակնկալվող ապագա դրամական հոսքերի հաշվարկից, որոնք զեղչվում են նմանատիպ մարման ժամկետ ունեցող նոր պարտքային գործիքների տոկոսադրույքներով: Իրական արժեքը մոտ է հաշվեկշիռային արժեքին, քանի որ ընթացիկ տոկոսադրույքները նոր գործիքների համար արտահայտում են նախկինում տրամադրված գործիքների տոկոսադրույքները:

## 31.2 Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ

| Հազար ՀՀ դրամ | 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | | | |
|---|---|---|---|---|
| | Մակարդակ 1 | Մակարդակ 2 | Մակարդակ 3 | Ընդամենը |
| **ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ** | | | | |
| Ածանցյալ ֆինանսական ակտիվներ | - | 149,303 | - | 149,303 |
| Վաճառքի համար մատչելի ներդրումներ (ծանոթ. 18) | 1,890,244 | - | - | 1,890,244 |
| Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր | - | 7,253,389 | - | 7,253,389 |
| **Ընդամենը** | 1,890,244 | 7,402,692 | - | 9,292,936 |

| Հազար ՀՀ դրամ | 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | | | |
|---|---|---|---|---|
| | Մակարդակ 1 | Մակարդակ 2 | Մակարդակ 3 | Ընդամենը |
| ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ | | | | |
| Վաճառքի համար մատչելի ներդրումներ (ծանոթ. 18) | 995,564 | 6,179,666 | - | 7,175,230 |
| Ընդամենը | 995,564 | 6,179,666 | - | 7,175,230 |
| ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | | | |
| Ածանցյալ ֆինանսական պարտավորություն | - | 22,231 | - | 22,231 |
| Ընդամենը | - | 22,231 | - | 22,231 |
| ԶՈՒՏ ԻՐԱԿԱՆ ԱՐԺԵՔ | 995,564 | 6,157,435 | - | 7,152,999 |

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում 1-ին և 2-րդ մակարդակների միջև փոխանցումներ չեն կատարվել:

Իրական արժեքի չափման մեթոդները և գնահատման մեխանիզմը չեն փոփոխվել նախորդ հաշվետու ժամանակաշրջանի համեմատությամբ:

### *ՀՀ կազմակերպությունների չգնանշվող բաժնեմասային ներդրումներ*

Խմբի ներդրումների իրական արժեքը չգնանշվող ՀՀ Կազմակերպությունների բաժնեմասային արժեթղթերում չի կարող արժանահավատորեն գնահատվել և հետևաբար դուրս է մնում այս բացահայտումից: Սեփական կապիտալի այս ներդրումների վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվության համար տես Ծան. 18-ը:

### *Ածանցյալներ*

Խմբի ածանցյալ գործիքները չեն շրջանառվում գործող շուկաներում: Այս պայմանագրերի իրական արժեքները գնահատվում են՝ օգտագործելով այն գնահատման մեխանիզմը, որը առավելագույնս մեծացնում է դիտարկելի շուկայի գործիքների օգտագործումը, օր.՝ շուկայի արժույթի փոխանակման դրույքը (մակարդակ 2): Խմբի կողմից ներդրվող ածանցյալները ներառված են 2-րդ մակարդակում և բաղկացած են արտարժութային և տոկոսադրույքի սվոպ պայմանագրերից:

## 31.3 Ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի չափումը

| Հազար ՀՀ դրամ | 2014 | | | |
|---|---|---|---|---|
| | Մակարդակ 1 | Մակարդակ 2 | Մակարդակ 3 | Ընդամենը |
| **ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ** | | | | |
| Հիմնական միջոցներ | | | | |
| *Հող և շենքեր* | - | - | **13,744,639** | **13,744,639** |
| *Սարքավորումներ* | - | - | **4,570,073** | **4,570,073** |
| *Փոխադրամիջոցներ* | - | - | **413,499** | **413,499** |
| *Այլ հիմնական միջոցներ* | - | - | **2,337,845** | **2,337,845** |
| **Ընդամենը** | **-** | **-** | **21,066,056** | **21,066,056** |
| **ԶՈՒՏ ԻՐԱԿԱՆ ԱՐԺԵՔ** | **-** | **-** | **21,066,056** | **21,066,056** |

| Հազար ՀՀ դրամ | 2013 | | | |
|---|---|---|---|---|
| | Մակարդակ 1 | Մակարդակ 2 | Մակարդակ 3 | Ընդամենը |
| ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ | | | | |
| Հիմնական միջոցներ | | | | |
| *Հող և շենքեր* | - | - | 13,714,954 | 13,714,954 |
| *Սարքավորումներ* | - | - | 4,084,643 | 4,084,643 |
| *Փոխադրամիջոցներ* | - | - | 381,291 | 381,291 |
| *Այլ հիմնական միջոցներ* | - | - | 1,738,337 | 1,738,337 |
| Ընդամենը | - | - | 19,919,225 | 19,919,225 |
| ԶՈՒՏ ԻՐԱԿԱՆ ԱՐԺԵՔ | - | - | 19,919,225 | 19,919,225 |

### *Իրական արժեքի չափումը Մակարդակ 3-րդում*

3-րդ մակարդակում դասակարգված Բանկի ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գնահատման մեխանիզմների օգտագործումը հիմնված է այն ելակետային տվյալների վրա, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայի տվյալների վրա: Այս մակարդակում ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները սկզբից մինչև վերջ կարելի է համաձայնեցնել հետևյալ կերպ.

| Հազար ՀՀ դրամ | Հիմնական միջոցներ | Ընդամենը |
|---|---|---|
| **ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ** | | |
| **2013թ. հունվարի 1-ի դրությամբ** | 18,420,942 | 18,420,942 |
| Ավելացում | 1,517,075 | 1,517,075 |
| Օտարում | (18,792) | (18,792) |
| **2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **19,919,225** | **19,919,225** |
| Ավելացում | **1,278,150** | **1,278,150** |
| Օտարում | **(131,319)** | **(131,319)** |
| **2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **21,066,056** | **21,066,056** |
| | **21,066,056** | **21,066,056** |

Խմբի հիմնական գույքային ակտիվների իրական արժեքը հաշվարկվում է գնահատումների հիման վրա՝ իրականացված անկախ, մասնագիտորեն որակավորված գույքի գնահատողների կողմից: Նշանակալի ելակետային տվյալները և ենթադրությունները մշակվում են համաձայն ղեկավարության հետ սերտ խորհրդակցության: Գնահատման գործընթացները և իրական արժեքի փոփոխությունները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին:

Հիմնական միջոցների վերագնահատումը կատարվել է 2009թ.-ին անկախ գնահատողների կողմից՝ կիրառելով համեմատական, ծախսային և եկամտային մեթոդները:

## 32 Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում

Իր գործունեության ընթացքում Խումբը ֆինանսական գործիքների հետ իրականացնում է տարբեր գործառնություններ, որոնք կարող են ներկայացվել զուտ արժեքով, եթե գոյություն ունի օրենսդրորեն հաստատված իրավունք իրականացնելու հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն իրականացնելու հաշվանցում կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը:

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվներն ու ֆինանսական պարտավորությունները, որոնք հաշվանցված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ, կամ ենթակա են կատարման համաձայն հաշվանցման գլխավոր

համաձայնագրի կամ համանման պայմանագրերի, որը ներառում է նմանատիպ ֆինանսական գործիքները, անկախ այն բանից, դրանք հաշվանցվել են ֆինանսական վիճակի մասին հաշվետության մեջ թե ոչ:

| Հազար ՀՀ դրամ | 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Հաշվանցված գումարներ | | | Չհաշվանցված գումարներ | | |
| | Համախառն ֆինանսական պարտավո-րություններ | Համախառն ֆինանսական ակտիվների հաշվանցում | Ներկայացված զուտ արժեքներ | Ֆինանսական վիճակի մասին հաշվետվու-թյունում ճանաչված ֆինանսական գործիքներ | Ֆինանսական վիճակի մասին հաշվետվու-թյունում չճանաչված ֆինանսական գործիքներ | Զուտ |
| **ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ** | | | | | | |
| Ռեպո համաձայնագրեր ֆինանսական կազմակերպությունների հետ (Ծանոթ. 27) | **7,007,655** | **-** | **7,007,655** | **(7,253,389)** | **-** | **(245,734)** |

| Հազար ՀՀ դրամ | 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Հաշվանցված գումարներ | | | Չհաշվանցված գումարներ | | |
| | Համախառն ֆինանսական ակտիվներ | Համախառն ֆինանսական ակտիվների հաշվանցում | Ներկայացված զուտ արժեքներ | Ֆինանսական վիճակի մասին հաշվետվու-թյունում ճանաչված ֆինանսական գործիքներ | Ֆինանսական վիճակի մասին հաշվետվու-թյունում չճանաչված ֆինանսական գործիքներ | Զուտ |
| ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ | | | | | | |
| Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ (Ծանոթ.15) | 467,345 | - | 467,345 | - | (473,138) | (5,793) |

## 33 Ակտիվների և պարտավորությունների ժամկետային վերլուծություն

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է ակտիվները և պարտավորություններն ըստ սպասվելիք մարման ժամկետների: Բանկի չզեղչված պայմանագրային պարտավորությունների մասին տեղեկատվությունը ներկայացված է ծանոթագրություն 34.3-ում:

| Հազար ՀՀ դրամ | 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ցպահանջ և մինչև 1 ամիս | 1-ից 3 ամիս | 3-ից 12 ամիս | *Մինչև 12 ամիս, ենթա-հանրա-գումար* | 1-ից 5 տարի | 5 տարուց ավելի | *12 ամսից ավելի, ենթա-հանրա-գումար* | Ընդամենը |
| **ԱԿՏԻՎՆԵՐ** | | | | | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | **64,569,052** | **-** | **-** | ***64,569,052*** | **-** | **-** | ***-*** | **64,569,052** |
| Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ | **4,927,049** | **2,357,377** | **4,749,700** | ***12,034,126*** | **-** | **949,940** | ***949,940*** | **12,984,066** |
| Ածանցյալ ֆինանսական ակտիվներ | **-** | **149,303** | **-** | ***149,303*** | **-** | **-** | ***-*** | **149,303** |
| Վարկեր և փոխատվություններ հաճախորդներին | **5,486,502** | **7,596,974** | **62,165,518** | ***75,248,994*** | **103,770,850** | **5,327,147** | ***109,097,997*** | **184,346,991** |
| Վաճառքի համար մատչելի ներդրումներ | **-** | **16,678** | **-** | ***16,678*** | **1,053,739** | **883,645** | ***1,937,384*** | **1,954,062** |

Հազար ՀՀ դրամ — **2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**

| | **Ցպահանջ և մինչև 1 ամիս** | **1-ից 3 ամիս** | **3-ից 12 ամիս** | ***Մինչև 12 ամիս, ենթա-հանրա-գումար*** | **1-ից 5 տարի** | **5 տարուց ավելի** | ***12 ամսից ավելի, ենթա-հանրա-գումար*** | **Ընդամենը** |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր | **-** | **45,607** | **460,107** | ***505,714*** | **4,644,514** | **2,103,161** | ***6,747,675*** | **7,253,389** |
| Ներդրում ասոցիացված ընկերությունում | **-** | **-** | **-** | ***-*** | **-** | **276,955** | ***276,955*** | **276,955** |
| Այլ ակտիվներ | **525,141** | **135,636** | **97,545** | ***758,322*** | **13,418** | **-** | ***13,418*** | **771,740** |
| | **75,507,744** | **10,301,575** | **67,472,870** | ***153,282,189*** | **109,482,521** | **9,540,848** | ***119,023,369*** | **272,305,558** |
| **ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | | | | | | | |
| Պարտավորություններ ՀՀ ԿԲ-ի նկատմամբ | **284,826** | **300,000** | **3,182,023** | ***3,766,849*** | **6,516,270** | **-** | ***6,516,270*** | **10.283,119** |
| Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ | **6,433,759** | **4,563,660** | **22,775,849** | ***33,773,268*** | **68,622,720** | **126,546** | ***68,749,266*** | **102,522,534** |
| Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ | **36,900,096** | **12,323,781** | **43,526,560** | ***92,750,437*** | **25,299,243** | **3,901,264** | ***29,200,507*** | **121,950,944** |
| Այլ պարտավորություններ | **554,265** | **37,793** | **-** | ***592,058*** | **-** | **-** | ***-*** | **592,058** |
| | **44,172,946** | **17,225,234** | **69,484,432** | ***130,882,612*** | **100,438,233** | **4,027,810** | ***104,466,043*** | **235,348,655** |
| **Զուտ Դիրք** | **31,334,798** | **(6,923,659)** | **(2,011,562)** | ***22,399,577*** | **9,044,288** | **5,513,038** | ***14,557,326*** | **36,956,903** |
| **Կուտակված ճեղքվածք** | **31,334,798** | **24,411,139** | **22,399,577** | | **31,443,865** | **36,956,903** | | |

Հազար ՀՀ դրամ — 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

| | Ցպահանջ և մինչև 1 ամիս | 1-ից 3 ամիս | 3-ից 12 ամիս | *Մինչև 12 ամիս, ենթա-հանրա-գումար* | 1-ից 5 տարի | 5 տարուց ավելի | *12 ամսից ավելի, ենթա-հանրա-գումար* | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| ԱԿՏԻՎՆԵՐ | | | | | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 62,787,882 | - | - | *62,787,882* | - | - | *-* | 62,787,882 |
| Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ | 467,345 | 6,924,534 | 1,419,740 | *8,811,619* | - | 858,812 | *858,812* | 9,670,431 |
| Վարկեր և փոխատվություններ հաճախորդներին | 7,115,423 | 7,137,368 | 57,280,178 | *71,532,969* | 91,170,288 | 6,579,222 | *97,749,510* | 169,282,479 |
| Վաճառքի համար մատչելի ներդրումներ | 926,560 | 3,098 | 1,704,260 | *2,633,918* | 4,605,130 | - | *4,605,130* | 7,239,048 |
| Ներդրում ասոցիացված ընկերությունում | - | - | - | *-* | - | 384,485 | *384,485* | 384,485 |
| Այլ ակտիվներ | 380,081 | 42,795 | 13,418 | *436,294* | 33,546 | - | *33,546* | 469,840 |
| | 71,677,291 | 14,107,795 | 60,417,596 | *146,202,682* | 95,808,964 | 7,822,519 | *103,631,483* | 249,834,165 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | | | | | | | |
| Պարտավորություններ ՀՀ ԿԲ-ի նկատմամբ | 306,759 | 300,000 | 1,205,884 | *1,812,643* | 8,204,653 | - | *8,204,653* | 10,017,296 |
| Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ | 2,349,022 | 9,704,528 | 21,196,811 | *33,250,361* | 59,514,398 | 145,044 | *59,659,442* | 92,909,803 |
| Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ | 29,698,113 | 11,746,855 | 33,577,539 | *75,022,507* | 21,366,372 | 11,491,505 | *32,857,877* | 107,880,384 |
| Ածանցյալ ֆինանսական պարտավորություն | 22,077 | 154 | - | *22,231* | - | - | - | 22,231 |
| Այլ պարտավորություններ | 410,771 | - | - | *410,771* | - | - | - | 410,771 |
| | 32,786,742 | 21,751,537 | 55,980,234 | *110,518,513* | 89,085,423 | 11,636,549 | *100,721,972* | 211,240,485 |
| Զուտ Դիրք | 38,890,549 | (7,643,742) | 4,437,362 | *35,684,169* | 6,723,541 | (3,814,030) | *2,909,511* | 38,593,680 |
| Կուտակված ճեղքվածք | 38,890,549 | 31,246,807 | 35,684,169 | | 42,407,710 | 38,593,680 | | |

## 34 Ռիսկի կառավարում

Բանկային գործունեությանը բնորոշ է ֆինանսական ռիսկերի բազմազանություն և այդ գործունեությունը ենթադրում է ռիսկերի որոշակի աստիճանի և համադրությունների վերլուծություն, գնահատում, ընդունում և կառավարում:

Ռիսկերի կառավարումը Խումբն իրականացնում է բացահայտման, գնահատման և մոնիթորինգի մշտական գործընթացների, ինչպես նաև ռիսկերի սահմանաչափերի հաստատման և ներքին վերահսկողության այլ միջոցառումների միջոցով: Ռիսկերի կառավարման գործընթացը էական նշանակություն ունի Խմբի շահութաբերության կայունության ապահովման գործում, և Խմբի յուրաքանչյուր աշխատակից պատասխանատվություն է կրում իր պարտականությունների հետ կապված ռիսկերի առաջացման համար: Խմբի գործունեությունը ենթարկվում է պարտքային, իրացվելիության, շուկայական և գործառնական ռիսկերի:

*Ռիսկերի կառավարման կառուցվածք*

Ռիսկերի կառավարման իրավասու մարմիններ են հանդիսանում Բանկի խորհուրդը, Բանկի գլխավոր գործադիր տնօրենը, Ռիսկերի կառավարման բաժինը, Ներքին աուդիտի բաժինը և Բանկի այլ տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումները:

*Բանկի խորհուրդը*

Բանկի խորհուրդը ռիսկերի կառավարման գծով իրականացնում է հետևյալ գործառույթները. հեռանկարային զարգացման ծրագրի և ռիսկերի կառավարման մեթոդների հաստատումը, ռիսկերի կառավարման գծով քաղաքականության որոշումը, Բանկի գործունեության հետ կապված ռիսկերի տեսակների հաստատումը, ռիսկերի ընդունելի մակարդակները հստակ սահմանող մեթոդիկաների հաստատումը, Բանկի գործունեության հետ կապված հիմնական ռիսկերի ընդունելի սահմանների հաստատումը, ռիսկերի գծով Խորհրդին ներկայացվող հաշվետվությունների ձևերի և տեղեկատվության բովանդակության և դրանց ներկայացման պարբերականության սահմանումը, Ռիսկերի կառավարման բաժնի կողմից իրականացվող վերահսկողության և Ներքին աուդիտի բաժնի կողմից անցկացվող ստուգումների ապահովումը՝ ռիսկերի կառավարման մեթոդների և արարողակարգերի պահպանման ուղղությամբ:

*Բանկի գլխավոր գործադիր տնօրեն*

Բանկի գլխավոր գործադիր տնօրենը ռիսկերի կառավարման գծով իրականացնում է հետևյալ գործառույթները. հեռանկարային զարգացման ծրագրի և ռիսկերի կառավարման մեթոդների մշակման ապահովումը և դրանց ներկայացումը Բանկի խորհրդի հաստատմանը, Բանկի

խորհրդի կողմից հեռանկարային զարգացման ծրագրի և ռիսկերի կառավարման մեթոդների հաստատումից հետո դրանց իրականացումը, ռիսկերի հաստատված սահմանաչափերը պահպանելու նկատմամբ հսկողության իրականացումը, Ռիսկերի կառավարման բաժնի կողմից իրականացվող վերահսկողության ապահովումը՝ ռիսկերի կառավարման մեթոդների, սահմանաչափերի և արարողակարգերի վերահսկման ուղղությամբ:

*Ռիսկերի կառավարման հետ կապված հարցերի կոմիտե*

Ռիսկերի կառավարման հետ կապված հարցերի կոմիտեն իրականացնում է հետևյալ գործառնությունները. Բանկի ռիսկերի կառավարման ռազմավարության քննարկում, շուկայական, իրացվելիության, պարտքային ռիսկերն արտահայտող ցուցանիշների դինամիկայի, սթրես թեստերի և անհրաժեշտ միջոցառումների, ինչպես նաև մշտական հսկողության արդյունքների քննարկում, առանձին ռիսկի տեսակների գծով ներքին հսկողության նպատակների սահմանում, հանձնարարականների մշակում և դրանց իրականացման նկատմամբ հսկողության իրականացում:

*Ռիսկերի կառավարման բաժին*

Ռիսկերի կառավարման բաժնի գործառույթներն են.

- Բանկի հետ առնչվող բոլոր տեսակի ռիսկերի ճանաչման, չափման, գնահատման, մոնիտորինգի և կառավարման համակարգված աշխատանքների ապահովումն ինչպես առանձին ֆինանսական գործառնությունների, այնպես էլ Բանկի մակարդակով,
- բանկային գործունեության ընթացքում առաջացող ռիսկերի զսպման և կառավարման ուղղությամբ գործընթացների կանոնակարգումը,
- Բանկի հետ առնչվող ռիսկերի հստակ սահմանման և դասակարգման փաստաթղթավորումը, ռիսկերի կառավարման գծով պատասխանատվության բաշխման քարտեզների մշակման համակարգումը,
- ռիսկերի շարունակական և պարբերական վերլուծության ապահովումը՝ VAR մեթոդի, Սթրես թեստավորման և այլ ցուցանիշների միջոցով,
- Բանկի ստորաբաժանումներում ներքին հսկողության հետ կապված աշխատանքների պլանավորումը, ստուգման արդյունքների վերլուծությունը և համապատասխան միջոցառումների մշակումը,
- ռիսկերի մոնիտորինգի նպատակով կազմված հաշվետվությունների ներկայացումը Բանկի ղեկավարությանը,
- Բանկի աշխատակիցների համար ռիսկերի և ներքին հսկողության վերաբերյալ ուսուցման կազմակերպումը,
- նոր ֆինանսական գործիքների մշակման ժամանակ տվյալ պրոդուկտի հետ առնչվող հնարավոր ռիսկերի գնահատումը, և այլն:

*Ներքին աուդիտի բաժին*

Բանկի կողմից իրականացվող ռիսկի կառավարման գործընթացը յուրաքանչյուր տարի աուդիտի է ենթարկվում ներքին աուդիտի բաժնի կողմից, որը ստուգում է ինչպես ընթացակարգերի ամբողջականությունը, այնպես էլ Բանկի գործունեության համապատասխանությունը ընթացակարգերին: Ներքին աուդիտի բաժինը անցկացված ստուգումների արդյունքները քննարկում է ղեկավարության հետ և իր եզրակացություններն ու առաջարկները ներկայացնում է Ներքին աուդիտի հարցերի հանձնաժողովի նիստ:

*Ռիսկի գնահատման և ռիսկերի ներկայացման համակարգեր*

Բանկի ռիսկերը գնահատվում են էկոնոմետրիկական մոդելների, VAR, GAP մեթոդաբանությունների, ինչպես նաև այլ վիճակագրական մեթոդների հիման վրա, որոնք արտացոլում են ինչպես սպասվող կորուստը, որը հնարավոր է սովորական գործունեության ընթացքում, այնպես էլ անկանխատեսելի կորուստները, որոնք իրենցից ներկայացնում են փաստացի ամենաշատ կորուստների արժեքը: Սթրես թեստերն իրականացվում են՝ հիմնվելով ինչպես պատմական վիճակագրական շարքերի վրա՝ հաշվի առնելով տնտեսական

պայմանները, այնպես էլ որոշ հիփոթեզային սցենարների վրա: Սթրես թեստերի արդյունքում Բանկը նաև մոդելավորում է «վատագույն սցենարները», որոնք կարող են տեղի ունենալ քիչ հավանական թվացող դեպքերի առաջացման ժամանակ:

Ռիսկերի մոնիթորինգը և կառավարումը հիմնականում հիմնված է Բանկի կողմից սահմանված ռիսկերի սահմանաչափերի վրա: Այս սահմանաչափերը արտացոլում են Բանկի գործարար ռազմավարությունը և շուկայական պայմանները, որոնցում գործում է Բանկը, ինչպես նաև Բանկի համար ընդունելի ռիսկի մակարդակը, ընդ որում հատուկ ուշադրություն է դարձվում առանձին ոլորտների վրա: Բացի դրանից, Բանկը վերահսկում և գնահատում է իր ընդհանուր կարողությունը կրել ռիսկեր՝ կապված բոլոր տեսակի ռիսկերի և գործառնությունների համապարփակ դիրքերի հետ:

Գործունեության բոլոր տեսակների գծով ստացվող տեղեկատվությունը ուսումնասիրվում և մշակվում է ռիսկերի վերլուծության, վերահսկողության և գնահատման նպատակով: Տվյալ տեղեկատվությունը բացատրություններով յուրաքանչյուր եռամսյակ ներկայացվում է Բանկի գլխավոր գործադիր տնօրենին և Ռիսկերի կառավարման հետ կապված հարցերի կոմիտեին: Հաշվետվությունը պարունակում է տեղեկություններ պարտքային ռիսկի հնարավոր կանխատեսումների, սահմանային կենտրոնացումների, արտարժութային ռիսկի առավելագույն հնարավոր կորուստների (VaR), տոկոսադրույքի ռիսկի, իրացվելիության ցուցանիշների և ռիսկի աստիճանի փոփոխության վերաբերյալ: Նշված հաշվետվությունները հիմք են հանդիսանում ռիսկերի կառավարման վերաբերյալ համապատասխան որոշումների կայացման համար: Ռիսկերի կառավարման և մոնիտորինգի վերաբերյալ տեղեկատվությունն առնվազն տարին մեկ անգամ ներկայացվում է Բանկի խորհրդին:

*Ռիսկի նվազեցում*

Խումբը ռիսկերի կառավարման շրջանակներում կիրառում է ածանցյալ և այլ գործիքներ դիրքերի կառավարման համար, որոնք առաջանում են տոկոսադրույքների, տարադրամների, արժեթղթերի արժեքի փոփոխության հետևանքով:

*Ռիսկի չափազանց կենտրոնացումներ*

Ռիսկի կենտրոնացումները արտացոլում են Խմբի գործունեության արդյունքների հարաբերական զգայունությունը պայմանների փոփոխություններին, որոնք ազդեցություն են ունենում կոնկրետ բնագավառի կամ աշխարհագրական շրջանի վրա:

Ռիսկի կենտրոնացումներից խուսափելու համար, Խմբի քաղաքականությունը և գործընթացները ներառում են հատուկ սկզբունքներ, ուղղված բազմաբնույթ պորտֆելի պահպանմանը: Իրականացվում է կառավարում ռիսկի սահմանված կենտրոնացումներով:

## 34.1 Պարտքային ռիսկ

Խմբի գործունեությունը ենթարկվում է պարտքային ռիսկի՝ կապված վարկառուի կողմից պարտավորության չկատարելու հետ, որը Խմբին կորուստներ կարող է պատճառել: Պարտքային ռիսկը Խմբի կարևորագույն ռիսկն է, այդ պատճառով էլ Բանկն այն առանձնակի ուշադրությամբ է վերահսկում: Պարտքային ռիսկի կառավարումը և վերահսկողությունը իրականացվում է Բանկի Ռիսկերի կառավարման բաժնի և Վարկային տնօրինության կողմից և հաշվետվությունները պարբերաբար ներկայացվում են Բանկի գլխավոր գործադիր տնօրենի և Ռիսկերի կառավարման հետ կապված հարցերի կոմիտեին:

*Պարտքային ռիսկի կառավարման հիմնական ուղղություններն են.*

- վարկային պորտֆելի վերլուծություն ըստ վարկատեսակների, ըստ հաճախորդների խմբերի և ըստ ոլորտների,
- վարկերի՝ պրոբլեմային դառնալու հավանականության գնահատում,
- վարկային պորտֆելի վերլուծություն ըստ գրավադրված միջոցների,

- վարկային պորտֆելի կենտրոնացման մակարդակի գնահատում ըստ 20 խոշորագույն վարկերի և վարկառուների,
- վարկային պորտֆելի սահմանային կենտրոնացումների բացահայտում և կառավարում ըստ մասնաճյուղերի. բարձր կենտրոնացումների պատճառների բացահայտում և համապատասխան միջոցառումների ձեռնարկում,
- վարկային պորտֆելի կենտրոնացումների գնահատում և վերահսկողություն ըստ ոլորտների
- նոր տրամադրված վարկերի որակի վերլուծություն,
- վարկային պորտֆելի վերլուծություն ըստ ժամկետայնության,
- խնդրահարույց վարկերի հետվերադարձի արդյունավետության գնահատում ըստ մասնաճյուղերի, ըստ վարկատեսակների և ըստ ոլորտների,
- ստրես տեստերի իրականացում և Բանկի գործունեության վրա ստրեսային իրավիճակների ազդեցության գնահատում:

Բանկի ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը լավագույնս ներկայացնում է նրանց պարտքային ռիսկի առավելագույն ենթարկվածությունը՝ առանց հաշվի առնելու պահվող գրավը կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցները:

### 34.1.1 Պարտքային ռիսկի առավելագույն չափի կենտրոնացումներ

*Աշխարհագրական սեգմենտներ*

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի՝ պարտքային ռիսկերի կենտրոնացումները հաշվեկշռային արժեքներով՝ դասակարգված ըստ աշխարհագրական սեգմենտների:

Հազար ՀՀ դրամ

| | 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | | | |
|---|---|---|---|---|
| | ՀՀ | ՏՀԶԿ երկրներ | Ոչ ՏՀԶԿ | Ընդամենը |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 52,653,445 | 11,341,499 | 574,108 | 64,569,052 |
| Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ | 12,547,859 | 412,653 | 23,554 | 12,984,066 |
| Ածանցյալ ֆինանսական ակտիվներ | 149,303 | - | - | 149,303 |
| Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ | 184,257,030 | - | 89,961 | 184,346,991 |
| Վաճառքի համար մատչելի ներդրումներ | 1,134,235 | 819,827 | - | 1,954,062 |
| Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր | 7,034,592 | 218,797 | - | 7,253,389 |
| Ներդրում ասոցիացված ընկերությունում | 276,955 | - | - | 276,955 |
| Այլ ակտիվներ | 430,018 | - | 341,722 | 771,740 |
| **2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **258,483,437** | **12,792,776** | **1,029,345** | **272,305,558** |
| 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 226,013,124 | 22,417,974 | 1,403,067 | 249,834,165 |

Ակտիվները դասակարգվում են, հիմք ընդունելով այն երկիրը, որտեղ գործընկեր կողմը գրանցված է:

*Տնտեսության ճյուղեր*

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի` վարկային ռիսկերի կենտրոնացումները հաշվեկշռային արժեքներով` դասակարգված ըստ տնտեսության ճյուղերի.

| Հազար ՀՀ դրամ | Ֆինանսա-կան կազ-մակեր-պություններ | Ար-դյունաբե-րություն | Գյուղա-տնտե-սություն | Շինա-րարություն | Առևտուր | Տրանս-պորտ և կապ | Հիփոթեք | Սպառո-ղական ոլորտ | Այլ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | **64,569,052** | - | - | - | - | - | - | - | - | **64,569,052** |
| Պահանջներ այլ ֆինանսական կազմակեր-պությունների նկատմամբ | **12,984,066** | - | - | - | - | - | - | - | - | **12,984,066** |
| Ածանցյալ ֆինանսական ակտիվներ | **149,303** | - | - | - | - | - | - | - | - | **149,303** |
| Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվու-թյուններ | - | **23,637,048** | **68,767,507** | **4,014,627** | **21,463,163** | **3,702,982** | **5,997,054** | **49,685,142** | **7,079,468** | **184,346,991** |
| Վաճառքի համար մատչելի ներդրումներ | **1,954,062** | - | - | - | - | - | - | - | - | **1,954,062** |
| Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր | **7,253,389** | - | - | - | - | - | - | - | - | **7,253,389** |
| Ներդրում ասոցիացված ընկերությունում | **276,955** | - | - | - | - | - | - | - | - | **276,955** |
| Այլ ակտիվներ | **287,895** | **287,912** | **25,021** | **68,317** | **19,470** | **26,235** | - | - | **56,890** | **771,740** |
| **2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **87,474,722** | **23,924,960** | **68,792,528** | **4,082,944** | **21,482,633** | **3,729,217** | **5,997,054** | **49,685,142** | **7,136,358** | **272,305,558** |
| 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 80,354,757 | 29,932,054 | 51,830,694 | 6,254,309 | 20,395,095 | 4,641,630 | 4,889,983 | 45,827,169 | 5,708,474 | 249,834,165 |

### 34.1.2 Ռիսկի սահմանաչափերի վերահսկողություն և զսպողական քաղաքականություն

Խումբը կարգավորում է վարկային ռիսկի մակարդակները` մեկ փոխառուի կամ փոխառուների խմբի, ինչպես նաև վարկավորման ճյուղային ընդունելի ռիսկի գումարների սահմանաչափեր սահմանելով:

Վարկային ռիսկը նաև կառավարվում է վարկառուների և պոտենցիալ վարկառուների` մայր գումարի և տոկոսների վճարման կարողությունը պարբերաբար վերլուծելով և անհրաժեշտության դեպքում վարկի տրամադրման սահմանաչափերը փոխելով:

Ստորև ներկայացված են հատուկ հսկողության և զսպողական մի քանի այլ միջոցներ:

*Գրավ*

Խումբը կիրառում է բազմաթիվ միջոցներ վարկային ռիսկը զսպելու համար: Համընդհանուր գործելակերպ է հանդիսանում և հիմնական միջոցներից մեկն է համարվում տրամադրված դրամական միջոցների դիմաց գրավ վերցնելը: Խումբը կանոններ է սահմանում գրավի հատուկ տեսակների ընդունելի լինելու կամ ռիսկերի զսպման վերաբերյալ: Վարկերի և փոխատվությունների համար գրավի հիմնական տեսակներն են.

- Հիպոթեքային պայմանագրերով գրավադրվող անշարժ գույքը,
- Կազմակերպությունների գործառնական ակտիվները` շենքերը, այլ հիմնական միջոցներ, պաշարները,
- Ֆինանսական գործիքները` պարտքային և բաժնային արժեղթղթերը,

- Ռսկյա իրեր:

Կորպորատիվ կազմակերպությունների երկարաժամկետ ֆինանսավորումը, ինչպես նաև ֆիզիկական անձանց տրամադրվող վարկային գծերը ապահովված են գրավներով: Ի լրումն, վարկային կորուստը նվազագույնի հասցնելու համար Խումբը վարկառուից լրացուցիչ երաշխիքներ է պահանջում, հենց որ համապատասխան անհատական վարկերի և փոխատվությունների արժեզրկման հատկանիշներ են նկատվում:
Վարկեր և փոխատվություններից տարբեր ֆինանսական ակտիվներ ապահովող գրավները որոշվում են ֆինանսական գործիքի բնույթով: Պարտատոմսերը և այլ պարտքային արժեթղթերը հիմնականում չեն ապահովվում:

Վարկային պորտֆելի վերլուծությունն ըստ ապահովվածության.

| Հազար ՀՀ դրամ | 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| Անշարժ գույք | **81,752,935** | 80,741,028 |
| Շարժական գույք | **4,761,995** | 5,245,382 |
| Կազմակերպությունների և ֆիզիկական անձանց երաշխիքներ | **80,121,519** | 63,350,902 |
| Շրջանառության մեջ գտնվող ապրանքներ | **7,617,419** | 4,899,305 |
| Դրամական միջոցներ | **569,100** | 650,548 |
| Թանկարժեք զարդեր, ոսկու ջարդոն | **6,647,153** | 9,684,116 |
| Այլ | **13,129,588** | 8,005,412 |
| **Ընդամենը վարկեր և փոխատվություններ (համախառն)** | **194,599,709** | 172,576,693 |

Ֆինանսական վարձակալության գծով կանխավճարները ապահոված են կազմակերպությունների և ֆիզիկական անձանց երաշխիքներով:

*Պարտքային ռիսկ պարունակող պայմանական պարտավորություններ*
Այս գործիքների հիմնական նպատակը անհրաժեշտության դեպքում հաճախորդներին միջոցներ տրամադրելն է: Երաշխիքները և ակրեդիտիվները ենթակա են նույն վարկային ռիսկին, ինչ վարկերը: Ապրանքային և թղթային ակրեդիտիվները` Խմբի գրավոր հավաստումներն են հաճախորդների անունից, որոնք թույլ են տալիս երրորդ անձանց գումարներ ստանալ Խմբից հատուկ պայմանների կատարման դեպքում, ապահովված են դրանց հետ կապված ապրանքների առաքմամբ և հետևաբար դրանք ավելի ապահով են, քան ուղղակի տրամադրվող վարկերը:

Վարկի տրամադրման պայմանական պարտավորություններն իրենցից ներկայացնում են վարկային գծերի չօգտագործած մասերը:

Այս դեպքում, հնարավոր կորուստների գումարը, որ Խումբը կարող է կրել, հավասար է չօգտագործված վարկային գծերի գումարին:

Սակայն հնարավոր վնասի իրական գումարն ավելի փոքր է, քան չօգտագործված վարկային գծերի ընդհանուր գումարը, քանի որ վարկային պարտավորությունները տրամադրվում են վարկառուների կողմից վարկերի տրամադրման որոշակի ստանդարտների պահպանման դեպքում: Խումբը հետևում է պարտավորությունների մարման ժամկետներին, քանի որ երկարաժամկետ պարտավորությունները պարունակում են ավելի բարձր վարկային ռիսկ, քան կարճաժամկետ պարտավորությունները:

### 34.1.3 Արժեզրկում և պահուստավորման քաղաքականություն

Վարկերի արժեզրկման գնահատման հիմնական հատկանիշները են մայր գումարի կամ տոկոսների վճարումների, վարկառուների դրամական հոսքերի հետ կապված դժվարությունները, վարկային ռեյտինգների նվազումները, պայմանագրերի նախնական պայմանների խախտումները: Խումբը արժեզրկման գնահատումը կատարում է անհատապես և խմբային եղանակով:

*Արժեզրկման անհատական գնահատում*

Խումբը որոշում է յուրաքանչյուր անհատապես նշանակալի վարկի կամ փոխատվության համապատասխան պահուստի չափը անհատական հիմքով: Պահուստի գումարի որոշման ժամանակ հաշվի առնվող գործոններից են վարկառուի բիզնես ծրագրի վստահելիությունը, ֆինանսական դժվարությունները հաղթահարելու կարողությունը, ծրագրված հասույթները և սպասվող շահաբաժինների վճարումները անվճարունակության դեպքում, այլ ֆինանսական օգնության հնարավորությունը, գրավի իրացվելի արժեքը, սպասվող դրամական հոսքերի ժամկետները: Արժեզրկումից կորուստները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ, եթե չկանխատեսված հանգամանքները չեն պահանջում հատուկ ուշադրություն:

*Արժեզրկման խմբային գնահատում*

Խմբային գնահատումը կատարվում է ոչ նշանակալի վարկերի գծով (ներառյալ կրեդիտ քարտերը, հիպոթեքները և սպառողական վարկերը), ինչպես նաև անհատապես նշանակալի վարկերի և փոխատվությունների գծով, որոնց համար դեռ չկան արժեզրկման ակնհայտ հատկանիշներ: Արժեզրկումից կորուստները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսվա դրությամբ` դասակարգված յուրաքանչյուր խմբի համար առանձին:

Խմբային գնահատումը հաշվի է առնում այն արժեզրկման գումարը, որը հնարավոր է առաջանա պորտֆելում, նույնիսկ եթե անհատական գնահատման մեջ արժեզրկման օբյեկտիվ վկայություն չկա: Արժեզրկման կորուստները գնահատվում են հաշվի առնելով հետևյալ տեղեկատվությունը` պորտֆելում կորուստների պատմությունը, ընթացիկ տնտեսական իրավիճակը, կորուստ առաջանալու և անհատապես բացահայտվելու մոտավոր ժամկետը, արժեզրկման դեպքում սպասվող վճարումները:

Ֆինանսական երաշխիքների և ակրեդիտիվների արժեզրկման գնահատումը և պահուստավորումն իրականացվում է նույն կերպ` ինչ վարկերինը:

*Չարժեզրկված վարկեր և փոխատվություններ*

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է չարժեզրկված վարկերի որակը` հիմնված կորուստների պատմության վրա:

Հազար ՀՀ դրամ

| | **2014** | 2013 |
|---|---|---|
| Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ | | |
| Արդյունաբերություն | **1.1%** | 0.8% |
| Գյուղատնտեսություն | **0.8%** | 0.2% |
| Շինարարություն | **0.1%** | 0.5% |
| Առևտուր | **0.7%** | 0.3% |
| Տրանսպորտ | **3.4%** | - |
| Ծառայություններ | **1.2%** | 1.1% |
| Հիփոթեքային | **1.5%** | 0.8% |
| Սպառողական | **1.6%** | 0.4% |
| Այլ | **1.0%** | - |

*Ժամկետանց, բայց չարժեզրկված վարկեր*

Ժամկետանց են համարվում այն վարկերը և փոխատվությունները, որոնց գծով առկա են մի քանի օրյա չվճարումներ: Ժամկետանց վարկերի հիմնական մասն արժեզրկված չեն:

Ժամկետանց, բայց չարժեզրկված վարկերի ժամկետանց օրերի վերլուծությունն ըստ դասերի ներկայացվում է հետևյալ աղյուսակում.

| Հազար ՀՀ դրամ | | | | 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | |
|---|---|---|---|---|---|
| | **Մինչև 30 օր** | **31 –ից 60 օր** | **61 –ից 90 օր** | **91 օրից ավել** | **Ընդամենը** |
| Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ | | | | | |
| Մասնավոր ձեռնարկություններ | **77,259** | **247,320** | **5,040** | **252,279** | **581,898** |
| Ֆիզիկական անձիք | **366,772** | **903,623** | **326,027** | **813,651** | **2,410,073** |
| Անհատ ձեռնարկատերեր | **290,712** | **180,027** | **18,602** | **84,351** | **573,692** |
| **Ընդամենը** | **734,743** | **1,330,970** | **349,669** | **1,150,281** | **3,565,663** |

| Հազար ՀՀ դրամ | | | | 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | |
|---|---|---|---|---|---|
| | Մինչև 30 օր | 31 –ից 60 օր | 61 –ից 90 օր | 91 օրից ավել | Ընդամենը |
| Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ | | | | | |
| Մասնավոր ձեռնարկություններ | 11,391 | 6,721 | 348 | 115,794 | 134,254 |
| Ֆիզիկական անձիք | 187,649 | 226,139 | 93,833 | 248,391 | 756,012 |
| Անհատ ձեռնարկատերեր | 5,018 | 490 | 17,467 | 18,088 | 41,063 |
| Ընդամենը | 204,058 | 233,350 | 111,648 | 382,273 | 931,329 |

## 34.2 Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերը կամ իրական արժեքը կտատանվի այնպիսի շուկայական փոփոխականների պատճառով, ինչպիսիք են տոկոսադրույքները և արտարժույթի փոխարժեքները: Խումբը տարանջատում է շուկայական ռիսկերը առևտրային և ոչ առևտրային պորտֆելների: Ոչ առևտրային պորտֆելը կառավարվում և վերահսկվում է զգայունության վերլուծությունների օգնությամբ: Խումբը չունի շուկայական ռիսկի զգալի կենտրոնացումներ:

### 34.2.1 Շուկայական ռիսկ – Ոչ առևտրային

*Տոկոսադրույքի ռիսկ*

Տոկոսադրույքի ռիսկը ծագում է այն հավանականությունից, որ տոկոսադրույքների փոփոխությունները ուղղակիորեն կազդեն Խմբի ֆինանսական գործիքների հետ կապված դրամական միջոցների հոսքի և նրանց իրական արժեքի վրա:

Բանկում տոկոսադրույքի ռիսկի կառավարումը իրականացվում է Ռիսկերի կառավարման բաժնի և Ակտիվների ու պասիվների կառավարման և դիլինգի վարչության կողմից:

*Տոկոսադրույքի ռիսկի կառավարման հիմնական ուղղություններն են.*

- տոկոսադրույքի ճեղքվածք / ընդամենը ակտիվներ գործակցի վերլուծություն,
- դյուրացիայի մեթոդով տոկոսադրույքի GAP-ի գնահատում,

- զուտ տոկոսային եկամտի վրա տոկոսադրույքների տատանման ազդեցության գնահատում,
- ստրես տեստերի իրականացում և զուտ տոկոսային եկամտի վրա ստրեսային իրավիճակների ազդեցության գնահատում:

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս Խմբի ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության զգայունությունը տոկոսադրույքների հնարավոր փոփոխությունների նկատմամբ՝ այլ փոփոխականները հաստատուն մնալու պայմանով:

Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության զգայունությունը տոկոսադրույքներում ենթադրվող փոփոխությունների ազդեցությունն է մեկ տարվա զուտ տոկոսային եկամուտի վրա՝ 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվեկշռում հաշվառվող տատանվող տոկոսադրույքով ոչ առևտրային ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով: Կապիտալի զգայունությունը հաշվարկվում է վերագնահատելով վաճառքի համար մատչելի հաստատուն տոկոսադրյուքով ակտիվները 2014 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ հիմք ընդունելով տոկոսադրույքների ենթադրվող փոփոխությունները:

Կապիտալի զգայունությունը վերլուծվում է ըստ ակտիվի կամ սվոփի իրացման ժամկետների: Կապտիալ ընդհանուր զգայունությունը հիմնված է այն ենթադրության վրա, որ եկամտաբերության կորում կան զուգահեռ փոփոխություններ, մինչդեռ ըստ ժամկետների վերլուծությունը ցույց է տալիս զգայունությունը ոչ զուգահեռ փոփոխությունների նկատմամբ:

Հազար ՀՀ դրամ

**2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**

| Արժույթ | Փոփո-խություններ հիմնական տոկոսա-դրույքներում | Զուտ տոկոսա-յին եկամտի զգայու-նություն | Կապիտալի զգայունություն: Մինչև 6 ամիս | 6 ամսից 1 տարի | 1-ից 5 տարի | 5 տարուց ավելի | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|
| ՀՀ դրամ | 1 | **(178,151)** | **(1,093)** | **-** | **(98,892)** | **(2,766)** | **(280,902)** |
| ԱՄՆ դոլար | 1 | **(213,737)** | **-** | **-** | **-** | **(327)** | **(214,064)** |
| ՀՀ դրամ | (1) | **178,151** | **1,269** | **-** | **104,747** | **3,020** | **287,187** |
| ԱՄՆ դոլար | (0.5) | **106,868** | **-** | **-** | **-** | **171** | **107,039** |

Հազար ՀՀ դրամ

2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

| Արժույթ | Փոփո-խություններ հիմնական տոկոսա-դրույքներում | Զուտ տոկոսա-յին եկամտի զգայու-նություն | Կապիտալի զգայունություն: Մինչև 6 ամիս | 6 ամսից 1 տարի | 1-ից 5 տարի | 5 տարուց ավելի | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|
| ՀՀ դրամ | 1 | (137,865) | (2,267) | (5,818) | (94,985) | - | (240,935) |
| ԱՄՆ դոլար | 1 | (141,974) | - | - | - | - | (141,974) |
| ՀՀ դրամ | (1) | 137,865 | 2,282 | 5,886 | 98,197 | - | 240,935 |
| ԱՄՆ դոլար | (0.5) | 70,987 | - | - | - | - | 70,987 |

*Արտարժույթի ռիսկ*

Արտարժույթի ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների արժեքը կտատանվի արտարժույթի փոխարժեքներում փոփոխությունների հետևանքով:

Բանկում արտարժութային ռիսկի կառավարումը իրականացվում է Ռիսկերի կառավարման բաժնի և Ակտիվների ու պասիվների կառավարման և դիլինգի վարչության կողմից:

Արտարժութային ռիսկի կառավարման հիմնական ուղղություններն են.

- հնարավոր կորուստների գնահատում VAR մեթոդի կիրառմամբ
- վերագնահատումից կորուստների գծով ներքին նպատակային մակարդակների հսկողություն,
- արտարժութային ռիսկի գծով նորմատիվների վերլուծություն,
- ստրես տեստերի կառուցում և Բանկի վրա ազդեցության գնահատում:

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս այն արտարժույթները, որոնք կարող են ազդել 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի ոչ առևտրային դրամային ակտիվների և պարտավորությունների և դրանց կանխատեսված դրամական հոսքերի վրա: Վերլուծությունը հաշվարկում է արտարժույթի ՀՀ դրամի նկատմամբ հնարավոր տատանումների ազդեցությունը, այլ փոփոխականները հաստատուն մնալու պայմանով, ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության վրա (կապված արտարժույթի նկատմամբ զգայուն ոչ առևտրային դրամային ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի փոփոխմամբ): Աղյուսակում հանդիպող բացասական արժեքը արտացոլում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում կամ կապիտալում պոտենցիալ զուտ նվազում, մինչդեռ դրական արժեքը ցույց է տալիս պոտենցիալ զուտ աճ:

| Հազար ՀՀ դրամ | **2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | | 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | |
|---|---|---|---|---|
| Արժույթ | Փոփոխություն արտարժույթի փոխարժեքում, տոկոս | Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը | Փոփոխություն արտարժույթի փոխարժեքում, տոկոս | Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը |
| ԱՄՆ դոլար | 5 | **(398,206)** | 5 | (129,876) |
| Եվրո | 5 | **(13,294)** | 5 | (20,660) |
| Ռուբլի | 5 | **(29,771)** | 5 | 30,869 |
| ԱՄՆ դոլար | (5) | **398,206** | (5) | 129,876 |
| Եվրո | (5) | **13,294** | (5) | 20,660 |
| Ռուբլի | (5) | **29,771** | (5) | (30,869) |

Խմբի արտարժույթի ռիսկի վերլուծությունն ըստ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ունի հետևյալ տեսքը.

| Հազար ՀՀ դրամ | 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | | | |
|---|---|---|---|---|
| | ՀՀ դրամ | Ազատ փոխարկելի արժույթ | Ոչ փոխարկելի արժույթ | Ընդամենը |
| **ԱԿՏԻՎՆԵՐ** | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | **33,472,762** | **30,636,029** | **460,261** | **64,569,052** |
| Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ | **512,702** | **12,391,920** | **79,444** | **12,984,066** |
| Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ | **100,449,138** | **83,897,853** | **-** | **184,346,991** |
| Վաճառքի համար մատչելի ներդրումներ | **883,646** | **1,070,416** | **-** | **1,954,062** |
| Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր | **5,171,896** | **2,081,493** | **-** | **7,253,389** |
| Ներդրում ասոցիացված ընկերությունում | **276,955** | **-** | **-** | **276,955** |
| Այլ ակտիվներ | **393,268** | **378,472** | **-** | **771,740** |
| | **141,160,367** | **130,456,183** | **539,705** | **272,156,255** |
| **ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | | | |
| Պարտավորություններ ՀՀ ԿԲ-ի նկատմամբ | **10,283,119** | **-** | **-** | **10,283,119** |
| Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ | **35,365,327** | **67,144,808** | **12,399** | **102,522,534** |
| Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ | **48,320,631** | **72,514,260** | **1,116,053** | **121,950,944** |
| Այլ պարտավորություններ | **373,175** | **218,883** | **-** | **592,058** |
| | **94,342,252** | **139,877,951** | **1,128,452** | **235,348,655** |
| Ընդամենը ածանցյալ ֆինանսական գործիքների ազդեցությունը | **(1,038,122)** | **1,187,425** | **-** | **149,303** |
| **Զուտ դիրք 2014 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **45,779,993** | **(8,234,343)** | **(588,747)** | **36,956,903** |
| **Վարկային ռիսկ պարունակող պարտավորություններ 2014թ. դեկտեմբերի 31-ին** | **6,029,789** | **9,154,166** | **-** | **15,183,955** |
| Ընդամենը ֆինանսական ակտիվներ | 123,271,937 | 124,735,455 | 1,826,773 | 249,834,165 |
| Ընդամենը ֆինանսական պարտավորություններ | 82,993,004 | 127,016,395 | 1,208,855 | 211,218,254 |
| Ընդամենը ածանցյալ ֆինանսական գործիքների ընդհանուր ազդեցություն | - | (22,231) | - | (22,231) |
| Զուտ դիրք 2013 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 40,278,933 | (2,303,171) | 617,918 | 38,593,680 |
| Վարկային ռիսկ պարունակող պարտավորություններ 2013 թ. դեկտեմբերի 31-ին | 6,628,599 | 7,679,199 | - | 14,307,798 |

Ազատ փոխարկելի արտարժույթը հիմնականում ներկայացնում է ԱՄՆ դոլարը, բայց ներառում է նաև ՏՀԶԿ-ի երկրների արժույթները: Ոչ փոխարկելի գումարները վերաբերվում են ԱՊՀ երկրների արժույթներին, բացառությամբ Հայաստանի Հանրապետությանը:

## 34.3 Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը կապված է Խմբի ֆինանսական պարտավորությունները ժամանակին մարելու կարողությամբ` նորմալ և սթրեսային իրավիճակներում:

Բանկում իրացվելիության ռիսկի կառավարումը իրականացվում է Ռիսկերի կառավարման բաժնի և Ակտիվների ու պասիվների կառավարման և դիլինգի վարչության կողմից:

Իրացվելիության ռիսկի կառավարման հիմնական ուղղություններն են.

- Ավանդների և պարտավորությունների նպատակային կառուցվածքի պահպանման վերահսկողություն:
- Թղթակցային հաշիվների մոնիտորինգ, սահմանված սահմանաչափերի խախտման դեպքերում խախտման պատճառների ուսումնասիրություն և համապատասխան միջոցառումների ձեռնարկում:
- Իրացվելիության ճեղքվածքի վերլուծություն:

- Իրացվելիության ռիսկի ստրես տեստերի իրականացում և Բանկի գործունեության վրա ստրեսային իրավիճակների ազդեցության գնահատում:

Խումբը պահում է բարձր իրացվելի և ապակենտրոնացված ակտիվների պորտֆել, որը կարող է հեշտությամբ կանխիկացվել դրամական հոսքերի չկանխատեսված ընդհատման դեպքում: Բացի այդ Խումբը ՀՀ կենտրոնական բանկում պահում է իր որոշ դրամով պարտավորությունների 2%-ի և որոշ արտարժույթով պարտավորությունների 20%-ի չափով պահուստավորման գումար (տես ծանոթագրություն 14-ը):

Խումբը հաշվարկում է իրացվելիության ցուցանիշները ՀՀ կենտրոնական բանկի պահանջներին համապատասխան:

| | Աուդիտ չարված | |
|---|---|---|
| Դեկտեմբերի 31-ի դրությամբ ցուցանիշները հետևյալն են. | **2014, %** | 2013, % |
| Ն21- Ընդհանուր իրացվելիություն<br>(Բարձր իրացվելի ակտիվներ/ Ընդհանուր ակտիվներ) | **24.63** | 26.60 |
| Ն22- Ընթացիկ իրացվելիություն<br>(Բարձր իրացվելի ակտիվներ/ցպահանջ պարտավորություններ) | **241.49** | 310.57 |

*Ֆինանսական պարտավորությունների վերլուծությունը՝ ըստ մինչև մարումը մնացած ժամկետների*

Ստորև ներկայացվում է 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի ֆինանսական պարտավորությունների բաշխումը՝ հաշվեկշռի ամսաթվից մինչև պայմանագրերում նշված մարմանը մնացած ժամկետների համաձայն: Տես ծանոթագրություն 33-ը այս պարտավորությունների մարման սպասվելիք ժամկետների համար: Ցպահանջ վճարումները դասակարգված են այն ենթադրությամբ, որ վճարումը կպահանջվի անմիջապես: Խումբի կողմից հաշվարկվում է հաճախորդներից ներգրավված ցպահանջ միջոցների զգալի մասի հետ պահանջելու հավանականությունը և այդ դեպքերի համար մշակվում են համապատասխան միջոցառումների ծրագրեր:

Հազար ՀՀ դրամ — **2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**

| | **Ցպահանջ կամ մեկ ամսից քիչ** | **1 - 3 ամիս** | **3 - 12 ամիս** | **1-5 տարի** | **5 տարուց ավելի** | **Ընդամենը** |
|---|---|---|---|---|---|---|
| **Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ** | | | | | | |
| Պարտավորություններ ՀՀ ԿԲ-ի նկատմամբ | **540,457** | **302,930** | **3,731,633** | **7,283,264** | **-** | **11,858,284** |
| Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ | **7,066,891** | **5,391,241** | **28,560,954** | **75,808,255** | **126,546** | **116,953,887** |
| Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ | **37,060,501** | **12,960,664** | **46,213,730** | **26,446,479** | **4,911,658** | **127,593,032** |
| Այլ պարտավորություններ | **584,766** | **7,292** | **-** | **-** | **-** | **592,058** |
| **Ընդամենը չզեղչված ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ** | **45,252,615** | **18,662,127** | **78,506,317** | **109,537,998** | **5,038,204** | **256,997,261** |
| **Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ** | | | | | | |
| Ներհոսք | **-** | **1,050,238** | **-** | **-** | **-** | **1,050,238** |
| Արտահոսք | **-** | **1,233,394** | **-** | **-** | **-** | **1,233,394** |
| **Վարկային ռիսկ պարունակող պարտավորություններ** | **597,914** | **1,193,583** | **5,851,053** | **7,541,405** | **-** | **15,183,955** |

| Հազար ՀՀ դրամ | 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Ցպահանջ կամ մեկ ամսից քիչ | 1 - 3 ամիս | 3 - 12 ամիս | 1-5 տարի | 5 տարուց ավելի | Ընդամենը |
| Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ | | | | | | |
| Պարտավորություններ ՀՀ ԿԲ-ի նկատմամբ | 306,759 | 466,475 | 1,622,884 | 9,380,513 | - | 11,776,631 |
| Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ | 2,349,022 | 9,730,315 | 23,539,490 | 66,218,794 | 145,044 | 101,982,665 |
| Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ | 31,360,081 | 11,967,411 | 35,137,050 | 23,955,966 | 13,065,298 | 115,485,806 |
| Այլ պարտավորություններ | 410,771 | - | - | - | - | 410,771 |
| Ընդամենը չզեղչված ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ | 34,426,633 | 22,164,201 | 60,299,424 | 99,555,273 | 13,210,342 | 229,655,873 |
| Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ | | | | | | |
| Ներհոսք | 12 | 2,507 | 2,137 | 19,302 | - | 23,958 |
| Արտահոսք | 36 | 9,627 | 6,634 | 59,926 | - | 76,223 |
| Վարկային ռիսկ պարունակող պարտավորություններ | 115,766 | 351,921 | 2,865,924 | 10,974,187 | - | 14,307,798 |

## 34.4 Գործառնական ռիսկ

Գործառնական ռիսկը ուղղակի կամ անուղղակի կորստի ռիսկն է, որն առաջանում է պատճառների լայն բազմազանությունից՝ կապված Բանկի ֆինանսական գործիքների մեջ ներգրավվածության, գործընթացների, անձնակազմի, տեխնոլոգիաների և ենթակառուցվածքների հետ, և արտաքին գործոններից՝ բացառությամբ վարկային, շուկայական և իրացվելիության ռիսկերի, ինչպիսիք են իրավական և կարգավորիչ պահանջները և կորպորատիվ վարքագծի ընդհանուր ընդունված չափանիշները:

Բանկի նպատակն է կառավարել գործառնական ռիսկը՝ ֆինանսական վնասներից և հեղինակության կորստից խուսափումը հավասարակշռելով ռիսկի կառավարման ծախսային արդյունավետության հետ:

Գործառնական ռիսկը զսպելու նպատակով Բանկում իրականացվում են այնպիսի միջոցառումներ, ինչպիսիքն են կարևորագույն գործընթացներում «երկրորդ աչքի» սկզբունքի կիրառումը, Բանկում շրջանառվող տեղեկատվության դասակարգումը և կառավարումը, ծրագրային հասանելիությունների սահմանափակումը, վարկերի տրամադրման որոշման կայացման սահմանաչափերի բազմաստիճանանց համակարգը, հաճախորդների դրամարկղային սպասարկման բնագավառում գումարային սահմանաչափերը, կիրառվող փաստաթղթերի տիպային տարբերակները, գործարար գործընթացների անընդհատությունը, նոր պրոդուկտների ներդրման ժամանակ հնարավոր ռիսկերի գնահատումը, Բանկի աշխատակիցների վերապատրաստումն ու ուսուցումը և այլն:

Բանկի հետ առնչվող ռիսկերի նկատմամբ արդյունավետ հսկողության իրականացման, ինչպես նաև օրենսդրական պահանջների և ներքին իրավական ակտերի հետ Բանկի գործունեության համապատասխանության ապահովման նպատակով Բանկում ներդրվել և գործում է Ներքին հսկողության եռաստիճան համակարգ, որի շրջանակներում Բանկի ստորաբաժանումներում իրականացվում են մշտական հսկողության ստուգումներ, և արդյունքները պարբերաբար ներկայացվում են Ռիսկերի կառավարման բաժին: Ստուգումների արդյունքների հիման վրա Ռիսկերի կառավարման բաժնի կողմից կազմակերպվում են բազմաթիվ քննարկումներ և ուսուցում համապատասխան ստորաբաժանումների հետ, իրականացվում պարզաբանումներ և ձեռնարկվում ուղղիչ միջոցառումներ:

## 35 Կապիտալի համարժեքություն

Խումբը պահպանում է ակտիվ կառավարվող կապիտալի կառուցվածք բանկային գործունեությանը բնորոշ ռիսկերը ծածկելու համար: Խմբի կապիտալի համարժեքությունն այլ միջոցների հետ մեկտեղ վերահսկվում է նաև օգտագործելով Բանկային Վերահսկողություն Բազելյան Հանձնաժողովի, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատված կանոնները և նորմատիվները:

Խմբի կապիտալի կառավարման առաջնային նպատակներն են համոզվել, որ Խմբի կապիտալը համապատասխանում է հաստատված պահանջներին, և որ Խումբը պահպանում է ամուր վարկային վարկանիշ և առողջ կապիտալի ցուցանիշներ՝ իր գործունեությունը ամրապնդելու և բաժնետերերի շահույթը առավելագույնի հասցնելու համար:

Խումբը կառավարում է իր կապիտալի կառուցվածքը և իրականացնում համապատասխան ճշգրտումները տնտեսական պայմանների և իր գործունեության ռիսկերի փոփոխությանը համապատասխան: Կապիտալի կառուցվածքը պահպանելու կամ փոփոխելու համար Խումբը կարող է փոփոխել բաժնետերերին վճարվող շահաբաժինների գումարը, կապիտալը վերադարձնել բաժնետերերին կամ բաժնետոմսեր թողարկել: Նախորդ տարիների համեմատ նպատակներում, քաղաքականությունում և գործընթացներում փոփոխություններ չեն եղել:

ՀՀ կենտրոնական բանկի կողմից ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների միջև նվազագույն հարաբերակցությունը սահմանվում է 12%:

Ընդհանուր կապիտալը կազմված է հիմնական կապիտալից, որը ներառում է բաժնետիրական կապիտալը, չբաշխված շահույթը, այդ թվում ընթացիկ տարվա շահույթը, գլխավոր պահուստը: Կապիտալի մեկ այլ բաղադրիչ է լրացուցիչ կապիտալը, որը ընդգրկում է վերագնահատման պահուստները:

Ռիսկով կշռված ակտիվները չափվում են ըստ ռիսկերի կշիռների՝ դասակարգված համաձայն վարկային, շուկայական և գործառնական ռիսկերի գնահատման:

2014թ. և 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ընդհանուր կապիտալի, ռիսկով կշռված ակտիվների և կապիտալի համարժեքության նորմատիվի չափերը՝ հաշվարկված համաձայն ՀՀ կենտրոնական բանկի պահանջների, ներկայացված է ստորև.

| | Աուդիտ չարված | |
|---|---|---|
| Հազար ՀՀ դրամ | **2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
| Հիմնական կապիտալ | **41,694,765** | 46,276,817 |
| Լրացուցիչ կապիտալ | **3,615,019** | 4,402,625 |
| **Ընդամենը՝ ընդհանուր կապիտալ** | **45,309,784** | 50,679,442 |
| Ռիսկով կշռված ակտիվներ | **291,259,618** | 252,639,292 |
| **Կապիտալի համարժեքության նորմատիվ** | **15.56%** | 20.06% |

Ժամանակաշրջանի ընթացքում Խումբը պահպանել է կապիտալի համարժեքության նկատմամբ պահանջները:

Նպատակ ունենալով խթանել բանկային համակարգի գործունեության արդյունավետության բարձրացմանը, բանկային համակարգի կայունության ու տնտեսական տարբեր իրավիճակներում շոկերին դիմակայելու ունակության ամրապնդմանը, ինչպես նաև նպաստել բանկային համակարգի կողմից առավել արդյունավետ և մատչելի բանկային ծառայությունների մատուցմանը, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի

խորհուրդը 2014թ. որոշում է կայացրել Բանկի ընդհանուր կապիտալի նվազագույն չափը սահմանել՝

1) մինչև 2017 թվականի հունվարի 1-ը՝ 5,000,000 հազար Հայաստանի Հանրապետության դրամ,
2) նոր ստեղծվող բանկերի համար՝ մինչև 2017 թվականի հունվարի 1-ը 30,000,000 հազար Հայաստանի Հանրապետության դրամ,
3) 2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ և դրանից հետո՝ բանկի և նոր ստեղծվող բանկերի համար՝ 30,000,000 հազար Հայաստանի Հանրապետության դրամ:

Grant Thornton

www.grantthornton.am